



Յ. Գ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

- 1.- Ս. ՓԱՆՈՍԵԱՆ Պաղտոյենց հարսը
- 15.- Պ. ՀԵՐԵԱՆ Նման թիթեռիմ...
- 15.- » Ք Նղի՛ր
- 16.- » » Գիշտոիչ թռչուն
- 16.- » » Եթէ պիտի գաս
- 17.- Ս. ԱՍՆԻՆԵԱՆ Հաղորդութիւն
- 23.- * * * «Բագին» անձկութեամբ կը սպասէ...
- 24.- Հ. ԶԷՅԹԼԵԱՆ Վեց քաղաք
- 23.- ԱԼԷՆ ՏԸԳՕ Վիճար Հիւկոյի վերջին սէրը
(հայացուց Փ. Ճ.)
- 31.- Մ. ՄԻՆԱՍԵԱՆ Երկու խօսք
- 33.- ՏԻԿ. Ն. ԷԼԻՋՊԱՐԵԱՆ Յառաջարկ
- 34.- Ն. ԲԻԻՋԱՆԳԱՅԻ Առաջին ժամանակ
- 41.- Ա. ԱՅՎԱԶԵԱՆ Նեգրոնք
- 51.- Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ Աղասի Այվազեան
և յաւերժական թիֆլիսը
- 61.- Լ. ՄԿՏՁՁԵԱՆ Գրաբնութեան խորհրդային համակարգը
- 70.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Օշական երեսոյթը
— 100ամեակի հրատարակութեանց
առիթով —
- 71.- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ «Ես սու եմ... բայց գեղեցիկ»
(Եղիմակ՝ Ա. Անփեքճեան)
- 77.- * * * Մշակութային լուրեր

Բազմը

ԱՂՏԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՍ. ԵԱՐԻ, ԻՐԻՑ, ՓԵՏՐՈՒԱՐ 1986 ՊԵՏՐՈՒՐ

Ս. Փ Ա Ն Ո Ս Ե Ա Ն

Պ Ա Ղ Տ Ո Յ Ե Ն Ց Հ Ա Ր Ս Ը

Ա.

Ջրամբարին ջուր աննելու կ'երթար Սանամ. կը քայլեր վրանամէջ անցքերէն, զժկամ, դառնացած իր շար քախտին զէմ: Կը խժուար բարակ աւազը նոր սոլերուն տակ: Ինք շճագած արեւին եւ գիշերին մնացած պղտոր լոյսին մէջ աննուած Սանամին այտերը պալուկ էին, հոգիին խռովքէն, կը կարծուէր, որ իր դեղեցիկ աշքերը նայուածքին շող թագած էին անցեալի մը խորը...

Ամէն առաւօտ, դեռ լոյսը շճագած, կետուր մայրը կը ժշտէր կողը, քնահարամ քնկլով հարսին նոր ծիւ արձակած անուշ քունը.

— Աղջի՛, ելի՛ր դնա ջուրի. հերիք կատողիս... Ելի՛ր կ'ըսեմ: Կետուր հայրը, կնոջ ծայնէն արթննալով՝ կը սաստէր.

— Ինչո՞ւ կը խանդարես աղջկան քունը. արթնցար, դնա՛ ջուրը դու բեր. սափորը քեզի համար բերել տուի, որ թե՛նեւ դար ուսից, հասկցա՞ր:

Կը կատողէր կինը. օճի յեզու կլլածի պէս՝ թոն կը թափէր, որ էրիկը կը պաշտպանէր հարսը եւ իրեն դեմին կու տար վրանցիներուն առջեւ խայտառակելով: Կետուր հայրը կը սաստէր.

— Ձէ՛նդ, ցաւազար կնիկ...

Էրիկ-կնիկ մէծին մէջ, կետուր մայրը դիտումնասօ՞ր, թէ բընազգական մղումով, կը շարտէր վերժակը մէկդի ու պատահական չէր, եթէ հարսին որունքները կ'ընտանիկ, կնիկին վրանին կ'երկրը

1004-87

եւ այր մարդիկ: Ինքն իրմէ ելած, խելառ, անամօթ՝ կինը կը ճշարտակաւին:

— Տեսա՞ք, որ կ'ըսէի կը կատարէ զիշերը, սո՛ւս եմ...

Սանամ, օձէ խայթուածի պէս՝ վեր կը նետուէր տեղէն, ամօթին դալուկը այտերուն: Հազճեպով կը նետէր վրան շորերը, մինչ նորափեսայ Պաղտոն, արթնցած՝ կը ճմուկէր աչքերը եւ լսելով մօր վերջին խօսքերը, կը քմծիծաղէր կողմ շեղողի մը պէս:

— Կատարի՛ւր որն է, մէրիկ. առի՞թը կու տաս որ...

— Դու լռէ, ապերախտ տղայ, մօրդ կաթը ուրացող, — կ'իյնար տղուն վրայ մայրը:

Սանամ չէր լսեր այլեւս իրեն վերաբերող վէճին շարունակութիւնը եւ սափորը առած ուսին, կը փախչէր դուրս վրանէն...

Մինչեւ ջրամբարին հասնիլը, Սանամի միտքին մէջ ահաւոր չափերու կը հասնէր կեսուր մօր նետած «կատարի՛ւր» բառին պատկերացումը: Կատարի՛ւ... եւ ինչպէ՞ս էր այդ կատարիլը, քսանհինգէ երեսուն հոգիով ծանրաբեռնուած տարածութեան վրայ վրանի մը, ուր իրար անցած զուրկ, ոտք ու ձեռքի խտութիւնը կը դառնար պատկերաւոր անկարգութիւն:

Իրենք, շորք մէկ՝ կը պառկէին խոշոր միտերի մը լայնքին:

Սանամ եւ կեսուր մայրը կը քնանային քով քովի: Պաղտոն եւ հայրը, եզրապահի պաշտօնով՝ մինտէրին երկու ծայրերուն: Ամենաուշը Տիրուհի Ռաթունն էր աչք փակողը: Տղուն սէրը իրմէ խլած հարսին հանդէպ տածած խանդը կ'ուտէր իր միտերը, հոգին: Միակ վերժապին տակ, ամբողջ գիշերը, թակարդ լարածի պէս, ան բուռին մէջ կ'առնէր հարսին գիշերազգեստին փէշը, որպէսզի կարենար լրանել աղջկան ամենաթեթեւ շարժումը...

Հսկայ ջրամբարին շուրջը շուրջը անիշխանական լեզուակոխիք եւ թիթեղներու հրճուուկը ծորակներուն տակ, պարապ թիթեղին հանած զորդիւնը Սանամին կը թուէին դժոխքին դուռը հասածի պէս: Մորակներէն երբեմն հոսած ջուրը կը ցեխոտէր աւազը, որ, իր կարգին, կը թրջէր ու կը ցեխոտէր ջրկիրներուն փէշը, կօշիկներն ու մէկ-մէկ՝ տանց բոպիկ ոտքերը: Սանամ կարգի չէր մտցնէր սափորը, վախով՝ թէ անիկա կրնար ջարդուիլ հրճուուկի պահերուն: Կր քաշուէր շարք բռնելէն: Սափորը առած ոտքերուն միջեւ, ձեռքերը ծալած կուրծքին, ան կը սպասէր բախտաւոր առիթի մը, որ իրեն կը բերէր ծանօթ, բարի կին մը: Կինը կը խլէր Սանամի առջեւէն սափորը եւ կու տար բերանը ծորակին, շուրջիներուն յայտարարելով միշտ:

— Մ'դք է հարսին. եղածը կուժ մը ջուր է... թող առնէ տանի...

Մէկզի կանգնած՝ Սանամ կը սպասէր փրկարար կանչին. կը տեսնէր թըրուած փէշեր, անոնց երիզին ցեխը, զլիսալալակներու քաշըլուքը եւ ույս բաներուն փռնին վրայ՝ սպառնական, կծկուած դէմքը կեսուր մօր, որուն կծու լեզուն կը տաղնապեցնէր հոգին, թոյնը՝ սիրտը, որ սպասելը կը դարձնէր անյոյս: Որքա՞ն սպասեր էր. զաղափարը չունեցաւ Սանամ: Բարի կինը չկար, չէր երեւեր հոն: «Փուցէ, կինը հիւանդ է, չեկաւ. դար, անպայման, ձեռքէն կը կը խլէր սափորը...»:

Ու մէկէն տուաւ որոշումը. չերթա՞ր գետէն առնել ջուրը...

Սանամ կ'անգիտանա՞ր, թէ գետին ջուրը չէր յանձնարարուած: Հա-

մանայակը, Տիալայի ափին, բիւրաւոր զոհեր էր խլած, բազում մարդոց սիրտը այրած կակիծով: Անաստասային կլիման, պահածոյ միսին աւրուած հոտը, Տիալայի Գուրբը վարակին աւելը ներարկեցին արեան մէջ ժողովուրդի մը, որ կանաչուեցան մէջ ծնած ու աղբած էր՝ բարձր սարերուն հովերը ծծելով: Համանարակին հարուածը ուժգին էր, զղևանց Փետայական առողջ մարմիններն իսկ: Գիւրբման չունկան մեծն ու պղտիկը, հասարակաց փոսերուն յանձնըւած, անպաղտնապահ աւազին ներքեւ...

Սանամին մայրը գահավիժեցաւ դեռ փխրուն ափին հետ: Իրեն պէս շատ կիներ ջուրը սարաւ, որոնց գլխակները դտան տեղացիները Պաղուպայի կողմերը, ափին նետուած Տիալային: Հայրը սքաց կնոջ կարուտը, հիւանդացաւ: Այս համանարակը իր գործը տեսաւ: Սանամ մնաց որբ, որբերով հարստացած վրանաքաղաքին մէջ: Սրին, երբ մտածուեցաւ զպրոցի մասին, կանչուեցաւ իբրև վարժուհի եւ թարգմանիչ՝ Գաղթակայանը հովանաւորող անգլիացիներու եւ հայ պատասխանատուներու միջև: Հայրը ուսումնական մարդ էր. աղջիկը տուաւ ուսումի եւ Սանամ աւարտեց իրենց քաղաքին երկրորդական վարժարանը:

Եւ այժմ, Սանամ կ'ապրէր Հակազրուած ողբերգութեան մը վիշաբ: Վարժուհի էր եղած. իսկ Հիմա ինք հարսն էր Պաղտոյեաց տան, ու ջրկիր կին մը: Իր զեղեցիկ զէմքը չունէր այն փայլը, որ իրն էր եղած՝ երկրին մէջ ու գաղթի ճանապարհին, Արասի գետի շողը փախած, կծկած էր ներաշխարհին անկիւնները, ուր մէկ-մէկ հրդեհուած էին երազային դրեակները, որոնց յանձնած էր հոգին, ինչպէս ամէն աղջիկ մինչեւ հարսնութիւն...

Միտքը մէկէն պայծառեցաւ: Պիտի երթար գետէն տուն, խմելիք ջուրը: Ուսեց սափորը եւ կոնակ գարժուց ջրամբարին: Կիսեց հրապարակը եւ կիներուն պողտուքը մնաց ետին: Քայլերը շօրօր էին. նայուածքը ճամբեց հեռունները, որպէսզի ոչ ոք նկատէր ճամբուն վրայ: Ամօթը կը խեղդէր կոկորդը. հազած շօրը կը մատնէր անյարմար իր վիճակը ջրկիրութեան: Իր աչքերը չէին տպւոր կարծէք, կը քայլէր ակամայ, թէեւ կը պար, որ վրաններէն իրեն կը նայէին:

Յիւե՛ց Արասի գետին անճրկած վիճակը. միտքը ինկա՛ւ ընկերուհին, որ թամար կը կոչուէր...

Նոտած էին Արասի գետի ափին, գաղթի խուճապէն թիչ հեռու: Կորանցուցած էին իրենց հարազատները իրարանցումի մը ատեն. քայած էին միասին, բնազդական վախով իրար կպած: Հոտան գետին, որ շատ էր խորունկ. չէին կրնար անցնել ջուրը. գետը կը հոսէր եւ իրենք յող տալով չէին կրնար գետը կտրել-անցնել: Պը դիտէին գետանցը ժողովուրդին: Ոմանք ունէին իրենց անձնական սայլերը, ուրիշներ՝ բեռնաւորուած կենդանի անասուններ՝ ձի, ջորի կամ էշ. եզներ կամ կովեր: Բոլորը կը խրէին ջուրին մէջ, կը յողային, հոտանքէն ջշուելով եւ ակերբ կառչած անոնց պուչն, կողին փակած, բռնած մանրուք պզտիկներ՝ անոնց պաւակի բռններուն վրայ... Պարտադրուած անցք մըն էր, իսկ իրենք անտաւ կը թուէին այլ պարտադրանքէն: Ձիւրենք յանձնած էին բախտի անի ին, որ կրնար գլորել զիրենք զէպի մահ:

Այդ պահուն էր, որ հետոն կը պայթէր թնդանօթի մը ուսմբը: Զիւտորներու տասնեակ մը կը գրոհէր ահա գետափին տասանւորներուն վրայ, փութացնել տալով գետանցքը: Թշնամին կը նեղէր գաղթին կռնակը: Գաղթին ճամբան պաշտպանող Հայ զինեակները կը դիմադրէին նահանջելով, բայց հետո պահելով թշնամիին մօտիկութիւնը, այնքան, որպէսզի անիկա չխոցէր գաղթող ժողովուրդին հտեւէն եկողներուն կռնակը:

Տասնեակէն սպիտակ ձիաւոր մը ձին քնց երկու աղջիկներուն կողմը: Սլացքին մէջ, կենդանին հազիւ թափը պահեց, երբ աղջիկները ճշացին ահաբեկուած: Զիւտորը Սանամին դէռ անծանօթ Պաղտոն էր, որ բարկացած՝ պոռաց.

— Թամաւայի ժամանակ է. շուտ, անցէք միւս կողմը. թըշնամին մօտիկ է, շո՛ւտ:

Ընկերուհին՝ Թամարը, որ քաջ աղջիկ էր եւ Սանամին սիրտ տուողը, ծաղրական, անժպիտ՝ պոռաց.

— Լեղինիս պատուելիք, զեռիի տղայ: Թէ որ քու ձիուս պէս ձի ունենայինք, թոնր-դացեր էինք երկինք... դու չէիր դառնար մեր դէմին դո՛ւր հրամանատար, ախպէր:

— Դէ՛, այդ ճիշդ է, խելօք ջուրիկ: Կը տեսնուի, որ ճարպիկ աղջիկ ես, դէմիդ ճարտ տես: Իսկ այս խորտո ընկերուհիդ, որ ձայն չհանեց, կը փախցնեմ, — առանց սպասելու, թէ ի՞նչ պատասխան կու տար Սանամ, ծոնցաւ, թեւէն բռնեց ու քաշեց ձիուն կռնակը: Սանամ առիթ իսկ չունեցաւ հասկնալու, թէ ինչպէ՞ս դրկած էր երբտասարդին մէջըր ու սարսափով կը դիտէր ջուրը, որ ելած էր մինչեւ ծուկերը:

Զին լող տալով, հոսանքին դէմ պայքարելով, գլուխը ցից, ջուրէն դուրս՝ զիրենք հանեց միւս ափը: Սանամ նետուեցաւ վար: Ան չխորհեցաւ ո՛չ իր թրջուած ոտքերուն, ո՛չ փրկուելուն եւ ո՛չ ալ դէմը կանգնած հեծուորին մասին, այլ միայն ճշաց.

— Ընկերուհիս թողիր այն ափին, անխիղճ...

Պաղտոն անձայն, գլուխը ձիուն շրջեց դէպի դետը ու քշեց-գնաց: Սանամ հասկցաւ, որ ան կ'երթար Թամարին հտեւէն. լացը գաղթելուց: Ձնայեցաւ ձիաւորին, այլ, աչքը յառած միւս ափին՝ սպասեց: Սպասումը երկար տեսց, թուեցաւ իրեն կանգնած էր անհամբերութիւնը սպրոզ լուռ արձանի պէս, Արասիի մէկ ափին, երբ լսեց՝

— Ընկերուհիդ չկար. տղաք անցուցած կ'ըլլան զինք: Ար չրկասկածիս, ահա անոր տեղ այս աղջիկը փրկեցի. ան ալ հայու գասակ է...

Սանամ չլսեց ըսուածը: Վազեց դէպի ջուրը անցողները, անդադար կանչելով.

— Թամա՛ր, Թամա՛ր. աղջիկ ո՛ւր ես, ձայն տուր... Թամա՛ր...

Պաղտոն ձին քնց հտեւէն.

— Աղջիկ ջան. անունդ ըսէի՛ր, որ դիտնայի:

— Գնա՛, գնա՛ պարտականութեանդ հտեւէն. ամօթ է աղջիկ հալածես, — գրեթէ ճշալով ըսու Սանամ եւ շարունակեց կանչել, — Թամա՛ր, Թամա՛ր. ո՛ւր ես, աղջի...

Ու վազ տալով գնաց գաղթող ժողովուրդէն քշուածի պէս...

Գևորգի ան կողմէն խիտ կրակոցի արձագանգը հասաւ Սանս-
մին: Գէս դարձած ետ, նշմարեց միաւորներու խումբը, որ կը աու-
րար լեռնալանջն ի վեր: Առջեւէն կ'երթար սպիտակ ձիաւորը...

Բ

Յուլիոսեան տաքը զգալի էր: Սանսմ դէմքը դարձուց դէպի
գետ, Անցած ճամբէն անտաւ արեւը, որ նստէր էր դիմացի փար-
թամ պարտէզներուն գլուխը վեր ցցած արմաւենիի մը բարձր կա-
տարին: Անոր շողերէն մէկը ինկաւ Սանսմի դէմքին. կապտորակ
աչքերը փախուտ տուն ճառագայթէն, որ երանդաւորեց տօգոյն
այտերը: Խոշոր, սպիտակափառ վրաններուն մէջ, կեանքը կը սկսէր
օրուան զարթոնքը: Գևորգացիները անդամ մըն ալ Պաղատյանց հար-
սին յիշեցուցին արեւին ներկայութիւնը Արմաւենիի վերեւ կանգնած:
Հովի շունչը զգալի ըրաւ շողշողուն ծափը արմաւենիի ճեղքներուն:
Ջրկիր կին մը կու գար դիմացէն.

— Բարիլո՛ս, հարս ջան. ինձ չգտար՝ քեզ ջուր ո՞վ տար...

Սանսմ ճանչցաւ բարի կինը, որ կը խլէր իր սափորը ու դէմ
կու ասր ծորակին: Ամչցաւ, որ պատասխան չէր տուած բարեւին:

— Բարի լըյս, մէրիկ. կընամ գեանէն ջուր առնել. դուս ա-
ռեր ես:

Կինը զլիւթ ըրաւ. Սանսմ հիւանդ ժպիտով անցաւ քովէն:

Ուրեմն, ջուր կրելը գեանէն կարելի էր: Սանսմ դօտեպնդուե-
ցաւ: Արեւալոյսը մէկէն ողողեց չըջապատը: Երկուսն սպիտակ վը-
րաններու ցցուն, սրածայր կատարները պոպոզային եւ պղինձի ցուֆ
ինկաւ. աչքերուն մէջ. նայուածքը շեղեց եւ այդ պահուն լսեց հարին
մէկու մը սուլոցը, որ անպայման իր կունակին էր նետուած: Կնո-
ջական քնադը զգաստացնելով զինք, ըրաւ քայլերը հասցնելով, ըս-
պառնացող վտանքէ փախչողի պէս: Կը զգար, որ այդ սուլոցը
գեղեցիկի հանդէպ արթնցած հիացմունքի անմեղ եւ անակնկալ ար-
տայախոսութիւն մը չէր, այլ՝ դուրսիկ արարք մը մատնող աղբանջան:
Խոսով հոգիին խայթուելու անդրադարձը եղաւ այն, որ իր մէջ ճշալ
տուաւ խարանդը երկու բառ.

— Անամօթ, սրիկա՛յ...

Էսէ՛ց անձանօթը իր նկարագիրը պատկերող զոյշ բառերը,
թէ ոչ: Սանսմ լսեց երկրորդ սոյլը եւ ինքզինք նետեց խաչածեւոյ
անցքի մը մէջ, խափանելու օւղելով տեսողաւոր անպատկառ մարդուն:
Ապա քայլեց՝ սիրտին դողը լռեցնելու ուղիով: Նայուածքը հեռացաւ
ներկայէն ու Սանսմ դնաց դէպի յուշը, ուր ծնունդ առած էր Պաղատո
մը իր ճամբուն վրայ: Այն երիտասարդը, որ սպիտակ ձի ունէր տա-
կին եւ հրացան մը ուսէն կարուած. իր ժամանակին գուցէ հերոս
մը, դադթի ճամբան պաշտպանող շատերէն մէկը: Ան ալ հետապըն-
դած էր Սանսմը, դաղթակայանին մէջ, երբ այլեւս ո՛չ ձի ունէր տա-
կին եւ ոչ հրացան՝ ուսին: Դարձած էր սովորական, դաղթական
երիտասարդ, տեսակ մը փետրաթափ աքլոր, բոլոր ջուր ինկած աք-
լորներու պէս, որ ճամբան կը սպասէր, երդում-պատտա ըլլալով, թէ
կը սիրէր առաջին տեսածին Սանսմը: Համակրանք չէր տածեր ա-
նոր հանդէպ: Բայց մնայուն հետապնդումները ի վերջոյ կոտորեցին
աղջկան յամառութիւնը: Պատկուեցաւ Պաղատյան հետ: Ըսուեր էր

իրեն, թէ Պաղտոյենք հարուստ էին երկիրը եւ այդ հարստութիւնը հետերնին բերած էին, կծիկ ըրուած դեղին ոսկիներով:

Կեսուր հայրը լաւ, բարի մարդ էր: Սանամը սիրեց իր հարս-
դատ աղջկան պէս: Զուգել, գարգարել տուաւ հարօք ամէն ինչով:
Կինը հրէշ դուրս փկաւ. հակապատկերը ամուսինին: Իսկ իր Պաղտոն:
Ան, որ սպիտակ ձիուն վրայ Քաջ Վարդանի երեւոյթ ունէր ու քաջ
Փետայի կը թուէր, եղաւ քորջի կտոր մը մօրը առջեւ. շեղաւ օր
մը, որ պաշտպանէր կինը, քաջաբար ցցուելով, մօր անիրաւ, անա-
մօթ լեզուին դէմ դնելով...

Պաղտոյին խոստումները, հետապնդումներու ժամանակ, ան-
հաշիւ էին, մինչեւ իսկ թաղուհիի պէս պահելու երդում տալով:
Սանամ չէր հաւատար. գաղթականութեան մէջ ի՞նչ թագուհիի խօսք
կրնար դառնալ: Կը հասկնար թէ եւ, որ Պաղտոյին խոստումները քա-
միի բերան ինկած չոր տերեւներու կը նմանէին: Միջնորդներ հրուե-
ցան մէջտեղ: Վե՞րջը. առանձին անկողին իսկ չունեցան. կը ձգէ՛ր կե-
սուր մայրը որ ունենային. փէլը բուռին մէջ առնող կինէ մը ի՞նչ կը
սպասուէր արդէն: Սանամ քալելով կը խորհէր, որ իր ամուսնու-
թիւնը Պաղտոյին հետ թիւրիմացութիւն էր: Զնգեցին որ շարունա-
կէր վարժուհիութիւնը եւ զրկել տուին հոգեկան բաւարարութիւն
զգալու միջոցառումներէն: Եւ ահա պարտադիր ջուր կրող հասարակ
կին մը, որ հարսնութիւն չապրէր պիտի: Սանամի սիրտը լեցուեցաւ
վերջիչումին տառապագին սողողումէն: Հիմա, արեւը նստեր էր զոյգ
ուսերուն եւ այդ լոյսը ծանր էր, բեռան մը պէս, խափանելով վառան
քալուածքը, որ զինք կը հանէր դետին առջեւ:

Սանամ երբ ուշքը բերաւ. ներկային, նշմարեց առջեւը մէկ-
երկու անգամ ելլող երիտասարդը: Ան խոր-խոր կը նայէր իրեն.
մինչեւ իսկ լպիրջ մարդու ծիծաղ մը նշմարեց Սանամ անոր
նայուածքին, որ գազանային փայլք մը ստացած էր: Դէրվիշի երե-
ւոյթով այս մօրուքաւոր մարդը մի՞թէ ետեւէն լուռ հետապնդող
այդ սուրող տղան էր: Վախէն ահ ու դող ելած՝ Սանամ հազիւ ինք-
զինք նետեց լուացք ընող կնոջ մօտ.

— Մէրիկ ջան, կարելի՞ է ջուր առնել, — փսփսուքի պէս էր
հարցը:

Կինը նայեցաւ Սանամի սպրդնած դէմքին.

— Աղջի. ջրամբարին ջր՞երը հոտաւ, որ երկնցեր եւ մինչեւ
այս կողմերը: Լեղիղ պատուած կ'երևի. գնա՛, գնա՛ ես, ջրամբարէն
առ ջուրդ. հոս կարելի չէ. հազար ու մէկ տղամարդ կը լողայ...

Սանամ ետ դառնալու միտք չունէր. քալեց հոսանքն ի վեր,
ինքն իրեն պատասխանելով.

— Զրամբարին ջուրը ինձի ի՞նչ. ո՞վ ինձի ջուր կու տայ:

Աչքը լողուտներուն՝ քալեց: Գետեզրը լուացք ընող կիները
շատ էին, իսկ գետափի ջուրը ծանծաղ էր: Բաւական ետքն էր, որ
անդրադարձաւ ափի ամայութեան: Հասած էր աւազաբլրան տակ:
Զէր գիտեր, որ անդլիական հիւանդանոցի վրանախումբը թիչ վերեւ
էր: Ամայի էր եւ ապահով գետեզրը, եւ Սանամ զգաց, որ ոտքերը
կը ցաւէին յոգնութենէն: Կօշիկները նոր էին. ցաւը զգալի ըրին:
Նստեցաւ աւազին, հանեց կօշիկները. գուլպայ չէր հագած անապա-
բանքէն:

Եւ սափորը բռնած՝ իջաւ ջուրը...

Ջուրը ծանծաղ էր արհեստաբար փեղեղը հաւաքել մէջքին շուրջ: Մերկ սրունքները խրոնեցան դառը ջուրին մէջ: Առվ, դժուար դաւանում մը տարփոտ թմբիրով բարձրացաւ սրունքներէն դէպի վեր: Սանամ տաք, անուշ թմբուրին մը զղաց մարմինին մէջ, մինչ սափորին բերանը տուած էր ներս դառնացող ջուրին...

Ի՞նչ լաւ պիտի ըլլար հանուիլ եւ խրիլ դառը ջուրին մէջ, ու լողալ, լողալ մաքրելու համար մարմինը, որ հազուադէպ ջուր տեսած էր խիտ բնակչութիւն ունեցող գաղթականներին մէջ...

Գիտացի ափին ետեւ կը խլրտար կանաչը: Կը տեսնուէին պըտ-պատու ծառերու զանդուրներ եւ արձաւաններու հատ-հատ ցցուն հասակները: Գետեղրեայ եղեգնուտը կը ծածկէր տեսողութենէ բանջարեղէնի ամուններն ու ծառերուն բունները: Հակադրութիւնը անչափելի էր այս ափին հետ, որմէ սկսած՝ կը տարածուէր ընդարձակ աւազուտը, ինքնին մերկ անապատ մը, որ արուած էր Տիգրիս եւ Եփրատ գետերու միացումէն առաջ: Կ'ըսուէր, թէ Աստուածաշունչին Եղեմը հոն էր եղած, Ալլամ եւ Եւայի օրով:

Սանամ միտքը չբերաւ ո՛չ Եղեմը եւ ոչ ալ Եւան. անապատը չէր տար նման պատկերացում մը: Իր օրին, Եւա մըն ալ ինք, որուն ակամայ դժուարութիւններով արդիւրուած էր կենաց պտուղը ճաշակելը: Մտքէն լանցուց իր Աղամը՝ Պաղտոն, որ եթէ հետը գտնուէր այս ամառուեան մէջ, սիրտը պիտի շուգէր ուտել պտուղէն, քանի որ իր զգացած դառնութիւնը տեղ չէր թողած սիրոյ ցանկութեան:

Ի՞նչ ցանկութիւն, երբ կը թուէր, որ դաղթական ժողովուրդը ոչ մէկ պատկերացում ունէր ապագայի մասին: Կործանուած երկիր մը ու հոնկէ քուած ժողովուրդ մը, որ նստած էր աւազին վրայ, ուր ոչ մէկ բոյս կրնար արմատ նետել, ո՛ւր մնաց կենաց պտուղի ծառը: Կտոր մը առասպել, կտոր մը դաղթական ժողովուրդ, մէկ մասիկը անոր՝ Սանամ-Պաղտո հեքիաթը, իրաւի եւ սուտի խառնուրդ սպրուստ մը...

Ջուրը կը շարունակէր իր դառնալի սափորի բերանէն վար, երբ Սանամի կոնակին վարնուեցաւ օտարտի մայնը, որ անդերէնով կ'ըսէր.

— Ի՞նչ հրաշալի սրունքներ ունեք, հայ աղջիկ...

Ձլրջուած դեռ մայնին կողմը, Սանամին փէշը ինկաւ-ծածկեց սրունքները եւ լող տուաւ ջուրի երեսին: Ամօթի, վախի եւ անակընկալի խառն սարսափազողը բաց պիտի թողուր սափորը, որ կիսով լեցուած՝ խրեցաւ ու քշուեցաւ հոսանքէն: Սանամ ըմբռնեց, որ սափորին կորուստին հետ կորսուած էր ինքն ալ: Ակամայ նետուեցաւ սափորին ետեւէն: Թրջուած փէշը պլլուեցաւ ոտքերուն, արդիւնց վազը: Ծանծաղ էր ջուրը, լող տալը անկարելի: Ինկաւ, ծլաւ, փէշը ազատելով ոտքերէն, վազեց: Սափորը մէկէն ինկաւ խորունկ տեղ մը, հասանքը խլեց ու գլտորեց: Սանամ, յուսահատ, դժբախտ, հազուապէս թակարդուած, ինքն իր տէրը չէր այլեւս, չհասկցաւ, որ ինքն ալ կը քշուէր հոսանքէն: Պիտի խեղդուէր, երբ նախ ոտքերէն բանուեցաւ, ապա՝ մէջքէն... Կիսախեղդ էր: Ազատարարը, հոսանքէն դուրս հանելով մարած Սանամը, առած երկու թեւերուն վրայ՝ ափ հանելով՝ պտակեցուց տաք աւազին, սկսաւ մարմինը չփշփիւլ, որ կլլուած ջուրը դուրս տար...

Ուշքի գալով, Սանամին կոպերը, վարողորդի պէս դանդաղօրէն բացուեցան: Նայուածքը կը դողդոջար: Կիտարաց վարագոյրին դիմաց, նշմարեց խարտեաչ մագերով, կուրծքը կիտարաց, մեղաւոր ժպիտով երիտասարդ անծանօթ մէկը: Ապա՝ նայուածքը իջեցուց պտակած, թրջուած հաղուստին, որ մերկացուցեր էր զինք, պինդ կպած՝ կնոթական մարմինը գայթակղեցուցիչ վիճակի մը մէջ դնելով: Ծշաց ամօթը սպրած աղջկան մը նման.

— Ամօթ ինձի. սուփորը, սպիտ'ըրը... — վեր նետուելով, մագերը փետտել փորձելով՝ վազեց դէպի գետը, իննալով, ելլելով: Անդլիացի սպան, կարճ արտավարտիքով, կիտամերկ, բոպիկ (կօշիկներէն եւ սպիտակ շապիկէն ձերբազատուած էր, խեղդուող հայ աղջիկը փրկելու, գետ նետուելու տոխթով) պահ մը զարմայած, շուտարեցաւ, թէ աղջիկը ի՞նչ պիտի ընէր: Երկրորդ վայրկեանին հասկնալով Եղեղութիւնը՝ սուրաց Սանամին կտակէն: Խեղդուելու վրայ էր, երբ սպան բռնեց անոր մագերէն եւ սպա սրկած՝ դուրս հանեց ջուրէն:

— Տարօրինակ ժողովուրդ, խելագար աղջիկ, որ խեղդուիլ ուզէ սափօրի մը համար... — մինչ կը շարունակէր ուշքի բերել ինչազար, բայց շատ զեղեցիկ հայ աղջիկը: Սպան ինչէ՞ն գիտնար, որ ամօթէն գետին մտնել ուղող հայ աղջիկը նորահարս մըն էր եւ իբր սովորութիւններով եւ տո՛մային ժառանգականութեամբ պահպանողական ժողովուրդի մը աղջիկը:

Բարերախա եւ ուրախ զգաց սպան, որ խօսք նետած էր անդլերէն հասկնող մէկու: Երբ ուշքի բերաւ Սանամ, մեղաւոր լըջութեամբ նախ ներողութիւն խնդրեց անկէ, որ անգիտակցաբար վերատուած էր ինք, անսպասշան խօսք մը նետելով, թէ եւ հիացական պոռթկում ըլլար գեղեցկութեան մը առջեւ եւ աւելցուց.

— Կը ներէ՞ք, օրիորդ. որքա՞ն զգայուն է հայ աղջիկը. ուշքի եկէ՛ք, խնդրե՛մ. ես կը սիրե՛մ հայ ժողովուրդը. Անգլիոյ մէջ հայ ընտանիք մը կար. շատ լաւ էին...

Սանամի վիճակը ողբալի էր: Ամօթի զղացումը ահա կը կըրծէր անոր ամբողջ մարմինը, որ ինքնիր վրայ կը գալարուէր, որպէսզի ոչ մէկ անդադանապահ մասնիկ չերևար այս օտարական մարդու քնազը գրգռող: Հետզհետէ կծիկ բրաւ՝ սրունքները տակը քաշելով. սափերովը ծածկեց կուրծքը եւ կքելով ինքն իր վրայ՝ գլուխը իջեցուց ու կուրծքին: Սկսաւ լալ...

— Խնդրե՛մ, սյարոն, հետացէ՛ք քովէս. հեռացէ՛ք, գացէ՛ք, թողչէ՛ր զիս իմ ցաւիս մէջ...

Անգլիացի սպան կը զարմանար, թէ ինչո՞ւ այս հայու աղջիկը ամօթի զղացումը կը զարձնէր այնքան ողբերգական: Մերկ չէր ան եւ ինք զուհիկ ոչ մէկ արարք գործած էր: Այժմ, ինք կը ներկայանար իրքեւ բժշկի, որ հիւանդ կին մը կը խնամէր, մատուտն ճանկէն փրկելու համար զայն: Բարկացաւ. ընդունեց այնպէս, որ հայուհիին ամօթխածութեան մէջ խիզոնումը սպերախտութեան ցոյց մըն էր. սակայն, վճռական՝ ըսաւ.

— Ես ձեզ, օրիորդ, պիտի տանիմ մեր հիւանդանոցը. վրանդ—լու խնդր կարգի կը դնեն. այս վիճակին մէջ չեմ կրնար թողուլ ձեզ:

Սանամ սկսած էր սլաղ պսալ եւ զսղողալ: Ակուաները կափկափեցան, երբ ան մերժումը ըրաւ կիրք, գրեթէ զգուանք.

— Ո՛ւ, ո՛չ գացէք առանձին, պարոն, ձեր ներկայութիւնը ինծի համար մահ է, եթէ մէկը տեսնէ...

Սպան շէր ըմբռնել, որ հայուհին կը խօսէր արեւելեան ժողովուրդի մը բնազդէն, որ այնքան նեղմիտ է իր բարբերով: Կը գարձանար, թէ ինչպէ՞ս զարգացած աղջիկ մը (քանի որ իր երկրին մէջ կըրցած էր սորվիլ օտար, անգլիերէն լեզու մը աւելորդ) կրնար ինքզինք բանտարկել չինցած կաշկանդումներով:

— Հիմա սկսաք դողալ. կը նշանակէ, թէ ձեր մարմինը ցնցուած է. բուժումի պէտք ունիք: Խնդրեմ, օրհորդ. ձեզի պէտք է դեղեր տալ. իսկ դեղերը կը դոնուին հիւանդանոցին մէջ: Ուրեմն, ելէք ձեզ առաջնորդեմ...

Սաննամին շորերը բոլորովին ցեխոտած էին, ճոթկուտած: Արևը կը շորցնէր թացը, ցեխը փռէ կը դառնար, բայց անմաքրութիւնը պիտի մնար հազուադէպ ծաղիկներու տակ, բծաւորուած հազուադէպ, առանց սափորի, ինչպէ՞ս վրան դառնար, ուր նայուածքը ներքա խոտութիւնը, խոշորացոյցի պէս, լուրի մեծութիւնը ուղտի շափեր պիտի առնէր...: Ծար չունէր...: Սափորը չկար. իր միակ մտահոգութիւնը այդ եղաւ: Մամեց, ամօթխածութիւնը պահեց լեզուին տակ: Սեղմեց սկոռաները, որ հողը թաղէ Աստուծոյ հանդէպ ունեցած հաւատքին խորը եւ նայեցաւ անգլիացի սպային, սպանդանոց տարուելիք անբան անասունի համակերպութեամբ:

— Հայ կիներ կա՛ն հիւանդանոցին մէջ աշխատող, պարոն...

— Հիւանդներ միայն. եթէ վախ ունիք, ձեզ կը ներկայացնեմ անգլուհի մը. ձեր դէմքը եւ մազերը կրնան շմտանել կեղծիքը, որ բարութիւն պիտի ըլլայ...

Սաննամ հողին մէջ անիծելով կեսուր մայրը, որ պատճառ եղած էր օրուան պէպքերուն. մեղքը ձգելով ճակատագրի վիզին, ետեւ ոտքեր. մարմինը թոյլ էր, ոտքերը կը կրճատէին, երբ ուղեց քայլ նետել: Սպան ուղեց բռնել թեւէն. թող շուգեց տալ.

— Ո՛չ, ո՛չ. ես միմակա...: Կը խնդրեմ, դուք առաջ անցէք. ես կը հետեւիմ...

Սպան առաջ լանցաւ. ձեռքը իրեն քաշեց: Երկու քայլի վրայ՝ Սաննամ պիտի փլէր. իյնալու պահուն ձեռքերը ահամայ առաջ պարզեց, որմէ օգտուելով սպան բռնեց թեւը, անկումը կանխելով: Սաննամ շղիմադրեց այլեւս, հաշտուած էր ճակատագրին հետ: Թող պատուի, ինչ որ պիտի պատահի: «Մատ-չատ» գետը կը նետուիմ ու կ'ազատիմ չրէշ կեսուր մօրս ձեռքէն»:

Սպան կէս գրկած Սաննամին մէջքը, առաջնորդեց հիւանդանոց: Անգլիացի սպան հիւանդանոցի երկտասարդ բժիշկներէն էր: Մառայողները յարգանքով դիմաւորեցին ջուր ինկած կիներ, զոր ընդունենցին իրեն բժիշկին մէկ բարեկամուհին, լոնտոնէն ժամանած, բայց, նաևուն կամրջակէն ցամաք իջած պահուն՝ սահուն-ինկած ջուրին մէջ...

Գ.

Յաջորդ օրը, Պաղտոն մօրը յայտնեց, թէ Սաննամ ջուրի շէր կրնար երթալ: Հարսը ճակատին կապած էր լայնկր. գլուխը իրը շէր: Նախորդ օրուան դէպքը ցնցած էր ամբողջ մարմինը, որ իր կոտորածները հրած, քշած էր դէպի դուխը: Զերմաշափ շկար վրա-

նաքաղաքին մէջ: Վրանցի կին մը երբ ափը տարաւ Սանամի ալտին, չէրմնց.

— Գա՛. տաքութիւն ունիս. մրսած էս:

— Ինչ մը չունիմ. թող, — եւ Սանամ քաշուեցաւ վրանին մէջ անկիւնը, ուր բարձր դիպուած էին: Կռնակը տուաւ իրենց կոլուած մինտէրին, նստեցաւ խտրին վրայ եւ ճակատը առած ափին մէջ, իր դրութիւնը բերաւ աչքին առջև: Առանց մերկ ըլլալու, մերկացած էր օտար մարդու մը աչքերուն առջև: Ան կը չփէր իր ձեռքերն ու սրունքները, որոնց սիրահարած էր առաջին տեսնելուն. «Օ՛ֆ, ինչ ամօթ. Պաղտոն դեռ չէր ըրած այդպէս...»: Աչքերը տաքութենէն, թէ երեւակայած պատկերէն թրջեցան, իսկ կաթիլ արցունքը կ'ուշանար վար գլորուելու: Վրանը կէս ամայի էր. կրնար ազատութիւն տալ լացին: Ու սկսաւ լալ մեղմամայն: Լսողը կը կարծէր, թէ գլխացաւէն կը նուար Պաղտոնեաց Հարսը: Կեսուր մայրը եկաւ ջուրէն. լեցուն սափորը դրաւ վրանի փէշին շքու տեղը: Աւրացած էր եւ իր դուրսը հաւաքած թոյնը պիտի թափէր Հարսին շիտուն, երբ ծանօթ կիներ յայտնեց, որ խեղճ Հարսը շերտ ունէր, պող առած պիտի ըլլայ: Կեսուր մայրը նայեցաւ նախ սափորին, ապա՝ Հարսին, ոչինչ ըսաւ. միայն քրտմնջեց ինքն իրեն.

— Վայ ինձի. հաց կայ թխելիք, կերակուր կայ եփելիք, Հարսը մանր-մեծ Հող կայ տանելիք, իսկ Հանրմ Հարսերնիս, սուտ հեւանդ եղեր նստեր է ուսիս. որքա՛ն կ'ըսեմ, աղջիկ, գիշերը կըմկուէ, պատկիր, օգուտ չունի. ստըը կու տայ, կը քանայ վերմուկը, թէ տաք է... ըսէ, քոյրս, մե՛նք ինչու չենք տաքնար. Հնուց ըսուած խօսք է՝ շատ տաքողը կը պաղի... ամբաս այս տաքերուն պաղի՞ կ'ըլլայ: Ա՛յ, քոյրիկ, չէ. իր հեւանդութիւնը ուրիշ բանէ յառաջ եկած է...

Սանամ ականջն ու սիրտը զոցած էր ձեռքերով: Կասկածը անդադար ջուր կու տար ազմկող վախին, թէ ինչո՞ւ կեսուր մայրը նայեցաւ սափորին եւ ապա իրեն: Նշմարած է, միթէ, սափորին փոխուելը: Դժբախտութիւնը հոն էր, որ իրենցինը կարմրաթուշ էր, հեւանդանոցէն բերածին գոյնը իր զգացած վախէն սպրդնած՝ մեռելի գոյն...

Նոյն օրը առաւօտէն տարածայնութիւնը կը շրջէր վրաններէն գուրս: Բան-գործ շունեցող կիներուն աղօրթիքը՝ լեզուն սկսած էր բանիլ ջազացի քարին պէս: Կորաքամակ պառաւ մը, որ կ'անցնէր Սանամեաց վրանին առջևէն, ձեռնափայտը դարկաւ գետնին, ձայն տալով Տիրուհի խաթունին, որ կը շարունակէր Հարսին միւր ծամել.

— Աղջի Տիրուհի, լսեցի՞ր ինչ կ'ըսեմ, կ'ըսեն, որ Խոջանց թաղը էրիկ-կնիկ կոտեր են. կիներ դացեր գինք թալիք գետ. սիրական ունի եղեր. սիրականի Համար կոտեր ի մարդուն հետ, թէ... մեղայ, մեղայ քէ Աստուած... թէ դու, դու... աման, լեզուս չի բռնէ գու, Տիրուհի խաթուն, բան լսած չունի՞ս, խօսիս...

— Աննամուսին մէկն է եղեր: Մեր Հարս գանգատեր էր Պաղտոյի, թէ գլուխը կը ցաւի. ես գացի ջուր բերեմ, Ջրամբարի քով կիներ կը խօսէին: Սիրականի Համար են կոտեր էրիկ-կնիկ. կնիկ ըսեր է, կ'երթամ ջուրը կը նետուիմ, որ ազատիմ քեզմէ: Դու մի ըսեր, պայմանաւորուեր են, թէ ես կ'ընկնեմ գետ, դու կ'ազատես, կը տանես հետդ:

Հացթուխ կին մը, որ կորաքամակ պառաւին վրանէն էր, Հար-

ցին ծրարը դիտուն վրայ, կեցաւ պառաւին քովը, խօսքի մէջ իննալով.
— Կ'ըսեն, մարդը Փըլ է, ինոր համար կին փախեր ի սիրտ-
կանի խեղ...
Կորաքամակ պառաւը անպարեց առջ անցնել: Իր դիտցած
լուրին վրայ աւելցած ունէր Փըլութին բառը, զոր պիտի ուզէր
սուղի քէլ բամբասող կիներու ականջին, Պաղատաւն բերուած նո-
րութեան պէս...

Սանամ փուշկըու վրայ նստածի պէս եղաւ: Գլխացաւը իջաւ
սրտին: Իրեն թուեցաւ, թէ լուրը փեղաթիւրուած էր բերնէ բերուն:
Անդիւական հիւանդանոցէն մէկը յուշած էր. սակայն, հոն անգլու-
հի մայրապետները զինք ընդունած էին իրրեւ անգլուհի. կարծեցին,
թէ ինք եկած էր Լոնտոնէն եւ մէկ բարեկամուհին էր սըր Մազտոնալ-
տին: Առանձին վրանի մը մէջ, մերկացուցին զինք, հիւանդապա-
հուհիի սպիտակ շոր հագցուցին: Մայրապետը ժպտով եւ յարգալիտ
հրաւիրեց պատկիւ հոն պատրաստ անկողինի մը մէջ, կաղաւթիչ զեղ
տուաւ: Ուրիշ քոյր մը լաթերը տարաւ հետը: Կէս ժամ ետք ելաւ,
հագուեցաւ մաքուր եւ արդուկուած լաթերը: Զինք առաջնորդեց
մայրապետը ուրիշ վրան մը, որ կը նստայէր իրրեւ գրասենեակ:
Պարոն սպան հոն էր: Սպան հիացմունքով դիտեց գեղեցիկուհին, Նրբ
կը բարեւուէին, Սանամ անակնկալի եկաւ: Սպան իր շրթունքներուն
տարած էր թրթիպացող ափը, որուն կունակէն համբուրեց:

— Քիչ մը հանգստացէ՛ք, Մատոնա. նստեցէ՛ք, — սպան ա-
թոռակ մը ցոյց տուաւ ժպտելով:

— Ուշ մնացի, սըր. իմ ժամանակը համբուած է. ուշացումս
կը նկատուի: Մեր բարքերը աններող են... — Սանամի խօսքերուն
տակ կը զգացուէր տաղնապը: Եթէ մէկն ու մէկը տեսած ըլլայ,
ինք մեռած պիտի կարծէր ինքզինք այդ պահէն:

— Կ'աղաչեմ, օրիորդ:

Սանամ ուժ չունեցաւ մերժելու պաղատական թիւղաբերու-
նը, ի գին դիտակից վախին: Նստեցաւ: Սպան սեղանիկի մը վրայէն
խմիչքի շիւ մը առաւ. երկու փոքրիկ բամակներու մէջ լեցուց երկու
մատնալափ բաց թէյագոյն հեղուկէն: Բամակներէն մէկը երկարեց
Սանամին:

— Սովոր չեմ, սըր...

— Ես այս կը հրամայեմ, գեղեցիկուհի, կը ներէք որ այդպէս
կ'ըլժմ ձեզ, ոչ այնքան խմիչք, այլ իրրեւ զեղ, ցնցումէ առաջացած
ձեր ջիզերուն: Իրրեւ բժիշկ, կը հրամայեմ, — եւ սպան ներողա-
մը տարար ժպտեցաւ:

Սանամ առաւ ուժով մը. լեզի եւ տաք էր. ցնցուեցաւ ուտերէն:
Անմիջապէս կողորդէն ցած խուժելը զգաց անկրակ հրդեհող բոցի
մը. բաժակը վար պիտի դնէր, սպան պնդեց ամբողջը ըմպելուն: Ծար
չկար. չէր ուզէր մերժել համակրելի մարդը, որուն նախուածքին
մէջ դայթակղեցնելիք ոչ մէկ շող կը նկատուէր: Ուրեմն, ըմպեց
թէյագոյն հեղուկը եւ մարմինը մէկէն ողողուեցաւ տարփողող խա-
ղաղութեամբ մը: Զգաց, որ կը ժպտէր ինքնաբերաբար: Սպան հըր-
ճըւեցաւ:

— Վերջապէ՛ս, ժպիտ ձկաւ ձեր դէմքին, կրնամ վստահ ըլ-
լալ, որ զիս պիտի չանիծէք պատահարին համար: Մտահոգ էի եւ
խիղճս իրողազ չէր...

— Այո, սըր. անդիւացիները միշտ պատահարներ ստեղծած

են խեղճ ժողովուրդներու միջեւ, տիրելու համար. վերջէն ջոյց տը-
 ւած են, ինչ կը խղճահարին, — ուխտին Սանամին մէջ արթնցուցած
 էր հայկական ուրը, քինախնդրութիւնը: Ձէ՞ որ անգլիացիներն ալ
 բաժին ունէին: Իրենք, հայերը գաղթական չէին դառնար, եթէ խար-
 ւած չըլլային խաչապաշտ մեծերու խեղճէն:

Անգլիացի սպան պիտի չուզէր վերաւորուած զգալ խօսքէն
 գաղթական հայուհիի մը: Եւ միտք չունէր քաղաքականութեան մա-
 սին մտածելու, երբ գաղթական միւսնոյն կինը գեղուհի մըն էր,
 ծաղիկ մը այս շոր, բուսականութենէ զուրկ անապատին վրայ: Կըմ-
 ծիծաղ տուաւ համակրելի դէմքին.

— Ինչպէս կը հասկնամ, առջեւս եզոզ իրական Մատոնան,
 դեղեցկութեան հետ ունի նաեւ սուր միտք եւ քաղաքական դատողու-
 թիւն: Ձե՛մ ժխտե՛ր. բայց, ձեզի յայտնեցի, թէ ես կը սիրեմ հայ ժո-
 շովուրդը: Դիմացկուն է. յամառ, կամքին գիտակից, տոկացող եւ
 լոյսը պաշտող. այս բարեմասնութիւնները ժողովուրդ մը կ'ընեն
 կենդանի. չի լուծուիր, չի փճանար, այլ կը շարունակէ տեսիլ...

— Պատի՛ւ է ինծի ձեզմէ լսել նման խօսքեր, սըր. շնորհա-
 կալութիւն: Կը ներէք, որ երթամ...

— Մեկնի՛ր՝ կը մեկնիք, չենք կրնար արգիլել. թէեւ ես ստիպ-
 ւած եմ ընկերանալ ձեզի, որոշ տեղ մը, դուցէ մինչեւ աւազարլու-
 րը: Մեր հիւանդանոցը, որ յատուկէն ձեզի, հայերուդ համար պատ-
 րաստեցեացաւ, շրջափակ չունի. ոտքի վրայ հիւանդներ կան, հետա-
 քըրքեր ժողովուրդ էք: Երբ առանձին էք, ձեզ կը հետապնդեն աչքով.
 ձեր հայուհի ըլլալը պուշակելը իրենց համար դժուար չէ: Մայրա-
 պետին համոզել է պէտք, որ դուք անգլուհի էք, չէ՞... Միտսին
 դուրս կ'եւլենք. դուցէ ստիպուինք թեւ թեւի տալ, երևոյթները
 փրկելու համար...

— Այդ կարելի չէ, — Սանամի դէմքը գոյնը նետած էր: Սըր-
 տադողը արոփել սկսաւ կուրծքին տակ՝ քառասմբակ վազող ձիերու
 ոտնաարոփելին պէս... Ինչպէ՞ս յանձնել թեւը անոր: Ախ, ա-
 նիծուի կեսուր մայրը, սասկի մարդը, որ քուրջի կտորի պէս է,
 չեզու չկայ բերնին մէջ...: Երանի՞ գեաը խեղդուի. այս ի՞նչ
 անպատուութիւն է, որ բերի գլխուս. ինչպէ՞ս պիտի պահեմ գլուխս
 հաւաքական խիտ կեցութեան մէջ, ուր զրպարտութիւն ու բամբա-
 սանքը կը սուրան թռչունի թեւերով, չեզած լուծ ուղտի վերածե-
 լով...

— Ես ըսի պարզ ձեւակերպութեան մը համար. ինչո՞ւ մէկէն
 յուզուեցաք, օրիորդ. չէ՞ որ ետքէն, դուք կը դառնաք դուք, ես կը
 մնամ ես: Անպատրտ տափարակ երես է. շարժողոջ դաշտամուկն իսկ
 կ'երեւի հարիւր քայլի վրայ. դարձաւ չունի, ուր աչքիպառել խա-
 դայ մէկը, երբ խուսափիլ պէտք է շար աչքերէ: Գալեցէք. ապահով
 կը հասնիք ձեր տեղը եւ տերեւ մը չի շարժիր տեղէն...

Սանամ կը սկսէր հաշտուիլ նոր կացութեան հետ: Ուխտիին
 թմրութիւնը չէր լրած մարմինը: Գլուխը տաք էր. համամախեցաւ
 եւ դուրս ելաւ վրանէն: Սպան բռնեց գաղթականի հակառակ ուղ-
 զութիւնը: Սանամ հետեւեցաւ անոր: Ոտքերը կը խրէին աւազին մէջ.
 չփոթ քալուածք ունէր: Սպան հագած էր երկայն փառքովոն. շա-
 պկիկն օձիքը կոճկուած էր եւ այս արտաքին փոփոխութիւնը վստա-
 հութիւն ներշնչէր պիտի հայուհիին: Քալեցին անխոս այնքան, որ
 հիւանդանոցէն նայող զիւրեք նկատէր զոյգ մը կէտեր: Ապա՛ գեա

տին հակառակ ուղղութիւնը բռնած՝ շարունակեցին ճամբան, որ ճամբայ չէր, այլ՝ աւազի հարթ մակերես: Սանամին ուղեղը թօթափեց մէկէն ուխտքիին թմբերը. կը դարձանար, թէ ինչո՞ւ անզլիացին զինք կը հեռացնէր դաղթակայանին դիմելու ուղեղ ճամբէն: Գանգ առաւ. պիտի հարց տար, երբ սպան դարձացած՝ հարցուց.

— Ինչո՞ւ կեցաք, օ՞ճ տեսաք...

— Ո՛չ. օճ չէր, դաշտամուկ էր, — եւ անմեղ ըրաւ իր հարցումը, — այս ո՞ւր կը տանիք զիս:

— Սիրելի Մատոնա, ձեր մտքէն բնաւ չտնցընէք, թէ ազնուական ընտանիքի մը զուակ՝ անզլիացի սպան կրնայ առեւտնդել աղջիկի մը, որ վստահուած է իրեն, առաքելութեան մը առիթով: Անմ վիրաւորուիր. պատուախնդիր հայուհի մը իրաւունք ունի հարց տալու: Տեղեակ եմ եւ ինծի պատմած են, թէ ինչպէս հայ աղջիկներ անդունդ դահալիթած են կամ դետը նետուած, երբ վայրագ մարդեր, թուրքերը ըսել կ'ուզեմ, փորձ ըրած են բռնաբարձան...: Ես պիտի չուզէի ոչ մէկ հայ աղջկայ մազին իսկ դպլիլ...

Սանամ ամչցաւ. ինքն իրմէ. չքմեղանք մըն էր, երբ ըսաւ մեղմ.

— Կը ներէք, օրբ, որ հարցս ձեզ վիրաւորեց. այդ չէր իմատը. ըսի, դուցէ չփոթած կրնաք ըլլալ ուղղութիւնը. դաղթակայանը չ'երեւիր հոսկէ:

— Կարիք չկայ նեղուելու: Անք ազնիւ զգացումները յարգել եւ պաշտել պէտք է: Իսկ այժմ, որ մենք լաւ բարեկամներ ենք, չեղինք վեր ուղղութիւնը դէպի աւազաբլուրը: Այսպէս, մենք չըջանցած կ'ըլլանք հիւանդանոցը:

— Շնորհակալութիւն, օրբ. ես աւարտած եմ երկրորդական վարժարան, Երկիրը, մեր քաղաքին մէջ: Անգլիէնս սորված եմ նոյն տեղը. Հայրս ուսումնական մարդ էր: Տիալայի ափին մեռան հայրս ու մայրս Գաղթակայանը հաղիւ Հաստատուած հան, մենք բացինք դպրոց եւ հիմնեցինք որբանոց: Դուք իրաւ էիք, երբ ըսիք իմ ժողովուրդիս մասին, թէ լոյսը սիրող ազգ եղած է. ճիշդ է: Ախնադարի առիթով մենք կազմակերպեցինք տօնակատարութիւն՝ հովանաւորող անզլիացի մեծամեծ զինուորականներու պատուին: Տեսնելու էիք մեր որբերը, հազարէն քիչ պակաս՝ նոր կարուած Համազգետով, նով-նոր կօշիկներով, քառէֆներով, ուսերնուն Եռադոյն ժապաւէն: Կը քայլէին հպարտ, ինքնագիտակից, մարզական երթով: Նորաստեղծ Փանֆառի խումբը կը հնչեցնէր Հայկական մարշ. կը թուէր, թէ փոքրահասակներու բանակ մըն է, որ կ'անցնէր քրքրալիւնին առջեւէն, բարեւ բռնած դիրքով եւ մէջքը չկրցաւ զսպել իր հիացմունքը, առաջինը ծափահարելով...: Ի՞նչ օր էր. հայ ժողովուրդը, ազգը ըսել կ'ուզեմ, կ'ապացուցէր, որ սպրելիք ցեղ է. քանի որ շատ կարճ ժամանակի մէջ — տարին չլրացած — կրցած էր, ոտքի հանել հազար մը որբեր, անթերի Համազգետով: այդ ցոյցը բարոյական եւ վրէժխնդիր սպտակն էր անդամ թուրքի երեսին, որ Համարձակած էր ըսել, թէ հայ մը պիտի չթողուր աշխարհի վրայ, իբրեւ նմոյշ անհետացած ցեղի մը...

— Մի՞թէ գտնուած է նման սպուշ մը:

Սանամ նայեցաւ անզլիացիին. լո՞ւրջ էր, թէ կը ծաղրէր: Սպային դէմքը ունէր իննսուն տարեի ապաղայ մը հեռատեսող արտայայտութիւն: Կրքով ըսաւ.

— Ո՛չ, ապուշ մը չէ ըսողը. թուրք պետական մեծ մարդ մը, որ իշու գլուխ ունենալու է. հայը չի մոռնար այդ հրէշը. գլուխը կը թքցուի օր մը, քանի որ մեր որբերուն չքերթը Տիալայի ափին այդ կը պահանջէր...

— Սիրելի Մատնա, յուզուած եմ: Կը պարմանամ, թէ ինչպէ՞ս ձեզի պէս զգայուն եղնիկ մը կը նեառէր դետը՝ խեղդուելու, մոռնալով, թէ քաջ վարժուհի է եւ պարտի ուսուցանել որբերու սերունդին լոյս՝ յայն իր ժողովուրդին, եւ ատելութիւն՝ ի դէմ բուն թշնամիին:

— Պատուախնդրութիւնը հայկական է, ամէն բանէ առաջ, սրբ: Մակայն ատելութիւնը նոր պիտի սորվենք: Ազգովին խաղաղ ժողովուրդ ենք եղած, չենք ատած մեր դրացի ազգերը, անոր համար, պետականօրէն՝ եղանք առաջին քրիստոնեայ ազգը:

— Մքանչելի, Մատնա. սիրելի է լսել ձեզ: Կը յուսամ, որ կը դառնանք բարեկամներ...

— Ինչպէ՞ս, սրբ: Դուք ազատ էք եւ այժմ՝ տէր այս հողին, զոր դրաւեր էք զէնքի ուժով եւ մարդասիրտար կը հովանաւորէք մեր գաղթական ժողովուրդին մէկ մասնիկը, որ կրնայ մերժել, եթէ կայսերական մեր կառավարութիւնը փորձ ընէ հաւաքական կեցութիւնը քայքայել: Ժողովուրդին մէջ կը խօսուի, թէ դուք՝ անգլիացիներդ, կը մտադրէք մեզ ցրուել արարական երկիրներ...

— Սիրելի Մատնա, կը ներէք, որ մեր անունը կ'անգիտանամ, — միջամտեց զինուորական սպան՝ բժիշկ Մարտնալուր, — լաւ է մեր տուած լուսարանութիւնը: Պետական գաղտնիք է. ինչպէ՞ս հասած է մեր ականջին: Որովհետեւ այլեւս գաղտնիք չէ, ըսեմ...

Սանամ կանխեց տոբարը.

— Հայը ազրած է միշտ զգացումով, հետեւարար լաւ կը զգայ, որ դուք՝ անգլիացիներդ, մեզ ցրուելով՝ առատ իւղ քսած պիտի ըլլաք թուրքի հացին...

Սպան համակրելի դէմք ունէր, գործանքը չարեց զեղծցիկ դիմերը, բայց կլորաց անոր կապոյտի գարնող այլերը: Ժպտեցաւ.

— Խնդրեմ, օրիորդ գեղուհի, բնդունեցէք զիս մեր բարեկամը. այնպէս վարուեցէք, որպէսզի հաճույքը ունենամ ձեզ լսելու միշտ: Քիչ առաջ պատմականը ըրիք զինադադարի տօնակատարութեան տպաւորիչ շքերթին: Երկայ եղող զինուորական դասընկերօ հիացմունքով խօսած էր ինծի: Դժբախտաբար, հետեւանքը եղած էր այն, որ մերինները ծրագրեցին քայքայել հաւաքական մեր համախըժրումը, գլխացաւանք չունենալու համար հետագային, երբ պետական շահերը ի զօրու դառնան՝ թուրքերուն տնտեսական կամ քաղաքական դաշնագրներ պարտադրելու ատեն...

— Այո, սրբ, իրաւունք ունին մերինները. ախտո՞ւ, որ մենք քաղաքականօրէն ահա ժողովուրդ ենք. մենք կ'ապրինք զգացումով, ինչ ձեզի պէս պետութիւններ՝ խելքով: Կր տուժենք մենք, կը շահեք դուք եւ մենք միշտ պիտի հաւատանք, որ դուք անկեղծ էք մեզի հանդէպ լեզուով, բայց վճռեալ դաւանանք...

ՍՄԲՆՏ ՓԱՆՈՍԵԱՆ

(Շար. 1)

Պ. Հ Ե Ր Ե Ա Ն

ԵՂԻՐ

ՆՄԱՆ ԹԻԹԵՌԻՆ...

Ազմուկներէն սնամէջ,
Շղարներէն ալամրակ
Ու մարդատեաց հրթիռներէն ողբալի
Հալածանքէն հեռանամ,
Օ՞, պահ մը գէշ
Ոչինչ խորհիմ ու զգամ
Եւ յանձնուիմ անխաբութեան ու

չբլիւմ...

Ու տմաջան աշխատանքէն
Տուն դարձող, քանուարի պէս լրջախռե,
Իր սիրուհին ճուաճած
Պարմանի պէս գոհունակ,
Կամ սուրբ գործն իր իրագործած
Մարտիկի պէս վիրաւոր,
Իր երագած երկը մեծ
Հրկիզուելով արարած՝
Լիցքաբախուած բամաստեղծի պէս


հզօր՝

Եւ՛ ինձնաբաւ, եւ՛ դատարկ,
Օ՞, հեռանա՛մ
Ու խաղաղի՛մ, խաղաղի՛մ
Ճիշդ մտան ա՛յն թիթեռին,
Որ կը մեռնի՛ նայն պահուն
Մնունդ տալով թրթուրին...

Տրտում, այլ պայծառ,
Դժբախտամպտուն,
Հոգիիս պէս խոր, ամտակ, սահալի,
Եղի՛ր քաղցր, եղի՛ր վեհ՝
Մարմնի՛ն պէս ճայիքեան,
Էշխը օրնի միջնադարու ֆանֆարին,
Հոգաբարձիս ռոմբուս մերուող փխրուն
Ալպիական մառուշակն իմ՝ Բակունցի,
Փողոցներուն մէջ Կարսի
Դեռ թափառող իմ Կարինէն՝ Չարհնցի,
Եղի՛ր սե՛նն իմ,
Եղի՛ր նի՛նն իմ երկունքի...

Եւ դուն եղի՛ր, եւ եղի՛ր...:
Օդին մէջէն
— որ եիմա խտանալով շունչիդ մէջ՝
Կը մուտքի շունչիս մէջ —
Սլացող համ համբոյրի,
Եղի՛ր այդպէս սլացիկ
Ու բարձրուշէդ, իմ աղջիկ,
Մեր նորօրեայ պայքարին
Ճանբուն վրայ վեհավիշա
Միբայ մնան պապանձուած՝
Սպասումն իմ կենդանի...

ԳԻՇԱՏԻՉ ԹՈՉՈՒՆ



Ի՞նչ բռչում է գիշտոյիչ,
Որ բեւերն իր կը բախէ
Տրտմաշշուկ իմ դէմքին...:

Տե՛ս, մութին մէջ
Ստատանայ մը անօպայ
Հանկերն իր խոր կը խորէ
Արմատներուս յատակին...:

Բացին ծովուն՝ թափանցիկ
Շրջագոյնտի պէս բացուած
Առագաստները կ'այրին...:

Հանդերձամբով հրեշտակի՝
Ծովուն խորքէն
Հայերն հիմա կը մեկնին...:

Դե՛ռն ալ կը զգաս ինծի հետ,
Ո՞վ տառապեալ,
Ես, որ հիմա կը բերեմ
Քառ ոտհերուն յոգնատանջ
Նուրի նման ճաշած սիրտը Պէյրուքի...:

— Երակներէս մութ մելա՞ն կը հասի —:

(Հանճե՛ր, ճանճե՛ր,
մանուկներուն երազները ազրանոց չէ,
որ դուք այնտեղ կը թառիք...):

ԵԹԷ ՊԻՏԻ ԳԱՍ

Եթէ պիտի գաս՝
Պէտք է գաս իբրեւ
Գերբուածն իմ անհաս,
Պարզ ու ռամձարձակ՝
Մեղին անգիտակ պառնիկի նման,
Ոնմարմին ու վառ,
Պէտք է գաս իբրեւ
Թախծութեան բարվառ,
Եւ իմ առնական կրակներուն դէմ
Հալչադ իգական տկարութեա՛ն պէս,
Պիտի գաս, հոգի,
Իբրեւ կենդանի բառն իմ քերթութեան,
Կամ...:

Պ. ՀԵՐԵԱՆ

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Յ Ն

Հ Ա Ղ Ո Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն



Բարեկազմ եւ արտաքինով գեղեցիկ երիտասարդ քահանան Հազաւ պարեզուտը, վերջրից փոքրիկ աղօթադիրքը եւ նշխարատուփը, պահարանի վրայ դըրած գեղեցեցած հայելու մէջ նայելով յարգարից իր սիրուն ու սեւ մօրուքը եւ, դառնալով՝ կնոջն ասաց.

— Ջրուխտ, դնում եմ հաղորդութիւն տալու: Ասում են՝ Խեչանց Սահակը հոգեվարքի մէջ է դռնուում:

Մրէշկինը, որ շատ նիւար էր եւ ոչ գեղեցիկ, ամուսնոյն նախից սիրահարուածի աչքերով եւ զմայլանքից հաշիւով ու, բառերը ծոր տալով՝ ասաց.

— Թող Տէրը վարձահատոյց լինի քեզ, տէր Խորէն: Ե՛ւտ տուն արի, ընկուղով լսի եմ եփել ընթրիքի համար:

Տէր Խորէնը հառաչեց: Ջրուխտը նրա սրտովը չէր: Հօր պահանջով էր ստուսնացել նրա հետ եւ այժմ ամբողջ կեանքը պիտի անցընէր նրա հետ:

Բակում, մթան մէջ, նրան սպասում էին Խեչանց Սահակի որդին եւ մէկ ուրիշ երիտասարդ:

— Բարի երեկոյ, աղաներ: Գնանք:

— Օրհնեալ Տէր, տէր Հայր...

— Ասում ես Հայրդ տանը Հիւանդ է, հը՞, — քահանան դարձաւ Սահակի որդուն:

— Այո, շատ ծանր, մահամերձ...

— Ջարմանալի է, մի քանի օր առաջ առոյգ էր երեւում:

— Ա՛հ, ինչ է մարդը: Մարդը խոտի պէս է: Քանի կանայ է՛ լու է, բայց աշուն ար եկաւ ու ցուրտը խփեց, է՛լ վերջացաւ, — փիլիսոփայեց երկրորդ երիտասարդը, որն էր այդ դառն արտանջը տարիքաւորներից էր լսել:

— Այդ Աստուծոյ գործն է, Գէորգ, — Հեղինակութեամբ ասաց քահանան: Գէորգը լռեց, որովհետեւ խօսողն քահանան էր: Նախապէս, մինչեւ Խորէնի քահանայ ձեռնադրուելը, նրանք մըտերիմ ընկերներ էին, բայց յետոյ պատկառուցուեց նրանց միջեւ:

— Ո՛ւր է պտուկած Հայրդ, — մի բան ասելու համար Սահակի որդուն Հարցրից քահանան:

— Օթեւանում:

— Օթեւանում: Մի՞թէ այսօր Հիւր չունէք:

— Վերջին Հիւրն այսօր դնաց, — տխուր ժպտաց Սահակի որդին:

Խեչանց ընտանիքը յայտնի էր էր Հիւրասիրութեամբ, ա՛յնքան՝ որ տան բակում յատուկ սենեակ էր կառուցուել Հիւրերի համար:

Նկատելով Սահակի որդու տխու-

թիւնը, Տէր Խորէնը փորձեց նրան մխիթարել։

— Մի մտածիր այդքան, — Մկրտիչ, մենք բոլորս մահկանացուներ ենք։

— Քիչ առաջ ես էլ այդ ասացի, — մէջ ընկաւ Գէորգը։

— Բայց Աստուծոյ կամքով, Գէորգ, Աստուծոյ կամքով, — ձեռքի աղօթապէրքը վերից վար շարժեց։

Օթնանում շատ այցելուներ կային։ Բուն սենեակից բացի, մարդիկ կանգնել էին փոքրիկ միջանցքում։ Ամէնքը լուռ էին եւ երկիւղած դէմք ունէին։

Երբ քահանան ներս մտաւ՝ նստածները ոտքի կանգնեցին։

— Նստեցէք, նստեցէք, — ձեռքով նստելու նշան արեց քահանան։

Սահակին պակեցրել էին սենեակի վերին անկիւնում դրուած մի փոքրիկ քալիստի վրայ։ Նրա դէմքը շատ դուռնատ էր։ Աչքերն ու այտերը ներս ընկած։ Նա դժուարութեամբ էր շնչում։ Թախտի կողքին դրուած աթոռակի վրայ նստել էր նրա կինը, որը թեքուել էր ամուսնու վերայ։

Քահանան մտեցաւ Հիւանդին, թեքուեց եւ ձեռքը դրեց նրա ձեռքին։

— Ինչպէ՞ս ես, Հորեղբայր Սահակ։ Սահակը աչքերը բացեց, քահանային տեսնելու պէս ուզեց նստել։

— Ոչ, ոչ։ Պառկի՛ր, պառկի՛ր։

— Մեռնում եմ, տէր Խորէն...

— Աստուած ողորմած է... Ուզո՞ւմ ես հաղորդուել։

Սահակը մատի ծայրով քահանային իր դէմքին մօտ կանչեց։

— Ի՞նչ է, Հորեղբայր Սահակ։

— Ներկաներին դուրս ուղարկի՛ր, — շնչաց Հիւանդը, — քեզ բան ունեմ ասելու...

— Մի քանի ըոպէ դուրս դնացէք, ինձ եւ Հորեղբայր Սահակին առանձին թողէք, — ներկաներին աղաարարեց քահանան եւ նստեց այն աթոռակին, որի վրայ նստել էր Հիւանդի կինը։

— Գնացի՛ն։

— Գնացին։

— Ինձ մի քիչ ջուր առի՛ր...

Քահանան վերցրեց պատուհանի դուռը դրուած ջրի բաժակը եւ, զգուշութեամբ բարձրացնելով Հիւանդի գլուխը՝ ջրի բաժակը տարաւ նրա շրթունքներին։ Նա հազիւ մի կուժ խմեց եւ շնչաց։

— Մեր այս ջուրը խմողը չի մեռնի, տէր Խորէն...

— Աստուած ողորմած է։

— Տէր Խորէն, խնդրում եմ միջնորդես Աստուծոյ առջեւ, որ ինձ թողութիւն շնորհի։

— Քո ո՛ր մեղքի համար, Հորեղբայր Սահակ։

Հիւանդը մի քիչ մտածեց եւ ապա մեծ դժուարութեամբ եւ շնչակտուր խոստովանեց, որ ինքը ո՛չ սպանել է, ո՛չ դուրս թողել կատարել եւ ոչ էլ սուտ խօսել կամ սուտ վկայութիւն տուել։ Բայց, երբ յիշում է տաք պատուիրանների այն կէտը, ուր ասուած է «հարեանիդ կնոջն աչք մի դիր», սարսափում է, որովհետեւ զրեւ է։

— Երբ ես երեսասարդ էի, — ասաց Հիւանդը, — ես թէեւ ամուսնացած էի մեր այս կնոջ՝ Զարոյի հետ, բայց աչքս դուրսն էր... ուրիշների կանանց վրայ էր... Սրբ ժամանակ էի ունենում, մա՛ն նաւանդ կիրակի օրերը դիւղում կանգնում էի մի այնպիսի՝ տեղ, որտեղից անցնում էին աղբիւրից ջուր կրող հարսներն ու աղջիկները, եւ նրանց օրորուն երաստաններին էի նայում։ Յետոյ տուն էի գալիս եւ մեր Զարոյի հետ կուռում... միշտ է ես շէի շնանում մարմնով, բայց շնանում էի ցանկութեամբ... Տէր հայր, աղօթի՛ր Աստուծոյ, միջնորդի՛ր ինձ համար նրա առջեւ, որ նա ինձ թողութիւն շնորհի եւ իմ հոգին չայրի դժոխքի բոցերի մէջ...

Յանկարծ, տէր Խորէնը ցնցուեց ներքին մի խռովքից, երբ յիշեց բարոյական սայթաքման իր արարքը։

2

Այդ երեք տարի առաջ էր, Այդ ժամանակ նա թէեւ աշխարհական, բայց արդէն ամուսնացած էր։ Մրազըրում էր

աշնանը քահանայ ձեռնադրուել: Այդ նրա հօր փափաքն էր, որին նա դէմ չէր: Հենց այդ տարուայ ձմեռնամուտին ժահացել էր նրա հայրը, և նրանց ընտանիքի դիւղական անտեսութեան ամբողջ ծանրութիւնը նրա վրայ էր մնացել: Բայց նա չէր վախենում աշխատանքից, ընդհակառակն, սիրում էր աշխատել: Քոստանրկու տարեկան էր, քաջաուղղ, ուժով: Նրա արիւնը միշտ եռման մէջ էր, միշտ ալեկոծ:

Այդ տարուայ ամառնամուտին, մի կէսօրուայ հանդատի պահին նա պատկել էր խոսարարի կողքին գտնուող փոքրիկ մի թփուտում և մտածում էր: Նա միշտ էլ մտածում էր: Ճիշդ է, նա քիչ կրթութիւն ստացած դիւղացի մի տղայ էր, բայց շատ կարգում էր: Նա սիրում էր իր ազգային եկեղեցին և հաւատքով էր քահանայ դասնալու: Այդ օրը նա մտածում էր, թէ ինչքա՞ն նա իր քահանայական կոչման տէքն է հանդիսանալու:

Թէեւ օրը տաք էր, բայց թփերի տակ համարեա՛ թէ դով էր: Հայաստանում ամէնից տապ եղանակներին անգամ եթէ մէկը ուսենու ստուերում է գտնուում, կարող է նոյնիսկ ցուրտ զգալ: Սակայն թփերի տակի զովութիւնն չէր պատճառը, որ նա չէր ցանկանում ելնել տեղից և վերսկսել աշխատանքը, այլ՝ հողեկան խլրտումները: Փիչ առաջ Զմբուխը նրա համար կէսօրուայ ճաշ էր բերել՝ բրինձով պրիւ և տակը դեղնաւուն ձուածեղ և կերակրել նրան դուրգութանքով: Սակայն Զմբուխը նրա սրտովը չէր: Այն չէր, որ նա չէր սիրում նրան, այլ՝ ուղղակի սրտովը չէր: Նա Զմբուխի հետ ամուսնացել էր իր հօր պահանջով: Այն ժամանակ, երբ նա և Զմբուխը փոքր էին եղել, նրանց հայրին, ինչպէս որ ստում են, զհաց են կտրել, այսինքն՝ միմեանց խոստացել խնամի դառնալ, որ Թորէնն ամուսնանայ Զմբուխի հետ: Նրա հայրը իր խօսքի տէր մարդ էր և Զմբուխին հարա ուղեց, դիտնալով հանդերձ, որ աղջիկը իր տղայի սրտովը չէ: Նա էլ չուզեց հակաճատել հօրը:

«— Թորէնս, — մի օր ասաց հայրը,

— ճիշդ է, որ Զմբուխը դեղեցիկ չէ, բայց նա լաւ ընտանիքի գաւակ է: Նրա ծնողները ազնիւ են»:

Նա լռեց, որ համաճայնութեան նըշան էր, և տեղի ունեցաւ ամուսնութիւնը:

Նա դեռ պատկած էր թփերի տակ, երբ զգաց, որ մի փոքրիկ քար ընկաւ իր վրայ: Բարձրացաւ արմուկների վրայ, շորս կողմը նայեց, բայց ոչինչ չտեսնելով՝ նորից պտակեց: Բայց նորից մի փոքրիկ քար բնկաւ նրա վրայ: Այս անգամ նա նստեց և ուշադրութեամբ շորս կողմը նայեց:

Թորէն, — լսեց նա մի տաք, կըրծալի և սիրով լեցուն ձայն:

Նա սարսույց և նստեց տեղում: Երկու թփերի արանքից ժպիտը դէմքին նրան էր նայում Զրեկը Հեղուչը:

«Ի՞նչ ևս անում այստեղ, — հարցրեց նա և անմիջապէս մոտացաւ, որ Հեղուչն ամուսնացած կին է, որ եթէ միայն տեսնուեն, այլեւս վերջ իր քահանայական ծրարին: Վերջ Հեղուչի ամուսնութեանը և թերեւս ուղանութիւնը»:

Հեղուչը փոխանակ Թորէնի հարցին պատասխանելու՝ ինքը հարցրեց նրան.

— Զմբուխը զեա՞ց...

Թորէնը անզիտակցաբար դէտով հաստատական Նշան արեց: Այն ժամանակ Հեղուչն իր ծնկերի և ձեռքերի ափերի վրայ սողալով եկաւ և ընկաւ նրա դիւղի:

«Թորէն... Թորէն...

Նրանք միմեանց վրայ սիրահարուած էին դեռ իրենց պատանի տարիքներից:

«— Հեղուչ, ի՞նչ ևս անում... Ի՞նչ ևս անում... — աշխատելով զգաստ մընալ և երիտասարդ հարսին իրենից հեռացնել, շնջաց նա»:

Սակայն Հեղուչն անմիջապէս իր փափուկ թեւերը փաթաթեց նրա վզով և, ինչպէս կատուներն են անում, իր թաւշեայ այտը քսեց նրա մազոտ երեսին և գեղզեղեց:

«Թորէնս... Արե՛ւս... ուրախութիւնս...»

Թորէնը հալեց Հեղուչի փայփայանք-

ների սակ: Նրան Զմբուխն էլ էր այդպէս փայփայում, բայց Զմբուխի արածը դարի հաց էր, իսկ Հեղուշինը՝ գաթթոյ: Հեղուշը միակ կինն էր, որին նա սիրել էր եւ շարունակում էր սիրել:

Յանկարծ, ինչպէս հեռաւոր ու կապոյտ հորիզոնում անհետանում է կռուներին երամբ եւ էլ չի լուում նրանց կըռփանչեքը, այդպէս էլ Խորէնից հեռացան նրա պատաստութեան մտքերը: Մի պահ կեանքն ուրիշ դարձաւ, այլ հրապոյր ունեցաւ:

Հեղուշը համբուրից նրա ծնօտի վերելի մասը, այնտեղ՝ ուր մազերը նօսր էին: Նա տառայտօրէն այրուեց.

— Հեղուշ... իմ սիրած աղջիկ...

— Իմ սիրած տղայ... Խորէն...

Թփերի ստուերում Հեղուշի աչքերը փայլում էին մութ գիշերին տանիքի վերայ սիրային խաղով բռնուած մի մարդի կատուի աչքերի պէս:

Խորէնին թուաց, որ ո՛ւր որ է աղջիկը կատուի պէս կը մշաւի:

Իրենց փոխադարձ կաթողին գուրգուրանքներէ մէջ նրանք տնջում էին միմեանց: Օրը սիրային էր: Ամբողջ օրը երիտասարդը ներքին խլըտում էր ապրուել: Նրան այնպէս էր թուացել, որ հրաբուխ կայ իր մէջ: Այդ թերեւս այն բանից էր, որ վաղ առաւօտուանից լնչիլ էր հնձուած խոտերի, զետի ամի փշտաններին եղիկներին եւ արեւի ըոյրն ու ըզուելիս:

Ձախողելով իր սիրոյ մէջ Խորէնի նըկատմամբ, Հեղուշը ոխ ունէր աշխարհի գէժ: Նա չէր սիրում ամուսնուն: Ուղում էր նրանից վրէժ լուծել հենց ա՛յն բանի համար, որ նա է իր ամուսինը, եւ ոչ թէ Խորէնը: Երկար ժամանակ էր, ինչ երիտասարդ այդ կինը ցանկանում էր գաղտնի հանդիպում ունենալ Խորէնի հետ: Իր եւ Խորէնի ամուսնական հանգամանքը նա շատ քիչ էր նկատի առնում:

— Գիշեր-ցերեկ զո մասին էի մըտածում, — յուզումից հեւ ի հեւ ասաց նա, ու աւելի փաթաթուեց իր սիրած տղաժամարդին:

— Ծն էլ...
— Իսկ Զմբուխաւը, — ծեփծեփից Հեղուշը, համբուրելով նրա սկանչի եւ վզի արանքը:

Խորէնը խենթացաւ: Նա ամենեւին չզարմացաւ, երբ զգաց, որ իր ձեռքի տփը Հեղուշի ծանր, ծորուն եւ տաք կոնքի վրայ է թափառում: Նա չզարմացաւ, որ տարփանջով համբուրում է իրենց դիւղի ամէնից գեղեցիկ հարսերից մէկի գեղնադոյն այտերը, լեցուն ծնօտը, արեւից խանձուած սպիտակ ու երկար վիզը...



Մօտ կէս ժամից յետոյ, Հեղուշը նստեց եւ սկսեց կարգի բերել մազերը, հազուատը...

— Հիմա զնա՛, քանի դեռ չենք տեսնուել...

— Հա: Նայիր տես ով կայ:

Նրանք երկուսն էլ շփոթուած դէմք ունէին եւ իրար երես չէին նայում: Խորէնը կիսաբարձրացաւ եւ թփերի վրայով չորս կողմը նայեց: Ամէն ուր անուշոր էր տիրում: Միայն լուում էր գետում լողացող երեխաների ծիծաղը եւ աղմուկը: Հեռուում մի կով էր բառաչում հորթակարտ:

Խորէն նստեց, ոտքերը երկարեց եւ, առանց Հեղուշի կողմը նայելու՝ ասաց.

— Ոչ ոք չկայ: Հանգստի պահ է:

— Հա՛:

— Հեղուշ, այս մեր առաջին եւ վերջին տեսակցութիւնը պէտք է լինի:

— Ինչո՞ւ: Դու էլ չես սիրում ինձ...

— Միրում եմ, եւ այն էլ շատ...

— Ուրե՛մ...

— Հեղուշ, մենք հենց հիմա մեզք դարձեցինք... Ծն չեմ ուզում, որ այն շարունակուի:

— Իսկ ես ուզում եմ:

— Անհնար է: Մենք ամուսնացածներ ենք: Դու չես կարող անվերջօրէն խաբել զո ամուսնուն, եւ ես՝ իմ կնոջը:

— Ես իմ ամուսնուն չեմ սիրում, դու էլ՝ քո կնոջը: Մենք իրար ենք սիրում:

— Լաւ, Մենք կը շարունակենք սիրել միմեանց մեր հողիներում:

— Դատարկ բան...

— Ինչո՞ւ: — Ես կենեք եմ սիրում: Ես սէր եմ սիրում: Ես ուզում եմ սէրով լեցուն կենեք ապրել:

— Հեղուշ, այն աշխարհում մեր հողիները բոցերի մէջ կ'այրեն...

— Թող փորձեն, — գլուխը ցտակոտ թափահարեց հրիտասարդ կինը, — ուրեմն նրանք դիտմամբ խանգարեցին մեր մէջը, որպէսզի մեր հողիներն այրեն... Այդ ի՞նչ արդարութիւն է սիրում, այնտեղ, վերեւում...

— Հեղուշ, դու մի փաստաբանի պէս խօսեցիր հիմա...

Հեղուշը նայեց սիրեկանին եւ ծիծաղեց: Թեւոյ իւր տեղից եւ ընկաւ նրա գիրկը:

— Խորէ՛նս, իմ լա՛ւ Խորէնս... Երիտասարդը նոյնպէս ծիծաղեց, եւ նրանց միջեւ ստեղծուած սառցեայ պատը հալեց: Նրանք նորից սկսեցին համբուրուել:

— Ես քեզնից մի տղայ եւ մի աղջիկ եմ ուզում, Խորէն... Տղայի հիմքը, զգում եմ, այսօր դրեցինք... Աղջկանն եկող տարի... լա՛ւ... Դու հողիներին մասին մի մտածիր, Դու ասացիր, որ ես փաստաբանի պէս եմ խօսում: Այնտեղ, վերեւում, մեր դատը կը պաշտպանեմ: Տղայի անունը Խորէն եմ դնելու:

Խորէնը ծիծաղեց:

— Այդ անկարելի է:

— Ի՞նչը, Մեր դատը պաշտպանե՞լը, թէ տղայի անունը Խորէն դնե՞լը:

— Ոչ, աղջիկ ունենալը:

— Ինչո՞ւ, Դու գէ՞մ ես աղջիկներին:

— Ոչ, Եկող տարի ես արդէն քահանայ կը լինեմ, եւ մենք չենք կարող տեսնուել:

— Իմ հողը չէ քո քահանայութիւնը:

— Այդպէս չէ, Հեղուշ: — Լաւ, այդ մենք գեռ կը տեսնենք...

Հիմա, խնդրում եմ գնաս:

— Հա՛, Մէկ էլ նայիր:

Խորէնը նորից թփերի վերեւով շորոկոզը նայեց եւ իջաւ:

— Մարդ չկայ:

Հեղուշը համբուրեց նրա վրը, թափեց նրա թիկունքը եւ, ծանր երաստանը դիտմամբ ցցած, անխառնաբար թփերի արանքում շորեքթաթ:

Խորէնը հառաչեց: Նա սիրում էր Հեղուշին եւ շատ: Փիշ յետոյ, երբ նա ելաւ թփերի տակից եւ գնաց վերջրեց գծրանդին՝ շարունակելու համար խոտհումքը, նայեց դէպի դիւղը: Նա ուզում էր տեսնել Հեղուշին: Իրաւ, Հեղուշը, թէեւ արդէն շատ էր հեռացել, բայց արեւի տակ, դաշտի կանաչ հենքի վրայ, դեռ երեւում էր նրա զլխի կարմրածաղիկ թալկինակը եւ զպտուտ, թէ ինչպէ՞ս ծործորում նրա փարթած մարմինը:

Խորէնի սիրտը ճմլուեց:

«Արդեօք չ'ըրաժարուե՞մ քահանայական իմ ծրարից եւ մնամ Հեղուշի մնալուն սիրեկան», մտածեց նա եւ անմիջապէս սարսափեց իր այդ մտածումից: Ծնցեց գլուխը: Մի քիչ առաջ թեքուեց եւ քաշեց գերանդին:

— Խը՛ւ, ի՞նչ:

Կանչեց եւ արտասանեց այն, որը մի տեղ կարդացել էր եւ անդիւր արել:

«Ապաշաւեա՛ դու ի չարեացդ քոյ:»

Թանկարծ, զօրութիւն զգաց իր մէջ՝ ընդդէմ մարմնականին: Այդ դեպքին չէր: Բայց հասկացաւ, որ կենեք քաղցրութիւնը ինքնահսկումի մէջ է կայանում, յաղթահարման մէջ բիրտ հակումներին:

3

Տէր Խորէնը սթափուեց իր մտքերից: Հիւանդին նայեց լիութեամբ եւ մըտածեց:

«Հօրեղբայր Սահակը սուրբ մարդ է: Փոխանակ ես նրան խնդրելու, որ նա

միջնորդի Տիրոջ մօտ, որ նա իմ դործած մեղանշանքի համար թողութիւն չնորհի, նա է ինձնից այդ խնդրում՝ իր չդործած յանցանքների համար»:

Նա ուզեց այդ մասին ասել Սահակին, բայց ամաչեց: Ելաւ աթոռից, թեքւեց հիւանդի վրայ եւ ասաց.

— Հօրեղբայր Սահակ, ես Տիրոջն այժմ պիտի աղօթեմ, որ նա զո մեղքերին թողութիւն չնորհի:

— Ծնորդակալ եմ, — նուազ ձայնով ասաց հիւանդը, եւ ուրախութիւնից նրա աչքերը լեցուեցին:

Քահանան ուղղուեց տեղում, աջ ձեռքում աղօթագիրքը բռնած, իսկ ձախում՝ նշխարատուփը: Նա թեւերը լայն բացեց, վեր կարկառեց եւ աղաղակեց պաղատագին.

— Ո՛ր Տէր... Ո՛ր Տէր, — եւ աչքերը միշտ վեր յառած, սկսեց աղօթք մտնելու:

Քահանայի այդ կեցուածքը, նրա զրաւիչ դէմքը, սիրուն բարակ ժօրուքը, նրա նեղ, սու ու կրկար կապանը, որ այնքան լաւ նստում էր նրա բարեձեւ իրանին, սթեւանի պատուհանից ներս նայող գիւղացիներին վրայ հուզեկան խոր սպաւորութիւն թողեցին:

Սենեակում կիսամութ էր: Լուսամուտի դռնում գրռած քարիդալառ ճըրպալից ճառագայթող լոյսը հանդիպելով քահանայի սեւ հագուստին եւ անթափանցիկ մարմնին, նրա եզրերով անցել էր դիմացի պատին եւ իսկ մութ գոյնով նրա կերպարը նկարել որմի վրայ: Այդ ստուե-

րը հսկայական էր: Այն երկարել էր մինչեւ առիքը եւ բեկանուել այնտեղ՝ պատի ու ցեղունի միացման գծի վրայ: Քահանայի գլուխը, վզից վեր եւ ձեռքերի վերելի մասերը նկարուել էին առատաղի վրայ այնպէս, որ կարծես նա այնտեղից վար էր նայում: Այդ տեսարանը ե՛ւ վախենալի էր, ե՛ւ խորհրդաւոր: Թւում էր, որ նա այս աշխարհից չէր, այլ մի այլ աշխարհից, որը գտնոււմ է երկրի եւ երկնքի միջեւ: Աւելի շատ երկնքին մօտիկ, քան երկրին:

— Թւում է, թէ նա մեր աշխարհից չէ, — ասաց լուսամուտից ներս նայող ներից մէկը:

— Այս աշխարհից է, բայց սուրբ մարդ է: Ես չեմ կարծում, որ այդ տղան իր կեանքում որեւէ մեղք գործել է:

— Նա երեւի հարեւանի պարտէզից խնձոր անպամ չի գողացել, — ասաց մի ուրիշը:

Տէր Խորէնի բազկատարած աղօթքը շատ էր ազդել նաեւ Սահակի վրայ: Նժրան թւում էր, որ ինքն արդէն մեռել է, եւ չնորհիւ երիտասարդ քահանայի ջերմեանդ աղօթքին՝ իր հողին արքայութեան լոյսերի մէջ է գտնոււմ, ուր սպիտակազգեստ հրեշտակները դալարափող էին հնչեցնում եւ թմբուկ հարկանում:

Աւարտելով աղօթքը, աէր Խորէնը իջեցրեց թեւերը, բացեց նշխարատուփը, կորեկի շափ նշխար դրեց հիւանդի բերանը, եւ սպա բացեց աղօթագիրքը ու կարդաց բարձր ձայնով.

«Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր...»:

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

Բ Ա Գ Ի Ն

Ա Ն Ձ Կ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ Կ Ը Ս Պ Ա Ս Ե...

Մեր համայնարանականներին Հրազդան Զէյթուն զԲագինքի խմբադուրբեան ուղարկած է ձեռագիրներու փունջ մը, որուն առաջին մասը կու տանք ստորև՝ հետատարած մտայով շոն երկուցոյ լեզուական, ուղղագրական թէ գաւառական բառերու շարք վերելագրութեան, ի հարկէ, որքան կը թոյլատրէր ձեռագիրին նկարագիրը...

Առաջին հերթին պարտ է մեզ յիշեցնել, որ լեզուական եւ ուղղագրական այս զարտուղութիւնները, որ բրբու նորութիւն կը ներկայացունին, բնաւ ալ նորութիւն չեն: Գրականութեանց պատմութեան Ժանօթները զեւ անցեալ զարու առաջին քառուղին գիտէին, որ նման արտադրութիւններ դրսեւորուած են այն կամ այն գրողին էջերուն: Քննանց քերականական սխալի եւ ռուսերէմ խօսք չեմ սիրումս ըսած է տեղ մը Պոլշին, իսկ ժամանակակից գրատէլներէն ամէն ոք գիտէ, որ այս դարուն առաջին երկու ասանմականներուն հանդէս կկան գրողները զօրգանական աստիարակում ունեին աւանդական ձեւերում, տաղաչափութեամ, յնգութ, ուղղագրութեան, շարահիւստքեան հանդէպ: Այս կը նշանակէ պարզապէս, որ նման մտայնութիւնը իրենց զարը տպրած են շատուց եւ աւելորդ է ժամ ու աւել եւս փոստել նման գրազուսնելով:

Լեզուական առեւտներէն գաւ, պարտ է մեզ յիշեցնել կրկին, որ փորձուած ու պրոմութեան արբիւր անցած է նաեւ այսպիսի գրականութիւն մը, որուն աւելցած արձանգանակներ չեն կրնար խանգաղուել մեզ: Իրբեւ գրականութիւն սեւտարուած էլ մը պէտք է ճակատագրականորէն ունենայ շարք մը արժանիքներ, խօսք՝ սոնուտե, շարժի՝ ամէն գիտք, այրէ՝ իր իսկ հայտուի: Առանց այս ստորոգելիներէն մէկուն կամ միւսին տարբերքն, գրուածք մը կրնայ ամէն բան ըլլալ, բայց գրականութիւն՝ կը տարակուսիք:

Մինք տասնմին չենք յանգած այս եզրակացութեան: Հարիւրաւոր համախոհներ ունենք չինէ, նեւ, ու հարիւրաւոր համախոհներ՝ երբեքն:

Հինէլէն, Յ. Օշական.
 Էթանի իմքնատպութիւնը կը պատրէ շաւշաւ պատրուելու տրամաչիր կամ ստոր մէջ շահ, փառք, հաշի շանդիտաղ մարդերը:

Եւրկրէն, Չ. Աւետիսեան.
 Քննանցին պէտք չէ ճգնել գրել ժամանակակից ձեւով եւ ժամանակի մաւին, այլ՝ ժամանակի՝ մէջ եւ բնական ձեւով: Նա ալ ճգնու է գրել ժամանակակից ձեւով, աւելի շատ է հնամուժ, քան ինքն՝ ժամանակը: Միտումը խօսում է այն մասին, որ բանաստեղծը գրում է սիւայն իր համար, իսկ դա չկին բան է:

Բանի ինքնատպութիւն տարբերք եղած են ու պիտի ըլլան հասանարը, ձմեռի իր համար գրողներ ալ կան ու կրնան բուսիլ նորէն, բայց թող ներուք ըսել, որ զԲագինքի փնտասը աստեղ չեն եղած, ոչ ալ մահապատանեկան տրամագրութիւններ, հանդերձը կարգապահ թոթովները: Ժամանակակիցէն, անժամանակէն, հայկական աւանդութիւններէն, երոպական հետեւակութիւններէն անդին ալ վեր բան մը — խառնուածքային բնումը ամէնէն առաջ, թրթրութեան, ոչազանք, անկրկնէլին: Զգողականը, որ էրէն կ'ենթարկէ նոյնիսկ մշաւ կուսակցութեան ամէնէն նախնական անհատը: Գմոսանք, որ իր չհասկցած զարնէր

բարձի գիրք բրած է մեր ժողովուրդը սմբողջ հաղթամեակի մը, զպտով անոր բովանդակութեան ու ձևին հետ հոգեհարազատութիւն մը, տառապանք մը, ըլն- ձանք մը, սուզում մը, նախրանք մը, իրտիան աշխարհին ու հոգեկան ոլորտներու մէջ մխացող ծովածաւալ ճնններում մը:

Այդ:

«Բնագիրն» անձկութեամբ կը սպասէ, որ ստեղծագործական աւելն ունեցող մեր տղաքը տարզ անդրադատեան բոլոր ժամանակները արհամարհան վերոյիշեալ փորձառական ճշմարտութիւններուն եւ սուանց զոր ժամանակ վատնելու բերեն հայ գրականութեան իրենց անհատականութեան անխառն բերքը...



վեց ֆաղափ

Իմ ճամբորդութիւնս վերջացաւ ազէտով՝ ա՛զէտով պէյրութի մէջ.
ճամբորդութիւնը մեծմխայն գլզում կարելիութիւն մը պէյրութի մէջ,
պէյրութի մէջ:

տամասկոս, արագ վերջիշումները —
տամասկոսը հարուածեց գիս հնաւուրց (թարշամած տախտակի գոյն)
մուշարրապիւնի
մը կրկնակի կրիտներով. մուշարրապիւններ՝ ընդլայնող տեսողութեան
քազանքը
ներսէն յաւելեալ ծաւալով մը եւ արդիւղ գայն (քափանցկութիւնը),
դուրսէն
երկաւայրի փխրութիւն մը գրելով՝ սաթէ փխրութիւն մը որ էր, առանց
երբեք ըլլալու՝ թիւ մը՝ ազպչակային, քիմքային, սուֆիզմ մը,
ուղղահայեաց
հնութիւն մը, անկարեւորութիւնը, քչութիւնը առլի կարելիութիւններով:

տամասկոս — մեծ մկկիթը
... որ տեսած էի, նկարներու . սլայտներու «վրայ», բրոֆ. Տօտին հետ՝
կ'անշարժանաբ հիմա մէկ ձեւի մը մէջ. այդ մէկ ձեւը անշուշտ յեղումի
զգացումներու, լաւդիտումին վրայ, բայց կը մնար հեռու՝ բազմապատկուած
եւ կարօտ-մեկուսի լոյսաւումներէն որ նկարներու անջատ շարանը կը բերէր.

միեւծոյն ժամանակ Յախկին նկարները բան մը փոխէին, յանկարծ
 զգացումներէն որ կը թափուէին վրաս:
 փակին կեդրոնը՝ խորխորած ծղօտի մը պէս՝ գանձատան եին շինութիւնը՝
 վերցուած բիւթիին վրայ բորինքեան սիւներուն, թօշ թօշ, հնձեց
 նայուածքս. թառը դարձաւ աչքերուս՝ երկա՛ր, երկա՛ր: փոքրիկ անկախ
 տուն մը գանձատունը՝ մզկիթի կատարեալ ֆառակուսի փակին մէջ:

տամսակաս տեսայ, մեծ շուկային մտակայքը, օսմանեան վերակառուցում
 մամուլի միւնարէներ, բռնկած սօքէն:
 երկվայրկեան մը հոն գտայ բացուիլ մը դէպի վեր ուր, հոն,
 փրկիմէր ըլլար հովանի մը՝ տուն մը կեանքիս եւ քու կեանքիդ:

ամման.— ամման քաղաք մըն է որ կը ծիրէ տարբեր կանաներով.
 մամուլատ

տարբեր ափերու վրայ կը շարժի ամման:
 քաղաք մը կայ որ վարն է, որ պիտի չիյնամ նիւզին՝
 տրնայս հացի պէս փութած քաղաք, դէպի ներս, ինքն իր վրայ, խուռներամ
 երանգներով երկակներով շոթայուած, որ դեռ արեւը կը դաբրնէ
 թափառայած տարազրի մը, ափսոսելի մը անկուռնկ անխապրիկ
 պտուենկին
 բայց իրիկուն չկայ ծնուցիչ բեկանուտ...

ուրիշ քաղաք մըն ալ կայ, ամմանի մէջ, երկրորդ մը, որ սպա է տնփարատ
 օղակառ եւ սրսկուած՝ ուր տուններէն աւելի հող (մտային նիւթ) կը
 տեսնուի:
 կը նմանի սելուիկներու հօտին, ծառի բեկորներով, Արայի լեռան
 լանջերուն,
 զիկզակ նամբում երկու կողմը: ուրիշ, աւելի հի՛ն նամբորդութեան
 մը ատեն
 դիտուած զուցէ: Քաղաքը, այսպէս, երկու է՝ խօլահեւ դարձողարձան
 երկուութիւն,
 քաղաքի մը երկուութիւնը՝ աղեղուած ծեփ: Քաղաքի սրտին մէջ՝
 կը տեսնես
 միւս քաղաքը. լման. լմանը քաղաքին: քաղաքը հազարումի մասերու
 վերածուած եւ բիրտ մասին:
 նոյն քաղաքին մէջ՝ քաղաքին՝... քաղաքներ որ կը թափառին եւ ներս կը
 մտնեն՝ — թատրոն մը՝ անցքը իրանին եւ գայթիւն. կապը տարամբատուն:

լուս անհեղուկ էլ. էյ --էն պիտի մնան, ինձի,
 արմաւենեկները. արմաւենեկներ՝ քարակ-երիզ, փայլուն,
 հասարակածային-կանաչ
 տերեւներով: արմաւենեկներ 2 անգամ աւելի երկար եւ ո՛չ մտան ամոնց,
 եզերակամ, որոնք երազներ կը բանտեն՝ ճեմաբանիմները:
 արմաւենեկներ քափա՞զ պարտիս վրայ. խոր ցաւը՝ լեռներուն մէջ
 վտանգաւոր
 ծալքեր, կերպասի հմլումները:
 վանագող արմաւենեկներ ժախէն էլանող անելամելի եւ պարզապէս
 ինքզինք ցցնող կայնումով մը. արմաւենեկներ մամուռ էտլէն հոլի
 դիմացիներուն, էյ. յու. պի:
 ծածկուած են մինչեւ կէս կուտրոնով, բարակ եւ շատ կարճ փուշերով,
 ոչոնք կը ծակեն անփայտ մարդ, մարդը, ոչինչ շարժումով մը՝ ո՛չ մինչեւ
 արիւն սակայն. ասիկա վրադ կը ձգէ տարօրինակ զգացում մը՝ կարծես
 վարդի բերք մը (թոյրէ թանձրիկ վէլուր) խածած ըլլաս:
 երբ ֆրիւտէյները կը բարձրանան, կ'ուր բլուրի մը պէս, եւ կը տեսնես
 քաղաքը
 արագ ճամբայէն, ուտիդ տակ՝ արմաւենեկները կը մնան անկաշի
 ներկայութիւն մը.
 թերեւս, նոր եկողին համար, վայրաբեղկման մը կրայիք, գիծը:

նու յորք, ջրեզրին.
 նոր ճշմաներու անտառ մը կը ծածկէ աչքը հոս. նոր հարցումներ փորագրող:
 ձեւը աստղիւն, երկա՞ր օրեր կը աշխէ կը ճգմէ գիտ անողորմ՝ դրժելու
 անցեալ
 այլեւս. պատկերներ, կայունութիւն էպէլու ամոնց սէրով մը ջիմջ եւ լու.
 դրժելու միտք մը մտնալու մղանները, միջինը, ետեւը՝ տեւը վերձ:
 վրաս հրուսող ալիւրը պատկերին, պատկերներուն խաղափն նախկին, բո՛ւն
 քաղաքին արմատաւոր:
 ջուրը ուռող տեղատարափ անձրեւին տակ, գրելու շարժելու վարկեան մը
 աս անաւոր կեանքը բաներուն. անկարեւի: ջուրին վրայ մինչեւ եեռուն
 երիզ
 մը խախտում լռայն (որ էրք գետի եզերքը բերէ՞ր):
 ջրեզրին խորը մը՝ քարուքանգ նաւահանգիստ (իբր փոքրիկ
 պատուաստի մը
 կարելիութիւնը պէլուրէն)՝ հայ թէք ճամբ, ժամգոտ. ջուրի մէջ կին
 նաւեր, ձէլե՛ր մագնաքսած. մագիթ, բուսուած՝ ճեզք եւ քարաբային նման
 նուամնս միւսին. որ երկաթը կ'ընէ ուտելի բան. լուսաթելէ խոնուումի
 ե՛ւ ասիւս,
 ե՛ւ քարի գարսուածք -- քայց բացութեամբ որ կ'ընէ գառ ինձմէ:
 կը մտածեմ՝ հոս է իսկական պատերազմը, քանի որ ի՞նչ է պատերազմը,
 եթէ ոչ ախարը մտքին, ինքն իր մէ:
 քայց ասիկա ուրիշ ախար մըն է արդէն:
 կէտօր էր. նու յորք, ջրեզրին:

բռնվեալսն — անկայուն կայան ժամանակաւոր. տարօրինակ հին բազմա-
 քաղաքակառուց շարտուած, վեստ, ինքնիր վրայ. անյատնում ներտարածում:
 քրեքէ
 քրիստոնէութիւնը ընդունած շինացիի մը երեսակայականը ունէի այն
 ատեն (').
 սկիզբն էր այս նոր կեանքիս. բռնվիտանսի՛ մէջ: այսօր, Չ հոկտեմբեր,
 քանկտան
 փոց-ի եւ անհրի միախառնումին՝ անկիւնը, յանկարծ (նլակ-ժայռեր
 քայքայ)
 կաւիքն տարածքի մը վրայ՝ ժամանակին եւ ծաւալին մէջ դէպքը վայունգ):
 յանկարծ ձեռքս պէշրութի տափըլէութիս, անգլիական վերարկուիս,
 քրպանը նետեցի՛
 մետաղէ կլոր մը գարմացուց գիս. (առաջին անգամ կը հագուէի կապոյտ
 Պտափըլէութը). հանեցի եւ նայեցայ. դեղին մետաղ մը՝ պէշրութն հոյ
 մնացած.
 աիս մէջտեղը արեւու եւ ջուրի պէս. կատարեալ ձեւով մը. տիեզերքը:
 բերքէքիլը ճամբուն, տուներուն եւ մարդոց վայրկեան մը ծիրեց
 սա բոլորակին
 շուրջ եւ վրայ՝ կարծես թէ կլորը բաները իրեն հետ ծլած եւ գծած էր:
 եին-հին փոշիներ փռնփռացին: անկիւն մը տաշչենց խանութին (մեծ
 քաղաքատուն,
 անճար) ուր նստէի ամէն օր, ես, պզտիկ, տարապայիմ տակ. խանութի
 սինին
 քով, մեզ ու հանգիստ անկիւն մը. առ պսպղուն կլորը գրպանս կ'ըլլար.
 չհաղադակ մը սա մետաղկլորը, բնակող սրտիս մէջ. կլորը ընդլայնող,
 հովանուտ վայրեր կը տանէր գիս — մզելով գիս հոտտալու եւ սիրելու
 մետաղը որ այլեւս (նորէն) իմս էր, մաս մը մարմնէս, գգացումներու
 մեղաւոր հիւսկէն մ'ըլլալուն:

մետաղը ինկաւ ձեռքէս (սխալմամբ) բայց չվերցուցի գայն. մնաց համ, կտոր
 մը աշխարհէն որ իմս էր եւ որ ժամանակը կ'ընէր հետու եւ անընդհաննի
 իր այժմէութեան եւ ներկային մէջ. կլորը փայլեցաւ վայրկեան մը օտար
 (ուրեմն իսկական) հողի լայն քացին վրայ, յետոյ, կորսուեցաւ:
 ճշանն էր, անցքին վրայ թի՛ն. հետագայ աննիշդ քայլերով:
 անբառ լռութիւն ուր գուշակել կարելի չէր՝ որ ճամբորդութիւնս պիտի
 վերջանար հո՛ն, եւ ազէտով՝ ա՛ղէտով պէշրութի մէջ:

ՀՐԱԶԳՈՒՆ ԶԷՑԹՎԵԱՆ



ՎԻՔԹՈՐ ՀԻՒԿՈՅԻ

ՎԵՐՋԻՆ ՍԵՐԸ

Երիտասարդ եւ տաղանդաւոր դե-
րասանուհի Սառա Պերնար, իր կարգին,
նուիրուեցաւ բանաստեղծին: Ինչպէ՞ս
կրնար մերթեւ Հիւկոն, սակայն այս ար-
կածախնդրութիւնը երկար չտեւեց: Հիւ-
կո կը գղջար՝ Սառա Պերնարէն դաւակ
մը ունեցած չըլլալուն համար:

28 Յունիս 1878ին, ինչպէս ամէն դի-
շեր, կը հանդիպի Պլանշին: Լուի Պլանը
եւս հոն է: Իրենց 100ամեակներուն առի-
թով օրուան նորոյթը հանդիսացող Ռու-
սոյի եւ Վալթէրի մասին երկու այրերուն
միջեւ վէճ կը ծագի: Լուի Պլանը կը
բռնէ Ռուսոյի կողմը, Հիւկո՝ Վալթէրի:
Լուի Պլանի մեկնումէն ետք, Հիւկոյի
շարժումները յանկարծ կը ծանրանան:
Ժիւլիէթ զարհուրանքով կը կրահէ այդ
պարագան: Կ'օգնեն բանաստեղծին, որ
սլակիւ կը մտնէ քունի մէջ: Յաջորդ
առտու Հիւկո ինքզինք լաւ կը զգայ եւ
Ժիւլիէթ կ'առաջարկէ անոր միասին պր-
տոյտ մը բնել: Պատյոյի ընթացքին Հիւկո
ոչ մէկ բառ կ'արտասանէ: Վերագարմին,
մտանոգ իր սիրահարին առողջութեամբ,
Ժիւլիէթ կանչել կու տայ երկու բժիշկ

եւ անոնց զաղտնաբար կը պատմէ Հիւ-
կոյի եւ կիներու յարաբերութեանց մա-
սին: Իրենց կարգին, բժիշկները կը բա-
ցատրեն բանաստեղծին, որ 76 տարեկան
տղամարդ մը քսան տարեկանի ըրածնե-
րը չի կրնար ընել:

— Իայց բժիշկ, պէտք է որ բնու-
թիւնը զիս զգուշացնէր, — զարմանքով
կը պատասխանէ Հիւկո:

Ժիւլիէթ կը խորհի, թէ միակ լու-
ծումը Հիւկոն հանգստեան դատապար-
տելն է, եւ որպէսզի ան խուսափի իր
անպատկառ որսերէն, կ'առաջարկէ Կեր-
նէսէյ պտոյտի երթալ: Հիւկո կը ջանայ
խուսափիլ: Առանց Պլանշի ի՞նչ կրնար
բնել հոն: Իայց ազգականներու պնդում-
ներուն տեղի տալով, ընթացք կ'ու տայ
առաջարկին եւ կը մեկնի Կերնէսէյ: Հոն,
չքեզ տան մը պարտէզին մէջ, բանաս-
տեղծը կը դտնենք Ժիւլիէթի կողքին բազ-
մած, շրջապատուած իր ազգականներով
ու թոռնիկներով: Իայց հայեացքը հե-
նու-հեռուներուն սեւեռած՝ կարծես կը
նայի թախծոտ եւ պատրանաթափ մար-
դու մը պէս:

Առողջութիւնը աստիճանաբար կը բարեկուտի եւ կը լծուի իր աշխատանքներուն: Ժիւլիէթ կը կարծէր, որ իր առիւծը վերջնականապէս գառնուկ դարձած է: Բայց չուտով կ'անդրադառնայ, որ սխալ է իր ենթադրութիւնը: Հիւկօ գաղտնօրէն կը թղթակցէր կիներու հետ:

Ժիւլիէթին նախանձը նախկինէն աւելի կատաղութեամբ կը վերակենդանանայ: Բո՛մաթիզմէ տառապող այս կիւնը, որ հազիւ մէկ աստիճան բարձրացած՝ շնչառպառ կ'ըլլար, կը սկսի խուզարկել տան շորս անկիւնները, այն խոր համոզումով, որ իր ծերունի սիրահարին դաւաճանութեան փաստերը այս տան մէջ կը գտնուին: Կը շրջի սենեակէ սենեակ, կը բանայ դարանները, տակնու վրայ կ'ընէ պահարանները, կը խուզարկէ նոյնիսկ ամէնէն մութ անկիւնները եւ ահա ձեռք կը ձգէ 1873ի օրագիրները, որոնք լեցուն են կիներու անուններով ու խորհրդաւոր արձանագրութիւններով: Լաց, ճիշ, երգում ու սպառնալիք կը փեղան Հիւկոյի գլխուն:

20 Օգոստոս 1878ին Ժիւլիէթ կը գրէ Հիւկոյին.

«Երկրպագութիւններով հպարտ՝ հոգիս հոգւոյդ կը դիմէ, մէջդ բնական աստուածային մարդուն եւ ոչ թէ ապականած ու շնակամ սէրերու հասարակ կուռքին, որ գում չես: Յազբամուկդ, որ կը լուսաւորէ աշխարհը, կը լուսաւորէ մանր կեանքդ: Մաքուր է արշալոյսդ, բոզ մթնշաղգ ալ պատկառազգու եւ մըլիքանկամ ըլլայ: Կեանքիս մնացած օրերուն գնով պիտի ուզի գգուշագնի քեզ տարիքիդ ամարժան որոշ սխալներէ: այս քաները ինձմէ աւելի լաւ գիտես, բայց այս իրողութիւնը պատճառ մը չէ, որ լռեմ: Ընդհակառակն, ծնրադիր կ'աղաչեմ քեզի, խղճա՛ անձիս, որ քեզ կը պաշտէ»:

Հիւկօ կը շարունակէ ստանալ նման նամակներ: Ասոնք ծոգուն առջեւ արձակուած յաւիտենական երգումներ են եւ որոնք չեն արգիլեր բանաստեղծին իր բիկունը չրջագայիլ Քորնէ Թաղին անկիւնները, ուր կը ծաղկին «սիրոյ երկտառորդ վաճառողուհիները»: Ժիւլիէթ դադարեցած կը յայտարարէ Հիւկոյի, որ



ՍԱՌԱ ՊԵՐՆԱՐ

վերջնականապէս կը բաժնուի իրմէ եւ գուրս կ'ըլլէ: Ոեւէ մէկը չի մտածեր զինք ետ կեցնելու մասին:

— Իմացա՛ր, հայր...

Հիւկօ անշարժ կը մնայ: Դրան շառաչէն ետք, պահ մը կը լռէ՝ մենաւոր ժայտի մը պէս: Ապա կը պատասխանէ, որ լսած է պատմութիւնը:

— Հիմա ք'նչ պիտի ընէք:

— Պիտի փնտրեմ զինք:

— Նոյնիսկ Պրուսիո՞յ մէջ, ուր կ'ուզէք մեկնել:

— Նոյնիսկ Պրուսիոյ մէջ:

Ապա կը վազէ դէպի աստիճանները: Ժիւլիէթ կը փորձէ խուսափիլ, բայց չի յաջողիր:

Աշունը կը մօտենայ: Ժիւլիէթ կը թուի հանդարտ ըլլալ: Հիւկոյի կրկնակի

պնդումներուն վրայ միտսին կը վերադառնան Փարիզ:

Օր մը, Ժիւլիէթի հետ խօսակցութեան պահուն, Հիւկօ զայն կը կոչէ:

— Իմ սիրելի Պլանչա...

Այս խօսքէն ցնցուած՝ Ժիւլիէթ կ'որոշէ այսուհետեւ արգելել տան մէջ Պլանչի մասին որեւէ ակնարկութիւն ընել: Այլեւս աւելորդ կը նկատէ այս նիւթը արծարծել բանաստեղծին հետ: Իր համոզումով միակ միջոցը Պլանչին հետ ուղղակի հասկացողութեան մը գայն էր: Այս ամբողջ ժամանակին ընթացքին, ան պարտականութիւն կու տայ Լանդէններու գաւկիին՝ Պերնար-Վոնտասանին լրտեսիլ Պլանչին սուած Հիւկոյի այցելութիւնները եւ օրը օրին իմացնել իրեն տեղի ունեցած անցուղաբանքը:

Վերջին հարուածը տալու համար, Ժիւլիէթ կը գիժէ Հիւկոյի փեսային օգնութեան, որ արդէն ատելութեամբ յիցուած էր իր ծերունի աներին հանդէպ: Կը պատահէր, որ անոնք իրարու հանդիպէին աստիճաններուն վրայ: Երբ որ աստիճաններուն վրայ ներքնաշապիկով տեսնէր բանաստեղծը, փեսան կը գոռար:

— Այս վիճակով նորէն ո՛ւր կ'երթաս, զգուշի ծերուկ: Ինքզինքդ բողոքներով մէջ կը կարծես: Ա՛լ կը բաւեն արտասոցութիւններդ: Հանդիստ ձգէ աղախինը... եւ եթէ նման տրամադրութիւններ ունիս՝ արտօժակը յազեցուր այս տունէն դուրս:

Հիւկօ կը փորձէր փոխադարձել իրեն եղած անարգանքին, բայց փեսան կը սպառնար զրկել զինք իր թոռնիկներէն: Այս հարուածը ծանր էր Հիւկոյի համար: Ան կը սկսի յալ, մինչ չափ ու սահմանը անցած փեսան կը լարուհակէ հալածել զինք եւ կը սպառնայ զիմել աւելի ծանր հարուածներու:

Հիւկոյի պարագաները կը գիժեն Պլանչին եւ, սպառնալիքներ գործ դնելէ աւելի՝ կը փորձեն համոզել վերջինը,

(Շար. ճախորդ թիւէն եւ վերջ)

Թէ Հիւկոյի ապրած տաղնապները անդրադարձած են իր աշխատանքներուն վրայ, ու կը հասկցնեն անոր, որ անկէ հետանալով փաստը տուած պիտի ըլլայ այն մեծ դուրգութեանքին, զոր կրնար ցուցարեւի Հիւկոյի հանդէպ:

Խեղճ Պլանչ: Բանաստեղծին առողջական վիճակը իրեն ներկայացուցած էին սարսփազրու գոյներով եւ հասկացուցած, որ ան կրնայ յանկարծամահ ըլլալ իր բազուկներուն մէջ: Յուսահատ՝ Պլանչ կը յայտնէ, թէ կը հասկընայ իրենց մտահոգութիւնը եւ կը խոստանայ այլեւս չտեսնել Հիւկոն:

1876ին՝ Պլանչ կը յօժարի ամուսնանալ էմիլ Բուրբէոյ անուն պաշտօնեայի մը հետ: Կը կարծուի, թէ ան նախապէս եղած է Պլանչի խորհրդատուն: Եւ տեսնելով մանկամարդուհիին անձկութիւնը՝ ամուսնութիւն առաջարկած է անոր:

1873էն սկսեալ՝ Հիւկօ բազմաթիւ նամակներ հասցեագրած է Պլանչին: Այս բոլորին տեղեակ ըլլալով՝ էմիլ Բուրբէոյ ձեռք կը ձգէ նամակները եւ կը սպառնայ հրապարակու խոյտուակել բանաստեղծը: Ըստ բանաստեղծին մօտիկ բարեկամներէն մէկուն՝ Բեմոն Էսքրիէի, այս առիթով Հիւկօ մեծ գուժար մը վճարած է: Պլանչ բան մը կրցա՛ւ իմանալ այս վերջին առեւտուրին մասին: Կը կարծենք՝ ոչ: Ան ծնունդ տուաւ երկու գաւակներու, մանկ մը եւ աղջիկ մը, բայց երբեք չմոռցաւ եւ չէր կրնար մոռնալ Հիւկոն: Յաճախ կ'այցելէր Լէքլիտին եւ լուրեր կը ստանար բանաստեղծին մասին:

Կը պատմեն, որ Պլանչ կ'երթար եւ կանգ կ'առնէր Հիւկոյի պանդոկին հանդիպակաց մայթին վրայ եւ երկար կը սպասէր, որ բանաստեղծը դուրս ելլէ եւ ինք կարենայ տեսնել զայն:

Հիւկոյին սիրուած ըլլալու բախտը կը մնար այն միակ լույսը, որ պիտի լուսաւորէր Պլանչի ամբողջ կեանքը՝ մինչև վերջ:

Հայացուց՝ Փ. Ճ.

Մ. Մ Ի Ն Ա Ս Ե Ա Ն

Ե Ր Կ Ա Ռ Ի Խ Օ Ս Ք



1816ի Մարտին, — խենթ ամիս, — Պոլսում ծնած մի հայ մանչուկ՝ Մտեփանոս Գազեզեան-Թերզեան, հայրը՝ լուսաւորչական, մայրը՝ կաթողիկէ, որ ունեցել է շորս եղբայր եւ երկու զոյր, 1854ի Օգոստոսին, ինն ու կէս տարեկանին, մտել է Ս. Ղազարի Մխիթարեան վանքը իր եւ ծնողների համաձայնութեամբ. «Ձանգակ գարնելու եւ խունկ ծխելու սաստիկ ցանկութիւն ունէի, — գրել է նա, — եւ իմ կողմանէս այս եղաւ յորդոր կրօնաւորելու, իս ծնողացս կողմէն՝ կը սարսափիմ ըսելի՛ տամ մէջ հաց կերող մը պակսեցրնելու ցանկութիւնն եղաւ որ գիրեմք շարժեց»:

Փոքրիկ Մտեփանը վանքում մի քանի տարի յետոյ կոչոււմ է Հմայեակ, ապա 1866ի Ապրիլին — խարելու ամիս — քսանմէկ տարեկան հասակում թուլակամօրէն ձեռնադրուել է կուսակրօն քահանայ՝ Հայր Յարութիւն Թերզեանի, թէեւ մինչ այդ, հետեւելով վանքից հրատարած իր ընկերների օրինակին, նա երեք անգամ պաշտօնապէս յայտնել էր վերակացուին տուն վերադառնալու իր ցանկութիւնը, բայց ամէն անգամ էլ յորդորները, խրատները, այս աշխարհի ինկոնսպիւններէ եւ անդրիթիմեան սպառնալիքների պատկերները յազթել էին նրա տկար կամքին:

Իր շքմբունած ողջախոհութեան ուխտն անելուց եւ ձեռնադրուելուց մի քանի տարի առաջ արգէն, գեղեցկադէմ եղբայր Հմայեակի առողջ եւ փարթեամ մարմնի ու անարատ սրտի մէջ արթնացել էր գեղեցիկ սեռի բնական, բայց նրանում բուռն հրահրուող սէրը, որն այնուհետեւ նրան հանդիստ ու դադար չի տուել եւ հողեկան հիւանդութեան աստիճանին է հասցրել երիտասարդ վարդապետին, հակառակ կրօնական, ուսուցչական ու բանասիրական անհանդիստ զբաղուածութեան: Վերջապէս, բժշկի խորհրդով, արբահայրը նրան ուղարկել է Պոլիս «օղափոխութեան», 1869ի Ապրիլին:

Նա եւ Մխիթարեան ուրիշ վարդապետներ բանադրուում են, որովհետեւ կաթողիկէ Հասունեան պատրիարքի դէմ պաշտպանում են ազգային աւանդութիւնները, 1870-1872 թթ. դասաւանդում է Բաղկեղտնի Մխիթարեան դուքիւնները: Ահա այստեղ, Ս. Ղազարի վանքում մնացած իր վարդապետ վարժարանում: Ահա այստեղ, Ս. Ղազարի վանքում մնացած իր վարդապետ մի բարեկամին հետեւեալն է գրում 1871ի Հոկտեմբերի 16ին. «Իմ քշուամի ռուքեանս եւ ցառցս պատմութիւնն ի սկզբանէ մինչեւ այս օր՝ սկսայ ի գիր

առնուլ, Ոկարագրելով մորթնծայարանի հնգամեայ շրջանը եւ հաւսկ ուրեմն քահանայութեամ վիճակի, որ յուսամ թէ վիպասամութեամ մը չափ հետաքրքրական եւ սրտաշարժ ըլլայ: Առաջին մասը որ էր տղայութեանս եւ մորթնծայութեանս պատմութիւնը, կարդացուցի Պարոնին որ, եթէ չեմ սխալի, շատ զուարմացու եւ ախարժեցաւ գրութեմէս» (նամականի, Դիւանում թղթ. Fol. 4: 1-14, Վաւ. 4:7, էջ 49): Ահա այս պատմութեան մի մասն է, որ հրատարակում ենք ստորեւ: Ասում ենք «մի մասը», որովհետեւ ամբողջութեամբ չի պահպանուել դիւանում, որ այժմ Շուէդիայի Գէօթեբորգ քաղաքի համալսարանի գրադարանում է եւ շատ թղթեր, մինչեւ իսկ հատորներ է կորցրել (թղթ. 8:0 1-16, Վաւ. 18:14. տե՛ս «Բազմավէպ», 1983, 1-4, էջ 39-96, «Նորայր Ն. Բիւզանդացու կեանքը, հրատարակութիւնները եւ դիւանի ցանկը» մեր յօդուածը):

Մ. Ղազարի Միտրանութիւնը 1873ի Յուլիսի 30ի որոշմամբ իրենից «անջատում» է Հ. Յարութիւն Թերզոնցին, որը Փարիզում ինքնաբերաբար աշխարհականանում է նաեւ արտաքինով եւ Նորայր Ն. Բիւզանդացի նոր անունով: 1881ի Յունիսին Պոլսում ամուսնանում եւ երջանկանում է շուէդուհի Մելմա Յակոբսոնի հետ, որին ծանօթացել էր Փարիզում 1876ից յետոյ: Մա Շուէդիայի արքունական լուսանկարչուհին էր, ծաղումով եւ կրօնքով հրէշուհի, բայց Նորայրի հետ ամուսնանալու համար ժկրտում է հայ կաթողիկէ. եւ ամուսնութեան կրօնական ծէսը կատարում է Պոլսի հայ կաթողիկէ եկեղեցիներից մէկում: Չորսը քնակութիւն է հաստատում Ստոքհոլմում, տիկին Նորայրն անդաւակ մահանում է 1899ի Մարտին: Նորայրը տեղափոխում է Վեննայի 1903ի վերջաւորութեանը եւ այնտեղ կնքում մահանացուն 1915ի Դեկտեմբերի 25ին: Մահուանից մի քանի տարի առաջ, իր դրամական ունեցուածքը, որ կնոջից էր ժառանգել, հարուստ գրադարանը եւ անտիպ բոլոր աշխատութիւնները կտակում է շուէդական կանանց բարեփոխական մի կազմակերպութեան, որ կտակի համաձայն՝ 1924ին Նորայրի անիւնը Վեննա-տիկից փոխադրել է տալիս Ստոքհոլմ՝ հանդուցեալի իսկ կառուցել տուած դամբարանը, սիրեցեալ կնոջ կողքը:

Նորայրի այս եղակի գրուածքը, թէեւ կիսատ, մեր հրատարակելու միակ ու միակ զրգապատճառը եղան նրա յառաջարանի առաջին երկու սարքերոյթներէ մէջ այտայայտուած մտքերը, որոնց մասին շատ լրջօրէն պէտք է մտածեն այն ծնողները, որոնք, ինչպէս փոքրիկ Ստեփանի հայրն ու մայրը, պատրաստում են խիստ պատասխանատու եւ իրենց մի գուռակի ամբողջ կեանքը անօրինոց կենսական որոշում կայացնելու, եւ ոչ միայն կրօնական ասպարէզում: Իսկ ինչ փերաբերում է Նորայրի կամ Հայր Յարութիւն Թերզոնցի հոգուն, ապա յիշեցնում ենք նրա տխուր պատմութեան յառաջարանի հետեւեալ խօսքերը. «Ապաւոյլ եմք որ երկմայիմ քմակարանիմ մէջէն շարկամայ պիտի մեզի այն սիրիլի եւ իւղցր հագիմ որ քովամդակ կիմացը մէջ քարկութեամ կիրքի համըցած չէր, տեսնելով որ իւր գաղտնի յիշատակարանները ի յոյս կ'իլնեն տասնամեակներ յետոյ՝ ծնողները եւ ապագայ ծնողները խորհրդածութեան նիւթ դառնալու համար:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

18 Յունուար 1985
Փրանսիա

ժընևի համալսարան

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Կը գտնուի՞ն աշխարհիս վրայ այնպիսի չարասիրտ՝ մամուռնդ թէ ամ-
 սիրտ ծնողք որ կենաց ապրուստը ճարելու համար չեն խղճեր իրենց գե-
 դեցկաճայն զուակները պզտիկուց մերհիմացնել, եւ մեծ մայրաբազաճնե-
 րու քաւորոններուն կամ Էսեստեան մատրանը վամառելով գտնումք՝ իրենց
 համար դիւրին քայց պժգալի շահու մը դուռ կը բանան: Ըստ մեզ՝ հասա-
 րակաց կարծիքը այդպիսի գագաններու կարգը շարելու էր Յաւել այն ծնող-
 քը որ քագմաթիւ հոգիներ կերակրելու հոգէն ագատելու համար՝ ճորարող-
 քոջ հասակի մէջ եթէ ազդիկ է՝ կուսաստան, եւ եթէ մանչ՝ վամք մը խրկելով
 ըռնի կը գրկեն գանձմէ միւս վայելիքներէն. ոմամք ճաւել անմարդաբար կը
 կարծեն իսկ որ Աստուծայ հանայակամ Ուրէր մ'ըրած են. ահաւո՞ր սփիր(1):

Հայրե՛ր, մայրե՛ր, կարգացէ՛ք այս խեղճ պատմութիւնը գոր գրած է
 տղակուց միմչելու իւր մտեր դժբաղդութեամբ ապրած երիտասարդ մը, ու-
 րուն երկինք տուած էին անգուք ծնողներ: Եթէ դուք ալ ո՛ր եւ իցէ մարդ-
 կային շահու համար հեռացուցած էք ճովեքնէդ ձեր որդուց մէկը, որ հիմա
 կը հեծէ իւր շղթաներուն տակ կամ շատունց իցած է սեւ հողուն ծոցը, գնա-
 ցէ՛ք պահուրտելու խաւարտչին շտեմարաններու մէջ, վասն զի անարժան է՛ք
 մարդկային ընկերութեան մէջ երեւնալու. իսկ եթէ գուկներնէդ որը դեռ
 խանձարուրմ է, որը ճոր ոտք ելած եւ որը տակաւին հնգամեայ կամ վեցամե-
 անայ, զգոյշ կեցէ՛ք որ չըլլայ թէ անանց ձեր որդւոյն կատարեալ ճանաչման
 եւ հաւանութեանը մետէ՛ք գայն հեռաւոր անապատի մը ամայութեան մէջ.
 պատճառ ըլլա՛ք իրեն թշուառութեանը եւ դուք ալ խղճի որդէն կրճուելով
 դառնութեամբ կմե՛ք օրեյմիդ:

Անակնկալ քայտ(2) մը ծանօթացուց եւ ապա բարեկամացուց զիս
 պատմութեանս տարաքայտ դիւցազին հետ: Մեր առաջին տեսութեան ժա-
 մանակ հագիւ Բանուտօր տարուան կար Ուս, եւ այդ տղերս գրած ա-
 տենս՝ վեց ամսէ ի վեր կը մեքէ դալարներով եւ անթառամ ծաղկներով գար-
 դաբուած հողակոյտի մը մերքեւ: Դիւրին է որոշել իւր գրուած տեղը Ֆերի
 գիւղի հողվարձին անթիւ գերեզմաններուն մէջ. անպահոյճ քար մը քուն
 վրայ ձսկի տառերով փորագրուած են Ե. Յ. իւր անուան սկզբագիրքը,
 երկու սրտառույ տողերը. տապանաճարին զյախր սեւ փայտէ խաչ մը տրն-
 կուած քուն մէջտեղն գամուած է պարկեշտագեղ կուսի մը յափշտակիչ դեմ-

(1) Մատիտով՝ զգարհուրծի պարծանք:

(2) Մատիտով՝ զգիպուած:

Քին լուսանկարը եւ դեղձուն մագերու խոպոպի՛ք մը: Եկեղեցւոյն կամացը հաւեմատ հարկ եղաւ իւր մէկհատիկ սիրած աղջկանն յիշելիքները գնել իւր գերեզմանին վրայ, որպէսզի սփոփուի իւր այրիացեալ ստուերը: Բարձրա-
 հասակ էր նա, սեւայօմ, ունայուի, ազնուական եւ վայելուչ գծագրութենէն յայտնի էր սրտին փափկութիւնը, քիչ մը մտուտ պոկունքներ, որոնց վրայ ասոն ասոն կը ծնանէր տխուր ժպիտ մը, նշանական նայուածք մը, աւելի նշանական նախատ եւ գլխու ձեւ: Ո՛ր գիտէ ո՞րչափ աղքատն է մագեր պիտի նա եթէ հագած չըլլար եկեղեցական պարեգօտը. եւ նայն իսկ այդ գգեստին տակ, որ հիւսա ընդհանրացեալ (եւ թերեւ ոչ յանիրաւի) ամենու համար գար-
 շելի եւ խորշելի գգեստ մը հոյած է, քանի՛ քանի՛ հարսնացու օրիորդներ չեն նշմարած իւր գեղեցիկ աչքերուն մեղմ եւ անոյշ նայուածքը եւ չեն ըսած իրենց սրտին ծածկութեանը մէջ. «Ո՛հ, եթէ դո՛ւ ըլլայիր ամուսինս»:

Մահուանէն ետքը գտանք իւր թղթերուն մէջ առաջիկայ գրուածքս գոր անշուշտ ինքը հրատարակելու մտօք գրած չէր եւ լակ վերնագրեր էր *Իմ պատ-
 մութիւնս*, առանց յատարանի եւ ծանօթութեանց: Ապահով եմք որ երկ-
 նային բնակարանին մէջէն չբարկանայ պիտի մեզի այն սիրելի եւ քաղցր հո-
 գին որ բովանդակ կենացը մէջ բարկութեան կիրքը նանչցած չէր, տեսնելով որ իւր գաղտնի յիշատակարանները ի յոյս կ'ընեն. եւ իրեն ուրուականին հա-
 մար ալ անկէ աւելի մեծ մխիթարութիւն չկրնար ըլլալ երբ գայուն սրտեր կարդալով իւր թշուարութիւնները արցունք մը կաթեցնեն միմաւոր քարին վրայ, արցունք մը գոր մահուան ծաղկները շատ աւելի կ'ախարժին եւ կը փնտռեն քան թէ գարնանային անուտեան ցօղը:

ՏԻԿԻՆ ՆԱԶԵՆԻԿ ԷԼԻՉԱՊԵՆԱՆ

1871 Օգոստոս

Ն. Բ Ի Ի Զ Ա Ն Դ Ա Յ Ի

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Ա

*Մնած եմ Կ. Պօլսոյ Պերս արուարձա-
 նը 1845ի մարտ ամսոյն հը: Հօրս հաւը
 Հայաստանի գիւղէ մըն էր ուր կ'ըսեն թէ
 մինչև հիմա իր մականունը կրող ազգա-
 կաններ կան: Հայրս շատ Պօլսեցոց սո-
 վորութեան համեմատ յառաջ զնացած
 տարիքի մէջ ամուսնացած է մօրս հետ,
 որ Միջազեղցի չափաւոր ընտանիքէ ազ-*

*ջիկ մ'էր, եւ իջմիածնի կաթողիկոսի գլու-
 կէն անցած էր Հոռովմայ պապին դիրկը
 նախանձայոյզ վարդապետի մը ջանքովը,
 Ձորս եղբայր եւ երեք զոյր ունիմ (վեր-
 ջին զրոյս ծնած ժամանակ ես վանքն էի).
 իսմէ մեծ զոյր մը եւ եղբայր մը կան.
 մէկկայնոնք ամէնքն ալ քան զիս կրտսեր
 են: Կը յիշեմ որ ի տղայութեան նոր ըզ-
 դեստ հաղնիլ եւ զարդարուիլ շատ կը սի-
 բէի, եւ ամէն օր քանի մ'անգամ հայել-*

ւոյն առջին անգամ մագերս պիտի ջրէի եւ խնամով ճեղքէի: Ընտանիքս յիշեցուցին ինձի (եւ ամենեւին չէի յիշեր) որ ստէպ կ'ըսեմ եղեր նաղելով թէ փեսայ պիտի ըլլամ: Այն առաջին տարիներէն բոլոր միտքս մնացածն ու է որ ուժգին սիրով կը սիրէի երկու քոյրերս եւ Վասիլի անունով յոյն բարեկամի մը աղջիկը, որուն հետ խաղացած եմ:

Ձեմ գիտեր թէ ինչէն մտքիս մէջ տեղի ունեցաւ վանական քահանայ ըլլալու մտածութիւնը: Գիտեմ միայն որ մեր տունը եկող գնացող քահանայք եւ քանի մը բարեպաշտ ազգականք կը խօսէին առջեւ եկեղեցական կենաց քաղցրութեան եւ առաւելութեանցը վրայ, թէ ի՞նչ պէս անուշ բան է երբ տիկնայք եւ օրրորդք կուզան մեծարանքով վարդապետին ձեռքն համբուրելու, կը հրամայեն զինքը բազմոցին ամենէն կակուղ եւ հանազիրս տեղը, կը նստեցնեն սեղանին դըլուխը, հաւեղինաց համեղ պատառները եւ ամենէն ընտիր խորտիկները իւր առջեւ կը դնեն, եթէ ձեռքէ՝ սամոյր մուշտակ մը կը ձգեն կոնակը եւ այլն եւ այլն: Այսչափս յայտնի է որ ես երբ ուղեցի վանք երթալ իննուկէս տարուան էի, ընտանեաց քաղցրութեան եւ ծնողաց սիրոյն ճաշակն առած չէի, զանգակ գարնիւն ունէի, եւ իմ կողմանէս այս եղաւ յորդոր կրօնաւորելու: Իսկ ծնողացս կողմէն՝ կը սարսափիմ ըսել՝ տան մէջ չաց կերող մը պակասեցնելու մտածութիւնն եղաւ որ զիրենք շարժեց զիս տնէս, հարբենիքս եւ մատղաչ քոյրերուս զգուանքներէն քեցիլու: Երկու շաբաթ ճամբու պատրաստութիւն տեսնուեցաւ ինձի համար, եւ վերջապէս 1854ի օգոստոս ամսուն շաբաթ առաւօտ մը ուրիշ տասը տղոց հետ մէկտեղ լոյտի շողենասն դըրուեցայ որ պիտի սանէր զիս Գրիգոր Վեհտկոյ Ս. Ղազարու վանքն երթալու համար:

Բ

Այն ատենները Կ. Պօլսոյ նախազահպարտուողական Հասունի եւ Մխիթար-
digitised by

հանց մէջ հղած կուսոյն ամենէն սաստիկ ժամանակն էր: Ի Mechitarista դժոխային պարսաւագիրքը վեր ի վայր դրուած էր ոչ միայն Մխիթարեանց, հասկա նաեւ բոլոր ճշմարտասէր եւ խաղաղասէր աղայանոց միտքը. լրագիրք, առանձին հրատարակութիւնք, մանր մունր տետրակք, ծաղրական պատկերք (caricature) անձրեւի պէս կը տեղային հասարակութեան վրայ, որոնցմէ մէկըսնին ես ալ տեսած եմ ծնողացս տունը, մասնաւորապէս Մինասեան Ն. Պետրոսի դէմքը (որ Հասունին բերանը առաջին եւ ամենէն մեծ հարածը սուաւ Համազգայնոց ընկերութիւնը եւ Տրապիզոնի դպրոցը կանգնելով) եւ caricature մը որուն մէջ երկու Մաղաքեան վարդապետները, Տօն Կարաբոն եւ էջ մը գեղեցիկ ընկերութեամբ մէկտեղ կեցած էին:

Ինչպիսի՜ մտակուրութիւն, շքեմ անմատութիւն էր իմ ծնողացս բրածն որ գիտնալով Հանդերձ չէ Հասուն Մխիթարեանց վանքը փչցնել եւ աւերակներուն մէջ քզեմի տնկել կ'ուզէ, եւ որ Տօն Կարաբոնի բերնով համարձակեր էր համալխարհի առջեւ աղաղակել թէ Մխիթարեանները Տաճարական ասպատակ պէս ողջ ողջ արիւրու է, առին աքտորեցին(3) զիս անգութ թշնամիներու ամենէն սարսափելի վրէժիներու թեմանցը նշաւակ հղած եւ ի Հոռով եւ ի Պօլիս հալածեալ մենաստանը:

Նաւապետը նաւահանդիսը կեցած կը տեսնէ սպառնալից ամպերը որ կը վազվոտեն երկնիք երեսը, կը լսէ մրրկազուշակ թռչնոց ձայներն, խուճապական խափշքին կը նկատէ եւ մօտաւոր փոթորիկ մը կանխատեսելով առաջատեսները չի պարզեր եւ ծովուն անապատները չեւտւիր: Իսկ իմ հայրս եւ մայրս մինչդեռ Հասունի եւ Մխիթարեանց մէջ պատերազմը բացուած եւ զայրացած էր, դատապարտեցին զիս երկու հակառակորդոց մէկուն զբօշուս տակ մտնելու, որ արգէն խայտառակարար յաղթունած էր, եւ

(3) Գրուած է իրկեցիս բայի վերու:

երբ որ կործանէր՝ փլատակներուն ներքեւ թաղէր պիտի դիս(4) :

Տասնութից տարի վանքը կենալէ ետքը, Հրմա Կ. Պօլիս եմ եւ Հերետիկոս հերձուածող, բանադրեալ եւ կախալ ըստ լած Մխիթարեաններէն մէկն ալ ես եմ : Երբ որ ընդդէմ խղճի մտաց եւ ընդդէմ ազդութեան սիրոյն (որ կանանց սէրէն ոչ ինչ նուազ վառ եւ բորբոք է սրախ մէջ) չկրցայ ընդունիլ Հասունին բռնաւորական, անիրաւ եւ ազգատեսաց հրամանները, ահաւասիկ դարձեալ արծարծեցան առ երեսս բարեկամութեան սակ ծածկուած Հին կուռնի մոխրոտ եւ մարմրած խանձողներն, եւ Հասուն Վատիկանի բոլոր պինարաններուն կայծակները եւ նետերը տեղաց Պօլիս դանուոյ Մխիթարեանց եւ իրենց համախոհ քահանայից վրայ : Գոհուի՛ն Աստուծոյ . բանադրանքիս վրձինն հրապարակաւ եկեղեցեաց բեմերուն վրայէն կարդացողն իմ հօրաքեռորդիս եղաւ (աշակերտ Ուրբանեան դպրոցի)(5) . հօրաքոյրերս եւ քանի մը ուրիշ ազգականք որք ջերմաւոյն են ի Հասունեանութեան, չեն համարձակիր իմ ազօթքս խնդրելու եւ իմ մատուցած պատարագիս ներկայ գտնուիլ չեն կրնար, եթէ կ'ուզին զազիր քաղցկեղէ եւ բորբոսութենէ մը աշատ մնալ : ուրիշ հօրաքեռորդի մը որ ո՛չ ջերմ է եւ ո՛չ ցուրտ, ո՛չ Աստուծոյ կողմն է եւ ո՛չ սատանային (զոնէ այն-

պէս կ'ուզէ հաւատացնել), քահանայից եւ քահանայութեան վրայ ոչ ծաղրածութիւն, ոչ նախատինք, ոչ զրպարտութիւն, ոչ մեղադրութիւն, ոչ հայհուցութիւն եւ ոչ յիշոցք թողած է որ իմ իսկ առջեւ ըսած չլլայ : Ահաւասիկ թէ որչափ կը մեծարեն եւ կը պատուեն դիս իմ աղապաններս . իսկ ծնողքս այս եղանկներուն վրայ շատ հոգ մը չեն ցուցներ, որովհետեւ իրենց մտածութիւններն ուրիշ տեղ են եւ ուրիշ տեսակ :

Գ

«Հինգ տարի նորընծայարան եւ Հինգ տարի վարժարան պիտի կենաս, ըսաւ ինձի առաջին վերակացուս, եւ անկէ ետքը կրնաս քահանայ ըլլալ» :

Ի՞նչ է այդ նորընծայարան ըսածն.— տեղ մը ուր ինը տարուքնէ մինչեւ տասնուերկու տարեկան տղաք մէկտեղ կը նստին, մէկտեղ կը պարկին, մէկտեղ կը սորվին, ուր ճարտար վերակացուն կը ջանայ (չեմ յիշեր թէ ո՛ւր տեղի վայրենիներուն նման) մտաղաւ հասակէն խեղճ եւ անմեղ տղայոց քիթը տափկեցնել, այսպիսին կամքերնին կտրել, ոչինչ լանցանքներու համար ծանր պատիժներ տալ, խստիւ յանդիմանել, դժուարին պարտքեր դնել վրանին, միով բանիւ զտղայն թըմրեցնել, անդրայ, վախկոտ եւ ապուշ ընել.— տեղ մը որ տնապատին մէջ անապատ եւ բանտին մէջ բանտ մ'է, ուր ոչ միայն կանայք չեն կրնար երեւնալ, այլ նաեւ ո՛ր եւ իցէ դրսէն էրիկ մարդ, եւ ոչ իսկ վանքին ուրիշ վարդապետները . ուր տղայն իր թմրեցնող վերակացունին եւ թմրած ընկերներուն երեսէն զատ ուրիշ երես չտեսներ, ուր ողորմելին անվարձ ստրկի պէս ամառ ձմեռ ամէն շաբաթ կ'աւելէ, կը սրբէ, կը մաքրէ, կը փայլեցնէ իրեն ընդարձակ բնակարանը, ազտեղի թաշկինակներն եւ զուբպաններն կը լուանայ եւ կը կարկտէ խոնարհութեան եւ աղքատասիրութեան վարժերու համար.— տեղ մը ուր տասնուհինգ կամ քսան պատանեաց մէջ հազիւ երբեք կը

(4) Աստի Հասունեանը (1800-1884) եղի է Պօլիս եւյ կաթողիկէ պատրիարքը : 1850ին Յրա յանդձած «Հասունեան կուսակցութիւնը» դատաւարանական պայտար է մղում էրմիանի եւ Կ. Պոլիսի պատրիարքարանի գեմ առանց միջոցներ խորտակում : 1870-ական թթ. պայտարը պատկանի եւ ցեցի է պալատեայութիւնը : Նրա դէմ մայրիկ եւյ կաթողիկէներ եւ Մխիթարեան վարդապետներն են դուրս եկի, որովհետեւ վտանգւած էին մայրիկ լիզում եւ ազգային տանգութիւնները : Պայքը վերջնապէս Յրամ կանչում է Հոռմ անվերադարձ :

(5) Հ. Գարեգին Ջորրանեանն է, Ս. Ղազարի Մխիթարեան վորդապետ, ակամուար քաղաք, Հայկական Հին դպրութեան պատմութեան (ԾժԳ դար) եւ Մասնեազարան Հայկական թարգմանութեանց մեծարժէտ աշխատութիւնների ներկայացուցիչ :

պատահի որ երկու հոգի իրարու հետ սերա սէր եւ մտերմութիւն ունենան, վասնզի ամէնքն ալ իրարու վրայ լրտես դրուած են եւ հետեւաբար իրարմէ կը զգուշանան եւ կը խորշին:— Եւ զի ուր Կ. Պօլսէն, Կարինէն, Տրապիզոնէն, Մուշէն, Խորաշուրէն, Իպաշվալովէն, Խըրիմէն տղայք կը ժողովուին առանց զիրար սիրելու, որպէսզի օր մ'ալ քահանայ ըլլալէն ետքը մեռնին առանց զիրար արատուելու:

Իսոյ չէ. Նորընծայարանին մէջ ամէն բան սեւ, ամէն բան տխուր չէ. հոն ալ կամ ուրախութեան վայրկեաններ, եւ ղեռուհասակ արեգանները այնպիսի զըւարճութիւններ կը վայելեն զոր մէջընէն շատերը իրենց հայրենիքը եւ ոչ ալ երազնուն մէջ կը տեսնէին, ինչպէս շատ անգամ երեսնիս զարնելով կ'ըսէր վերապարտական կայ, եւ այս երկու շարքներու մէջ շորս անգամ մեծահասց սեղան կը դրուի անոյշներով եւ հաստակ կարկանդակներով: Ետքը մայիս ամսուան վերջերը զեղ կ'երթցուի եւ հինգ շարք սպասութիւն կայ ժամերգութեան ներկայ շարունակելու, առաւօտները կանուխ շեյլելու եւ ցորեկ իրիկուն մէյմէկ մաս զինի խմելու: Ասոնցմէ զատ երկու երեք շարքեր հեղ մը լիւսն ըսուայ Ազրիական ծովուն եզերքը կ'երթան, եւ զուարճութեան զլիսաւոր մասունք սեպուած են թիավարութիւն ընել, օգնել նաւավարին եւ պատու մը հասց, քիչ մը ջրախան զինի եւ քանի մ'ալ պտուղ ուտել. երկու երեք ամիսն ալ մէյմը կը պտտին Վենետիկ քաղաքը, զլուսինն անցուցած իսաւացի քահանայից ետանկիւն խոյր զըլիսարկները, որ արեւելեան ղէմքերու եւ պղտորիկ զլուսններու Ծիծաղաշարժ երեւոյթ մը կուտան:

Աւելցնենք ասոր վրայ ի լրումն ճըկարագրութեան հոգեւոր մասը, այսինքն ամէն օր երեք անգամ ժամերգութեան ներկայ գտնուիլ, ամէն օր մէյմէկ պատարագ, իսկ կիրակէ եւ տօն օրերը երկու կամ երեք պատարագ տեսնել, որ

կրօր հաշուով ընդ ամէնը շորս ժամ կ'ընէ, կէս ժամ իրիկունները առանձին մատարան մէջ աղօթք ընել, երկու շարքեր մէյմը իրատ խնդրել վերակացուէն եւ բոլոր իրատին ժամանակ ծնկան վըրայ եւ գլխիբաց, այսինքն գտանկ անուսով քուրջի կտոր մը ձեռքը բռնած կենալ, եւ վերջապէս ամէն շարք խոտովանիլ եւ հաղորդուիլ: Եթէ այսպիսի տղայք երկնից արքայութիւն լերթան եւ ամենէն կարճ համբովը, չեմ զիտեր թէ արքայութիւնը որոնցմ'ով պիտի լեցուի:

Իսկ իբրեւ ուսմունք տղաքը կը սորվին լեզուաց եւ դիտութեանց նախադրունքն, այսինքն հայերէն, զաղղիերէն եւ իտալերէն լեզուները, Թուրքանութիւն, սուրբ Գրոց եւ արտաքին պատմութիւն, աշխարհագրութիւն, քրիստոնէական վարդապետութիւն, եւ հինգերորդ տարին երկրաչափութիւն եւ ճարտասանութեան սկզբունք:

Տեղը ճանչնալէս ետքը սկսինք ուրեմն մէջի բնակչին հետ ալ ծանօթութիւն ընել:

Գ.

Չեմ յիշեր ամենեւին որ այն ատաղջին տարիներուն մէջ ծնողքս կամ ազգականներս յիշելով լացած ըլլամ եւ զիշերները ցուրտ եւ մթին խցիկիս մէջ արթըննալով ճմայրիկը տղաշակած ըլլամ: Արդէն 1856ի վերջին 6 ամիսներուն մէջ նոր վերակացու մ'ունեցանք, որ էր նոյնինքն Հ. Պետրոս Մինասեան: Այս անձն թէպէտ եւ ազգին առջեւ բաւական արդիւնաւոր անձ մը սեպուած է, սակայն կ'երեւայ թէ անանկ հրաման ատած էր երկնից հրճատակէ մը որ կատարեալ կըրօնաւորներ շինելու համար պէտք էր բոլորովին թմբեցնել եւ անբանացնել իր խնամոց յանձնուած ուսանողները: Ուստի եւ հրաման հանց որ օրը տատուրկու անգամ մտքերնիս ամփոփենք եւ մէյմէկ վայրկեան սլախակն հառաչանաց նետեր արձկենք առ Աստուած, ամէն իրիկուն ընթրիքէն ետքը քառորդ մը մը-

առժամանակ ընենք, որպէսզի չուտ մարտնք կերածնիս, ամէն օր խրատ խընդրելու երթանք, ամէն ուրբաթ ցորեկուրնէ կաջը բազկատարած Ազգութեա ինձ Առաւուած ըսենք, ամէն կիրակէ սուրբական Չերմեանդութեանց վրայ աւելցընենք նաեւ ճանպարհ խաչի ըսածն ալ, շարաթը մէյմը կարգաւ խրատ տունք մեր ընկերներուն, որպէսզի վարժինք քարոզ տալու, ամէն շորեքշաբթի եւ ուրբաթ օրերը մեր արդէն նուազ կերակուրները նուազցնենք մասնացեցման համար եւ ամէն շարաթ իրեկուն մեր առաջինութեանց եւ մեղքերուն հաշիւը իրեն ցուցընենք, որ է ըսել վարժութիւնք սնափառութեան կամ կեղծաւարութեան. էթէ շփախէր որ պատերն ականջ ունին եւ զրախ շահանայից կ'իմացնեն, հաստատէր պիտի նաեւ ձաղկանքն կամ խարազանաբախութիւնը, որով մեր սենեակներն առանձնացած՝ հրեշտակաց առջեւ պիտի մերկանայինք եւ պատէինք մեր մարմնոյն խողտանք մարմնաշնոր, ցցումներն եւ ախտասէր յօթարութիւնքն: Արտերնուս մէջ ամենեւին փափաք մը կամ ցանկութիւն մը պէտք չէինք ունենալ, որպիսի ալ օրինաւոր, ներելի կամ անմեղ բան ըլլար. բնաւ պէտք չէինք զանպատիլ եթէ ձմեռը մտնինք կամ անօթի փորով սեղանէն կ'ըլլինք կամ երբ երկու շարաթը մէյմը լիտոյ երթալու տեղ երկու ամիսը մէյմը կ'երթայինք. ստեղ մը կտրսընցնէինք կամ դիպուածով պաւաթ մը կտորէինք, պէտք էր ամենուն առջեւ իբրեւ մեծ յանցաւոր մը ծնրադրել եւ թողութիւն ուզել, ո՛ր եւ իցէ հրաման կամ ո՛ր եւ իցէ ակնարկութիւն յօթարութեամբ եւ փութով պիտի կատարէինք, կամ ըստ իրեն բացատրութեանը՝ լեպ ըսէր լեպ լեպ պիտի հասկնայինք. մէկ խօսքով ինքզինքնիս գերի, որդ, անասուն, մեռած կամ անմարմին պիտի համարէինք եւ ըստ այնմ վարուէինք:

Անշուտ դիւրին չէ այսպիսի ծանր եւ անօրինակ կարգադրութիւններն ընդունելի ընել, խաղալ, խնդալ, ցաթքել, կանչել սիրող տղայոց, ենթադրեալ թէ եւ բոլորովին անձիտ եւ ապուշ ըլլան:

Անոր համար խորամանկ վերակացուն ոսկեղօծ պատեան մ'անցուց այս լեզի պատաններուն, որպէս զի արտաքին երեւոյթէն խարուելով կ'ըլլենք եւ իրեն յուսացած օրուաները քաղենք: Իր վերկացութեան առաջին երեք շորս ամիսները անպարար Բարեգու. գործարաններէն ելած գունազեղ պատկերներու, սիրուն Յիսուս մանուկներու, աղուորիկ սրբուհիներու ջրհեղեղ մը թափեցաւ վրանիս, գորոնք ձեռք ձգելու համար իրարու հետ կը մրցէինք ու ել եւ ել կ'ընէինք:

Ես եւս էի այս առաջինի եւ կատարեալ կրօնաւոր ըլլալու ջանացողներէն մէկն ալ, ներուի պարծենկոտութեանս: Ի՞նչ Չերմեանդութիւն, ի՞նչ հողեւորութիւն, ի՞նչ անձնուրացութիւն, ի՞նչ մարմնասպանութիւն էր իմ ըրածս գրեթէ շորս տարուան միջոց. որպէս առաջինութիւններ կը շահէի, եւ կ'երազէի ալ միամտութեամբ թէ կատարեալ սերովք մը կը զրոյժէ զանոնք աղամանդեայ դրշաւ կենաց դպրութեանը մէջ, մինչդեռ ես կապար գրչով կը նշանէի սուրբինութեանց տեսրակիս վրայ: Ո՛հ, երջանիկ մամանակ, երբ որ ճանճի մը թռչիլը կը տեսնէի եւ աչքս մէկզի կը պարծնէի որպէս զի շտեմնեմ թէ ո՛ր կը թաղի կամ կը ծրայէ եւ հետաքրքրութեան սխառ մեռցնեմ. առաջինութիւն. — երբ որ նստած տեղս կոնակս աթոռին չէի կրթնցնէր կամ ուղեքս դեմնէն կը կըտորէի, որպէս զի հանգստասիրութիւնս կոտորեմ. առաջինութիւն. — երբ որ լուն խայթէր մարմինս եւ թող կուտայի որ խայթէ, որպէս զի արտաքին մարդը տկարանալով ներքին մարդը զօրանայ. առաջինութիւն. — երբ որ կաթնաթանին վերջին դաշնները կամ կերակրոյն վերջին պատասանները կը ձգէի, որպէս զի որկրամոլութեան ախտէ բըծրկուիմ. առաջինութիւն: Ա՛յ ո՛ր մէկը համբիւ. բոլորովին առաջինութիւն կըտարած էի, հրեշտակի մը դէմքին պէս կը փայլէր երեսս, որբութեան անոյշ հոտ մը կը բուրէր բոլորտիքս, արնշափ որ ընկերներս ալ սկսան նախանձիլ վրաս: Բայց անգամ մը շորս հարիւր առաջի-

նութենէն աւելի նշանած ըլլալով մէկ շարաթուան ընթացքին մէջ, նախանձը փոխուեցաւ ի ծաղր եւ ի կատակ :

Ե

Ինչպէս անգարձ ճակատագիր է մարդկութեանս որ ամենէն Հաստատուն կամքերն ժամանակաւ թուլանան, ամենէն աշխոյժ եռանդներն Հետզհետէ նրւաղին եւ ամենէն պինդ կարծուած մըտքերն փոխուին եւ բոլորովին Հակառակ խորհրդներ յղանան, այսպէս ալ յանկարծ օր մը արիւնքեամբ տեսնք որ գաղղութեան ոգին սարգեր մտեր էր մեր Հրեշտակերամ խմբին մէջ եւ ոստանան սկսեր էր խարբալի մեղմէ ոմանց մըտքերը : Երկու ծայրերն իրարու մօտ ըլլալով՝ այդ ողորմելիները — ինչպէս նոյն ժամանակ կ'անուանէինք զանոնք — գերազանց սրբութենէն ինկեր տնցեր էին ի գերազանցազոյն մարմնասպաշտութիւն եւ աշխարհասիրութիւն եւ առաքինազարդ վերակացուին երեսն ի վեր կանչուբուտելով եւ ազաղակելով կը խնդրէին Հանել խորզանման Հազուտնին եւ աշխարհ դառնալ : Ո՞վ կրնայ երեսակայիլ իրեն սարսափն եւ սրտին վրայ եղած դառնութիւնը . ուրեմն ի զո՞ւր այնչափ յօգններ եւ ջրտներ էր Հոգեշահ խրատներ տալու, տեսակ տեսակ կրթութիւններ ընել տալու, գիշեր ցորեկ նորանոր ջերմեռանդութիւններ մտածելու եւ Հնարելու (մշտնջենաւոր շարժման գիւտին մըտածութենէն զատ), ի զո՞ւր մեր կռնակներուն վրայ երկինք թռչելու Համար թեւեր բուսցուցեր էր անգին տառապանքներով, եւ Հիմա քանի մը անզգամներ սրբապիղծ ձեռքով մը կը խորտակէին զանոնք, եւ երկինքը ալէլուիս երգեցող Հրեշտակաց կարգն անցնելէն աւելի վեր կը դասէին որդւոց մարդկան գեղեցիկ ազնկներուն ծոցը մտնելը . Հապա չար օրինակը որ ժանտախտի պէս պիտի տարածուէր բոլոր ընկերութեան մէջ... : Լեքալ եւ վատեալ՝ իր չար կողմն ժողովեց մնացած Հաւատարմները (անմիտ-

ները) եւ Հասկցուց տնոնց որ այդ Եզրպտոս դառնալ ուզող խտորասէր եւ խտորասէր Իսրայելացիքն նովին իսկ զործով իրենք զիրենք դժոխաց անշէջ կրակին ճիշդ մէջտեղը կը նետեն, եւ թէ յաւիտենական զատապարտութենէն չվախցողը, եթէ կ'ուզէ, սիրտ ընէ եւ անոնց շար շարիղներուն Հետեւի : Վա՛յ անձըտութեանս . թէ որ վերակացուն իր սըտապատիր եւ անոյլ յորդորներովը միտքս բոլորովին պատած ըլլար իրբն անթափանցելի պատնիշով մը, եւ ալ միացած պիտի ըլլայի այն դասապարտեալ անզգամներուն Հետ, եւ երեք տարի վանքը կ'ենալէն ետքը առօք փառօք ծննդեան երկիրս դարձած պիտի ըլլայի : Իայց ես զարմանալի Հոգեսիրութեամբ մէկդի ըլլի այն Հրապուրանաց բաժակը զոր կը մատուցանէր ինձ մէջերնէն մէկը, եւ մինչդեռ իրենք յաղթանակու կը մտնէին Պօլիս զնացող շողենաւը, եւ եւ ընկերներս անէծք կարգացինք երկինց սրբութիւններէն երկրիս զարչելի եւ ծծմբաՀոտ վիճն դլորտկող արուսեկին եւ անոր արբանեկացը վրայ եւ աւելի զորտուր ձայնով մը Հնչեցուցինք մեր սաղմոսերգութիւնքը :

Զ

Կանոնը կը ներէր տարւոյն մէջ քանի մը անգամ ծնողացմէ թուղթ ընդունիլու երկու ամիսը Հեղ մը անոնց թուղթ դրել . եւ ալ չուզելով իրաւունքս կորսնցնել, ամէն անգամ որ նամակագրութեան օրը կը Հասնէր, ուրախութեամբ ձեռքս կ'առնէի դրօշ, եւ ի՞նչ կը գրէի . արդեօք ա՞յն կ'ըսէի ընտանեացս թէ իրենց կարօտովն կը Հալիմ . արդեօք սիրոյ եւ դգուանաց խօսքե՞ր կ'ուզղէի իմ եղբայրներուս եւ սիրական ջոյքերուս . արդեօք կը զանգատէի՞ որ օրէ օր կը ծեղանայ պարանոցիս վրայ կրօնաւորութեան լուծը եւ թէ որչափ որ ալ ինտուկէս տարուան Հասակիս մէջ փափաք ցուցուցի քահանայ ըլլալու, Հիմա այն փափաքը շա՛տ տկարացած է սրտիս մէջ . արդեօք լալով կը պլլուէի՞ ծնողացս

ոսքն եւ կ'ազաւէի Հեծեծանօք որ զիս բանտ դնեն, մեռցնեն, անդամ անդամ կտրտեն, բայց միայն վանքին յուսահատ եւ անասնելի վիճակէ՞ն ազատեն... ո՛չ, ո՛չ, բիւրիցս ո՛չ: Ո՛րչափ բարձր, ո՛րչափ սուրբ, ո՛րչափ երկնային էին իմ մտածութիւններս որ ամէն անգամ չորս չորս էջ խրատ կը գրէի ծնողացս, ցուցնելով աշխարհիս ընդունայնութիւնը, կենաց արագասակ ընթացքը, արքայութեան երանութիւններն եւ դժոխոց բարկ կրակը. կը յայտնէի իմ Հանդստութիւնս եւ երջանկութիւնս, կը յորդորէի որ ինձի պէս ճշմութիւններ ընեն, ստէպ օրօթեն, ամէն օր եկեղեցի երթան, սրբաւորին աշխարհիս Հետ չկապեն եւ ինձի Համար միջնորդ ըլլան Աստուծոյ որ եկեղեցական կենաց կոչմանս մէջ Հաստատուն մնամ եւ նպատակիս Հասնիմ: Անգամ մը Ծանծաղամիտ ընկերներէս մէկը, որ նոր եկած էր Պօլսէն եւ մեր դասուն անդամակից եղած, այլ ընդ այլոյ տեղեկութիւններ տուաւ ինձի մեծ Լորօրս վրայ. եւ ահա սրբազան բարկութեան բոցը իջաւ սրտիս մէջ, յափտակեցի գլխիս եւ մեղադրութեամբ, յանդիմանութեամբ եւ սպառնալիքօք լի թուղթ մը զըրեցի իրեն, զոր եւ ե՛ւս Համեմեց Հողե-

ւոր Հայրս աղով եւ պղպեղով. թերեւս Աղբիականի ալեաց վրայէն այսպիսի փառաւոր եւ ահաւոր նամակ մը ոչ երբեք տնցած էր. բայց ո՛րչափ մեծ ցաւ եղաւ ինձի երբ լսեցի որ թուղթս աղբականներէս մէկուն ձեռքն կ'իյնայ եւ կարդալով մէջի սուտումուտ եւ անճոռնի գրածներս, խեղճ Լորօրս սիրտը չվրդովելու Համար՝ անհետ կ'ընէ գայն մէջտեղէն:

Նոյն ցամաքութիւնն եւ նոյն սրտի պակասութիւնն ի սկզբանէ անտի ծնողացս թղթերուն մէջ ալ կ'երեւայ. միայն երբ որ սոյնորականէն աւելի կ'երկնար լռութիւնս, կասկածելով որ Հիւանդացած չըլլամ, կը վրէժն ինձի. անկէ դուրս ոչ միայն սիրոյ խօսք մը չէին դրուցեր կամ գէթ զիս տեսնալու կարօտին չէին յայտնէր, այլ եւ կը յորդորէին որ չըլլայ թէ պաղիմ, չըլլայ թէ տուն դառնալ ուզեմ, թէ վանքին մէջ ունեցած Հազարամէկ վայելքներուս եւ ոչ քառորդը իմ տունս կը զանուէր, թէ օրէ օր կը սպասեն իմ քահանայութեանս ցանկալի աւետիսն առնուլ, թէ շատ երջանիկ կը Համարին իրենք զիրենք որ Աստուծոյ սեղաններուն զաւակ մը կրցան ընծայել եւ պիտի կարենան պարծիլ աշխարհի առջեւ որ քահանայ սրբի մ'ունին:

(Շար. 1)

ՆՈՐԱՅՐ ԲԻԻԶԱՆԴԱՅԻ

Ա. Ա Յ Վ Ա Զ Ե Ա Ն

Ն Ե Գ Ի Ո Ն Ք

1804 թուականին իշխան Յիցիանովը պաշարել էր Երեւանը: Թաւրի-
 զարնակ զինադործի աշակերտ փոքրիկ Մեծլումը անցաւ սահմանը ու եկաւ
 միացաւ ուռւտական դորքին: Պէտք լինէր՝ զէնք էր նորոգում, պէտք լինէր՝
 պար էր զալիս, պէտք լինէր՝ պարսկական քեարաք էր պատրաստում...: Մարտերից մէկում նա շատ ուռւ զինուորների հետ դէր ընկաւ եւ կրկին տե-
 զափոխուեց Թաւրիզ: Պիտի զլիսառէին՝ փախաւ: Բուռ զինուորների մի
 մասը՝ ով նեղացած էր բանակից, ճիպտից եւ զլուին ուտերին էր ուզում
 պահել, անցաւ ծառայութեան Աբաս-Միրզայի մօտ: Մեծլումը նորից ան-
 ցաւ սահմանը եւ Թաւրիզ զնաց միայն քսան տարի յետոյ ուռւ գետպան Ա-
 լեքսանդր Գրիբոյեդովի դեսպանական ջոկատի կազմում: Մեծլումը շուկա-
 յում մի պարսիկ վաճառականից փրկեց-խլեց դեռահաս մի աղջկայ՝ Դեզմու-
 նին, որին գերեզմարել էին Քանաքեռում ու ծախել վաճառականին ու հիմա
 նուիրելու էին Ուանի հարեմին: Պարսիկները մեծ աղմուկ բարձրացրին, դե-
 մեցին մեծ դեսպանին, բայց փաստ չուեցին, եւ Գրիբոյեդովն էլ շմասնեց
 Մեծլումին՝ չգիտնալու տալով ամբողջ իրադարձութիւնը:

Ի՞նչ է մնում մարդուց: Բուռական դեսպանութեան վրայ պարսիկ մո-
 լազար խաժամուտի յարձակումից միայն հազուադէպ երջանիկները դիակ-
 ներն էին ճանաչելի: Մեծլումից մնացել էր նրա կազակական փափախը Թեհ-
 րանի փողոցային անտէր շների բերաններում: Եւ էլի, մնացել էր ամենազըլ-
 խաւորը՝ Մեծլումի զաւակը՝ Դեզմունի որովայնում: Արդին ծնուեց Պեանը-
 բուրդի զինուորական հասպիտալում:

1850 թուականին պորուշիկ Տարիէլ Մեծլումովի Մեծլումովը Հելսի-
 սային կոլիասում ուղղական դործողութիւններ էր վարում Շամիլի զէմ: Մեծ
 իմամի դերեվարման օրը Պետերբուրգում մահացաւ պորուշիկի մայրը՝
 մեղմ ու հաշտ Դեզմունը՝ որդուն կտակելով իր միակ բաղձանքը՝ Քաղուած
 լինել հայրենի Քանաքեռում: Տարիէլ Մեծլումովը կատարեց ձօր վերջին

ցանկութիւնը. նրա աճիւնը գինուորական մենակառքով սեղափոխեց Գանա-
 շէտ ու Թաղեց նրա հարադատների կողքին: Եւ Տարիէլ Մեծլումովը յանձ-
 նրեց ճակատազրի հողմերին ու գինուորական հրամանների քամահանգըն՝
 ծառայելով ուսուական արեւելեան ծայրամասերի կեղտոտ քաղաքներում:
 Պորտ Պետրոփսկ, Դերբինս, Գրոնի եւ, վերջապէս, Ալեքսանդրապոլ: Սա
 վերջին փոսն էր նրա համար, որտեղ Մեծլումովը կորցրեց Թարմութեան
 հետքերը ու յարմարուեց Ալեքսանդրապոլի բարձրին, զէֆեր էր անում
 սեղի լոթիների հետ, կաշառք վերցնում, կուշտ ծիծաղում գէուսներէ զազ-
 րախօսների պատմութիւններից: Ալեքսանդրապոլը կարծրացրեց, ոսկրացրեց
 Մեծլումովի յօգերը այնպէս, որ կառքից նա այլեւս դուրս չէր գալիս, իր
 հոգեւոր շարժունակութիւնը պահելով երեւակայութեան համար: Բայց շատ
 անգամ ոկիցր վերջ է դառնում ու վերջից ինչ-որ զարմանալի բան է սկսում:
 Եւ ով գիտէ, թէ իր կեանքը ե՛րբ է ոլորան տալու, կամ ե՛րբ է հենց իրեն
 ցոյց տալու այնքան հետաքրքիր իր իսկ համար՝ իր միջի անծանօթին: Մի
 գմտուած հրամանով Պետրոփսկից Տարիէլ Մեծլումովին ուղարկում էին
 Պարսկաստան՝ ուսուական ղեկավարութեանը ծառայելու, եւ նոյն ծրարում ա-
 ռաջարկում մեկնել անպայման կնոջ հետ. այսինքն, ինչպէս ինքը հասկա-
 ցաւ, նրան հրամայուած էր ամուսնանալ: Եւ ամուսնանալ ընդամէնը մէկ
 շաբաթուայ ընթացքում: Մեծլումովը այ՛նչպէս, ծախ նայեց եւ հասկացաւ,
 որ դա իրական չէ, ու որոշեց զիմէլ ծայրայեղութեան: Ով բուրից քել է
 սաղում իրեն Ալեքսանդրապոլում, ով զարմանալիօրէն չի համապատասխա-
 նում իր համազգեստին, իր բնաւորութեանը, իր կրթութեանը, նա էլ կը
 դառնայ իր կինը: Այդ միտքը գրգիռ էր առաջացնում. իր եւ նման մի կնոջ
 կողք կողքի լինելը բորբոքում էր նրա հետաքրքրութիւնը, առեղծուածային
 դարձնում ամէն ինչ... Գրգռում էր նրա նաեւ այն զարմանքը, որ պիտի
 սարէր այդ ինքնուրուակ էակը... Ձորս բոյորը կանայք սովորականին մօտ
 էին, հակադրութիւնը անշան պիտի լինէր, ներքին զարմանքը՝ անկատելի,
 ու Մեծլումովը իր պատկերով խաղաքարտը պտըռեցնում էր ձեռքի մէջ եւ
 շտապում դնել սեղանին... Այն ինչ տեսաւ ինքը այդ ձանձրալի կէսօրին,
 հակադրութիւն քել էր առաջացնում, որովհետեւ աներեւակայելի գեղեցիկ
 էր աղջիկը: Բայց անսպասելիութիւնը կարող էր տակնուվրայ անել իրեն: Ու փայլուն
 Տարիէլ Մեծլումովը ներս կանչեց բակ մտած մտղ ծախող հայ բոշայ աղջկան՝
 Ջանիանին: Բայց այդ օրուայ գարմանքը Պարսկաստանում շուտով դարձաւ
 ամենաընդունուած, բնական եւ ոչ զարմանալի երեւոյթ... Տարիէլ Մեծ-
 լումովի ի կինը ղեկավարութեան զարդն էր՝ ճերմակ, կապտաշէտայ, ներքին
 դառտիարակութեամբ, որ, երեւի, Աստուայ բառարանում խիղճ, նամուս է
 կոչուում: Մեծլումովի ամենավարելիերոյ որոշումը ամենաբնականը ստաց-
 ւեց, ու նա իր համար յայտնաբերեց, որ մարդու մէջ ի սկզբանէ ծրագրուած-
 ազոցուած է կեանքի մանրակերտը, որ ընդհանուր է բոլորի համար, մնա-
 ցածը՝ կրթութիւնը, աստիճանները, ծագումը, փոշու նման են, քամին բե-
 բում է եւ քամին էլ տանում: Եւ անտոյրի փոխարէն Մեծլումովի կեանքը
 մտաւ ամենատոբարականը՝ խանդը, կարօտի վախը, թէպէտ դրա պատճառ-
 ները չկային... Խանդը Ջանիան Մեծլումը ե՛ւ պարտիկներին, ե՛ւ ուսուների
 խանդադատանքի առարկան էր... Ու նրա ամենասիրելի զբաղմունքը պա-
 րահանգէսներում եւ ճաշկերոյթների արանքում փոքրիկ մաղեր գործելն էր:
 Տարիէլ Մեծլումովի առաջնեկը՝ Անդրանիկը ծնուեց Թեհրանում, երկ-
 րորդը՝ Թոստումը՝ Թաւրիզում: Թաւրիզի Մեհիթեհ-Հասան-Պանը միշտ լեզու
 էր դտել ուսուական ղեկավարութեան հետ (դա ձեռնտու էր իր պարսկական

գործերին), որի համար նա պարտական էր Տարիէլ Մեծլումովին, ու որոշեց նուիրել նրան երկու նեզր սպասաւոր հրեխանների՝ ջոյր եւ եղբայր: Մեծլումովը վերջացրեց իր ծառայութիւնը եւ վերադարձաւ Ալեքսանդրապոլ՝ սեւաստրիթներին բերելով իր հետ: Փոքրիկ նեզրեր Ալիի եւ Լէյլայի յայտնուելը ծաղիկ հիւանդութեան պէս իրար խառնեց միասպառազ, միատարր Ալեքսանդրապոլը. կծու լեզուները պատմութիւններ էին հնարում, հետաքրքրասէրները ժամերով հաւաքում էին Մեծլումովի տան շուրջը, դիմացի ուների պատուհաններից խենթաւուն հրճում՝ տեսնելով նեզրերի միշտ ժպտացող դէմքերը...: Երեխաններին հոշում էին Մեծլումեց նեզրեր, բայց որովհետեւ նրանք միակն էին ամբողջ Ալեքսանդրապոլում եւ Հայաստանում, խիկ Մեծլումեանները շատ էին, շուտով սկսեցին Տարիէլ Մեծլումովի ընտանիքն անուանել նեզրոնց Մեծլումովներ:

1914 թուականին Անդրանիկ Մեծլումեանը մեկնեց ռուս-գերմանական ռազմաճակատ: Ռոտտոմը գորգեր էր բերում Պարսկաստանից եւ վաճառում Ալեքսանդրապոլում, այս գործը լայնացաւ ու նա վաճառատներ րացեց Թիֆլիսում ու Բաքում: Կրտսեր Մեծլումեանը աւելի ուշադրութիւն էր դարձրելով իր գործի դեղագիտական կողմին: Ալիին տարաւ Թիֆլիս, կանգնեց ընտել էր խանութի առջեւ, պարսկական գորգը վրան, իսկ ինքը ցուցադրում էր իր փայլուն պարսկերէնը՝ ֆրանսերէնը օժանդակելով պէս ցայելով արեւելեան պարզանախերի վրայ:

Առեւտրական գործը յոգս ելաւ, Թիֆլեաների նման տարրեր կողմեք թւեւոր տուեց, տարածուեց ինչպէս սոցիալիստների թռուցիկները. թռուցիկների ժամանակն էր արդէն, եւ գորգերը չէին կարգացում...: Ռոտտոմը Ալիի հետ վերադարձաւ հօր մօտ, ապա միացաւ հայ կաճաւորներին ու մեկնեց տանկական ռազմաճակատ...:

Տիկին Ջանջան Մեծլումեանը յաճախ էր տանը ընդունում իր ազգականներին՝ մաղ գործող բռնաներին, եւ նոյնքան ջերմ վերաբերում նրանց, որքան զստամեալ ամուսնուն: Տիկին Ջանջանը հանգիստ, արժանապատուութեամբ ու դեղեցիկ մահացաւ. նա Մեծլումեանի քակից դնաց այնպէս, ինչպէս մտել էր...: Ու ծեր դիդապետը երկար մղկտում էր՝ չկարողանալով իր երեւակայութիւնից անջատել լուսկեաց Ջանջանի սրբանման պատկերը: Աւելի յաճախ էր խմում՝ ընկերանալով Ալեքսանդրապոլի լոթիներէ, արհեստաւորներէ հետ...:

Նեզրուհի Լէյլային ոչ ոք չէր ուզում կին վերցնել...: Իսկ նա փարթամացել էր, աֆրիկեան արեւը դուրս էր յորդում նրա ժարմնից, պիտի ըստինքներէ, կոնքերի, սեւ մկանների ձեւով...: «Սպասիր, — ասում էր նրան Տարիէլ Մեծլումովը, — կը դան քեզ ուզելու: Կը գայ ռազմաճակատից մեր դունդը, զինուորական երաժշտութեամբ, ծնծղաներով, եւ նրանց մէջ մի ճերմակ-ճերմակ ռուս զինուոր կայ, որը քեզ ճանաչում է եւ սիրում, ու կը տանի քեզ հիւսիս, իր տունը...: Դու սովորիր ինքնաեռ դնել...: Նրա ծնողները սիրում են ինքնաեռի թէլը...»: Ու Լէյլան հաւատում էր, եւ ամէն անգամ, երբ փողոցում լսում էր երաժշտութիւն, նա դուրս էր վազում սենեակից՝ տեսնելու, թէ չի՞ գալիս արդեօք զինուորական դունդը:

Ալիին մի առաւօտ դտան քաղաքամերձ բոստանում՝ դանակը կողքը խրած: Տարիէլ Մեծլումովը Լէյլային սփոփելու համար նրան մի գունճար տուեց եւ ուղարկեց Թիֆլիս, իսկ ինքը ապրեց երկար ու, որովհետեւ շարժեւէլ արդէն չէր կարողանում, մնաց փրատակներէ տակ Լենինականի 1923 թուականի երկրաշարժի ժամանակ...:

2.

Նեղրոնց Անդրանիկը շատ յոգնած ու հիւանդ, դերմանական գազերից փշացած-սեւացած թոքերով, վերադարձաւ պատերազմից, Ալեքսանդրապոլը տոնաց հարազատների ծանր ու տխուր դտնելով, դնաց թիֆլիս եւ տեղաւորուեց Արծաթագործների փողոցի դետնափոր մի նկուղում, որ առաջ գինու պահեստ էր եղել ու էլի գինու հոտն անպակաս էր. նրա խոնաւութիւնը դինի էր բուրում, իսկ շոգ օրերին պատերը զրտնում էին գինու պղուկներով... Գուրդ Հասանը դոնապանի իր աւելնինն ու շոյլերն էր դնում դետնափոր դրան ու փողոցից իջնող աստիճանների արանքում:

Անդրանիկ Մեժլումեանը երկար ժամանակ յարմար դործ չէր գտնում: Հասանը, ամէն գիշեր իր աւելները տեղաւորելով եւ ամէն առաւօտ հանելով նրա դրան անջեւից, լաւ գիտէր Անդրանիկի վիճակը եւ մի գիշեր տոաց. «Անդրո, Գարոյի մօտ դնայ... մի դործ կը ճարի դասարխանայում»... Անդրանիկը յոգնած ժպտաց: «Թէ ամաչում ես՝ ես կ'աւետ»... — ձեռք չբաշխեց Հասանը: «Ենորհակալ եմ, Հասան...» — մտմտաց Անդրանիկը եւ հանելով մեծ կողպէքը ու, չգիտես ինչու ջգայնանալով իր վրան, անօգուտ ու անիմաստ համարելով իր ասելիքը, այնուամենայնիւ չկարողացաւ շատել. «Թոքերս ամբողջովին թունաւորուած են... Ինձ ո՞վ կը վերցնի դասարխանայում»...: Հասանը խորամանկ ժպտաց. «Ի՛նչ է՛՛՛... Հե՛յ քեզ չես սիրում, դրա համար թոքերին ես նայում... Ինչ թոք, ինչ մոք... Գու ուրիշի սխաթներին նայիր, ոչինչ տեղը չի... Անդրո ջան, դու լաւ մարդ ես, մենակ թէ՛ քեզ չես սիրում... Գու որ քեզ չսիրես՝ ուրիշը հե՛յ չի սիրի...»: «Լաւ, կը սիրեմ, Հասան... անպայման կը սիրեմ...», — արտաբերեց Անդրանիկը եւ իջաւ իր խոցը:

Ի՞նչ քուն չմտած նա արդէն մոռացել էր դասար Գարոյի մասին, գինու խոնաւութեան հոտը նախանինջային իր տխրութիւններով ասես փլուեց նկուղից աւելի ցած: Երազում բոսորագոյն մահը՝ կենդանու մարմնի մասերը առանձին-առանձին բզեքը, պոչը, պննդները, թոքերը, աղիքները դասակներով ու Հասանի ցախաւելներով շարժում էին իր վրայ. դանակից էր խուսափում, ցախաւելի տակ էր մնում ու տանջում էր թուշելու ճիգից: Նա գիտէր, որ երազ է եւ որ ինքը թուշել գիտի...: Հիմա ձեռքերը կը շարժի ու վեր կը բարձրանայ, թեթեւ, թեթեւ...: Վերջապէս թեւահարումները արդինք տուեցին ու նա դժուարութեամբ վեր բարձրացաւ ու յանկարծ վերըստին յայտնուեց իր նկուղում, կրկին թեւերը թափահարեց ու ձգուեց դէպի իր փոքրիկ լուսամուտը եւ ջանաց դուրս պրծնել լուսամուտից. գլուխը դըրսուած՝ մարդկանց ոտքերի տակ, մարմինը ներսը...: Բայց դա քիչ էր. յետոյ յայտնուեց Հասանի աւելը եւ սկսեց աւելի իր գլուխը մայթից: «Բայց գլուխը, արբ, կպած է, — արամարանում էր Անդրանիկը, — ինչպէս չի հասկանում Հասանը»: Իսկ Հասանը աւելի էր ջգայնանում իր անյաջողութիւնից եւ, ուժով, ուժով, ուժով, քսում աւելը. «Միրի՛ր քեզ, սիրի՛ր քեզ»... — առում էր նա ամէն անգամ ձգտելով ցախաւելով պոկել Անդրանիկի գլուխը, սրբել մայթը...

Անդրանիկը զրտնիքի մէջ աչքերը բացեց ուժգին թիկթիկոցից ու միանգամից նայեց պատուհանի կողմը եւ զարմացաւ, որ թիկթիկոցը դրան կողմից է: Վեր կացաւ տեղից, ետ ոչեց դրան սողնակը. դրան մէջ առտիճանների վրայ, արեւով կոլորուած, սրբապատկերի նման կանգնած էր ցախաւելը ձեռքին քուրդ Հասանը ու վերից վար ապշած նայում էր Անդրանիկին: Նայեց, նայեց ու իր զարմանքը փոխեց ժպիտով...: «Անդրո ջան, ա-

զիդ... Ի՞նչ է պատահել: «Ի՞նչ», — չհասկացաւ Անդրանիկը: «Բղաւաթ էիր»: Ու իջաւ աստիճաններով եւ, նեղ պատուհանով մայթից անդրադարձող լոյսի մէջ նստելով, սպասեց մինչեւ Անդրանիկը երեսին մի ափ ջուր ցփնեց, ծխախոտ վառեց ու սկսեց հաղնուել: Հասանք նայում էր նկուղի պատերին: «Էս պաղուալը սախաթ է... — ասաց նա, — էստեղ մի գինի ծախող կար, Շաքրօ էր անունը: Մի գիշեր քղաւեց, քղաւեց, յետոյ խելքը կորցրեց ու իրեն ջուրը դրեց...»:

Անդրանիկը հազնուեց-պրծաւ, Հասանը նրա հետ դուրս եկաւ արեւոտ փողոցը: «Էդ պաղուալում մենակ գինին կարող է ապրել... Գինին մարդուց ուժեղ է... Նա շատ բան գիտի...»: «Գինի՞ն», — հարցրեց Անդրանիկը եւ գնաց: Գնաց, ինչպէս միշտ, սկզբում վերայի քրօսայգին, որտեղ շոփուտ Իսահայի հետ էր մտերմացել: Իսահայն նստում էր քրօսայգում, բացում էր տետրը եւ նկարում գիմանկարներ: Եթէ օրեկան երեք հոգի նստէին՝ ամբողջ վաստակը իրենն էր. ծախսը թիչ էր՝ ընդամէնը մի էջ թուղթ, մի մատիտ եւ ռետին: Անդրանիկը սիրում էր նստել կողքին եւ հետեւել, թէ ինչպէս է սպիրտակ էջին առաջանում գծանկարը: «Էսօր նկարչական ակադեմիա ընկայ, — ասաց Իսահայն Անդրանիկին: — Էստեղ մի պտուտ էր գալիս, սուր մօրուքով: Յիշո՞ւմ ես...: Բանից պարզուեց, որ ակադեմիայի պրոֆեսոր է...: Նստեց, նստեց, ասաց՝ նկարիւր ինձ: Նկարեցի...: Ժողովողէ մէջ ազդանդներ են փնտրում...: Տես ինչ եմ նկարել...: Նեու...: Գիտես ի՞նչ է... մերկ կին...»: Երբ Իսահայն ցոյց տուեց գծանկարը, Անդրանիկը իր աչքերին չհաւատաց: «Մի թիչ մեծ է, բայց տես ինչ մարմին ունի... Նեղուհի է», — ասաց Իսահայն: Մերկ կինը Լէյլային շատ էր նման: Անդրանիկը մէջ մանկութիւնը ծլեց, շիւ տուեց տամուկ տխրութիւնով, եւ խառնուեց Լէյլայի մերկութեանը: Ու նրա մարմնի ձեւերը մարակեցին, շոյցիցն ու լացարեցիցն Անդրանիկին: Իսահայն զարմացած նայեց նրան. «մինչո՞ւ ես լաց լինում»: Անդրանիկը ուսերը թօթուեց: «Մա՞րդ եմ ես, — հասկանալով կարեկեցեց Իսահայն: — Ես էլ եմ մէկ-մէկ լաց լինում, երբ շատ եմ ուզում...: Մէկ-մէկ եւ մեռնելու շափ ուզում եմ...»:

Անդրանիկը ոչինչ չասաց Լէյլայի մասին: Նա կը ցանկանար, որ Լէյլայն հեռու լինէր իրենից, ուրիշ տեղ, մանկութեան աշխարհում...: Բայց երբ յաջորդ օրը Իսահայն առաջարկեց զնայ ակադեմիայի բնորդուհիներին մօտ, Անդրանիկը կամք չուներ ցաւ հրաժարուելու...: Նրանք երկար փնտրում էին բնորդուհիներին հասցէն: Իսահայն ապրաւ իր գիտցած հասցէով: Երկար փնտրուում էին եւ ոչ մի կերպ չէին գտնում...: Իսահայն շուարած կանգնեց նախկին խանութի մը դրան առջեւ, յետոյ մտածեց-մտածեց, եւ գնացին երկաթգծի այն կողմը, որտեղ դեռ միայնակ խրճիթները քաղաքին կուլ չէին զնացել, եւ շները փակեցին ճանապարհը...: Անդրանիկը փնթփնթում էր Իսահայի վրայ, իսկ Իսահայն լուռ էր...: Նրանք մուտքուտեմ, իջան գերեզմանոցի մօտի փողոցը, ու Իսահայն տխրեց. «Մայրս էստեղ է... — ասաց նա, — բոլորն էստեղ են: Արի ողորմաթառ խմենք»... — ու բացեց շիշը եւ տուեց Անդրանիկի ձեռքը: Անդրանիկը գիտէր, որ այս գերեզմանոցն իր հետ ոչ մի կապ չուներ, եւ նա մի տարօրինակ դատարկութիւն զգաց ապագայի նկատմամբ: Մի կուժ արեց եւ հիասթափուած գիմեց Իսահային. «Գնանք իմ պաղուալը»:

Իսահայն վերջապէս գտաւ տունը՝ ռուսական ոճով փայտաշէն մի լինուածք: Պատուհանի մէջ երեւաց զնառ դէմքով, թափուած մազերով մի կնոջ դէմք: Անդրանիկը զղջաց ու ամաչեց, խղճաց իրեն ու կնոջը: Իսուր բացուեց եւ շեմքին երեւաց լամպը ձեռքին զգուհ կինը ու հարցական նայեց. «Ի՞նչ էս ես քեզին երեւաց լամպը ձեռքին զգուհ կինը ու հարցական նայեց. «Ի՞նչ

կայ»: Մի պահ յայպոյն, յետոյ Իսոկան Համարձակուեց ասել, «Ես Իսոկան եմ, ժողովրդական ստուգիչից»: «Ասա...» — անտարբեր գլխի ընկաւ կիւնը: «Մանեա, — կարծես ուշացած յիշեց Իսոկան: Մանեան հայեացքը դրեց Անդրանիկի վրայ եւ մեղմ հարցրեց. «Նե՞րս էք ուզում գալ», — ու ետ ընկըրկեց՝ ճամբայ բացելով: «Ընկերս Լէյլայի ազգականն է... — ասաց Իսոկան: — Ո՛ւր է Լէյլան»: «Նա հետու է ապրում», — ասաց Մանեան դուրս գալով եւ քիչ յետոյ բերեց մի թրխիկ եւ ժպտադէմ ոռու աղջկայ: «Ո՛ւր է Լէյլան», — կրկին հարցրեց Իսոկան, եւ Մանեան դժգոհ դուրս գնաց եւ կրկին վերադարձաւ՝ այս անգամ արդէն Լէյլայի հետ:

Անդրանիկը մտածում էր, որ երեւակայութիւնն ու իրականութիւնը երբեք իրար չեն հանդիպում. երեւակայութիւնը իր համար է ապրում՝ քաղցր ու չքնաղ, ու ասես ի հեճուկս երեւակայութեան: Անդրանիկը առաւօտեան կողմ արդէն համբուրում էր Լէյլայի ձկնոտ շուրթերը՝ կուլ տալով Լէյլայի դեմքումայ թարթառով յուշերը մանկութեան եւ Ալեքսանդրապոլի մասին...: «Ճեղքմակ գինուսը չեկա՞ւ»... — լուրջ հարցրեց Անդրանիկը: Լէյլան իմաստուն ու փորձուած ժպտաց, եւ այս ժպտը ասես սպանեց Անդրանիկի մանկութիւնը:

Առաւօտեան նրանք հեռացան տները, բայց Անդրանիկը իրեն տեղ չէր գտնում, նրա մէջ թարսակալած բշտիկի նման պատուել էր տիրութեան, վշտի ուռուցքը եւ նրա բաղադրութիւնը սողոսկել ամբողջ մարմնի տարածքով մէկ: Անհանդսութիւնը մահուան ուժ ունէր, արցունքի պէս դառն էր ու ճիշի նման աղեկատուր: Անդրանիկի շուրթերին ձկնաճարպն էր եւ Լէյլայի շրթերիկի համը, որից պոկուել անհնար էր...: Անդրանիկը դէս ու դէն ընկաւ եւ կրկին վերադարձաւ Լէյլայի մօտ: Յերեկով ամէն ինչ ուրիշ տեսակ էր, ցեխոտ ու մի քիչ շարագուշակ: «Գնանք ինձ մօտ» — ասաց Անդրանիկը: «Մեկալ շարաթ, — ասաց Լէյլան: — Էլ ուր աշխատանքի պիտի երթամ»: Անդրանիկը վախեցաւ, որ նրան աշխատանքը կը խլի իրենից: «Աշխատանքի մի գնա, պէտք չէ... Ե՛ս կ'աշխատեմ... Գնանք ինձ մօտ... Բողոքովի՛ն»: Լէյլայի աչքերը լայն բացուեցին եւ մէջը մի ժպտուն զարմանք երեւաց. «Վարդուե՛նք»: «Հա», — յորացած շուրթերով, սենդոտ ասաց Անդրանիկը — «միասին լինենք, առաջուայ պէս...»: Լէյլան, հանդուրժող ու հանդիստ հայեացքով նայում էր նրան ու մտածում, յետոյ ասաց. «Լաւ... Ես կու գամ... Էլ գուան»: «Ձէ, — շտապեց Անդրանիկը, — հիմի...»: Լէյլան բաց էր ու հեշտ. «Ըսեմ մարդկանց... Իրերս վերցնիմ»: «Յետոյ, յետոյ... կը հասցնենք»:

Լէյլան գլխաշորը դրեց վրան, նրանք նստեցին առանց տոմսալաճառի տրամվայը ու եկան Անդրանիկի նկուղը: Ոչ ոք չտեսաւ նրանց, նոյնիսկ Հասանը:

1938 թուականի Մարտի 23ին Անդրանիկի պառուարում ծնունց աղջիկ երեխայ. ծնունց սուտուփուս, ասես ամաչելով իր լոյս աշխարհ գալուց: Գիշերուայ կէսին Լէյլան սկսեց զգալ, որ վիճակը ծանր է...: Անդրանիկը դէս ու դէն ընկաւ, փողոցում տրանսպորտ չկար, շուարեց, ճար չունենալուց դիմեց Հասանին. «Ո՛նց հասցնենք հիւանդանոց»: «Հիմա, հիմա...», — ասաց Հասանը, տնից դուրս եկաւ, եւ առաջին միտքը տրամվայի վարորդ Շաւոն էր, բայց մասծեց՝ «Անյարմար է անհանդստացնել նրան. մինչեւ պարկ Հասանի՝ տրամվայը դուրս բերելու համար, ուշ կը լինի», — եւ Հասանը իր բարի յուզմունքից չհասցրեց նոյնիսկ մտածել, ծննդաբերականի փողոցում ռիւսեր չկան...: Ու վազեց Անդրանիկի մօտ «հիմա, հիմա» կրկնելով: «Բան չկայ, — ասաց Լէյլան, — ես իսպառ էլ կ'երթամ...»: «Ո՛րքա՞նք էք», — զարմացաւ

Անդրանիկը եւ, ի հարկէ, կ'ուզենար, որ Լէյլան այդպէս՝ իր մեծ որովայնով, ինքն իր ոտքով գնայ, առանց որեւէ մէկին անհանդուստացնելու... Լէյլան, մի կողմից յենուելով Անդրանիկի թեւին, միւս կողմից՝ Հասանի, քայլից ամալի փողոցով: Երեքով զնուց էին, ու Անդրանիկը ուզում էր, որ մարդ չհանդիպի, չտեսնեն իրեն, որ ամէնը հեշտ լինի, լուռ, եւ ուրախանում էր, որ մօտենում են հիւանդանոցին: Հասանը քթի սակ խօսում էր, արգարացնում իր անգորութիւնը...

Երկու ժամ յետոյ հիւանդանոցում շատ հեշտ ծնուց Լէյլայն արջիկը, որին մայրը կոչից Անժելա: Լէյլան նայում էր ասաստաղին եւ մտածում, որ Աստուած կայ, որովհետեւ՝ «Լուի տարիքիս, ախր, երեխայ չի էգնի...»:

Անդրանիկը քայլում էր հիւանդանոցի շուրջը, մի անգամ նոյնիսկ կարճատեւ անձրեւ մտցնեց, թէպէտ օրը մեղմ էր, աւելի մեղմացաւ, ու Անդրանիկը սիրտը լցրեց մի խեղճ, վերաւորում ուրախութեամբ:

Պժուար, պատաս-պատաս, ասես մտից կատրներ պոկելու պէս, Մեծ-լումենանների ընտանիքը տեղափոխուց Ալավերդի: Ղեւ Անդրանիկը գնաց աշխատանքի, ապա՝ Լէյլան Անժելայի հետ: Աշխատավարձը բարձր էր, ու տնիքը առատ, բայց Անդրանիկին ամբողջ թաղածառը պղնձի հանքերի արտաշնչումից դուռնաւում էր օրէցօր, եւ Անդրանիկը որոշեց դէմքի գոյնը փոխելու համար տեղափոխուել Կիրովական: Կիրովականից նրանք տեղափոխուեցին Երեւան: Այստեղ ծնուց Կոնստանտինը՝ Անդրանիկի եւ Լէյլայնի երկրորդ զուակը:

3.

1927 թուականին Բէյրութից ներգաղթեց Ռոստոմ Մեծլումենանը, նա եկաւ այնպէս, ինչպէս ածպարարը կրկէսի արեւն է մտնում ու, ձեռքերը տարածելով, բացապանչում «ալէլյա»: Ռոստոմի «ալէլյա»ը նրա տեսած հրաշալիքներն էին, որ նա պատմում էր օր ու գիշեր, մինչեւ սովորական դարձան նրա քայլուածքի ու հոտի նման: Ռոստոմ Մեծլումենանը Բոմբէյում հոգեբեր դպրոցն էր այցելել, երկար ժամանակ ծոմ էր պահել եւ բորիկ շրջել էր Հնդկաստանի հողով: Երբ ծոմը հասել էր իր վերջնակէտին, երբ կաշին կպել էր սկիւրին, պէտք էր մի տեղ շարժուէր նրա վիճակը, ու Ռոստոմ Մեծլումենանը ընթացել էր առաջ. սովով ու համբերութեամբ ձեռք բերած հողի գիտելիքներն ու հմտութիւնը նա ցուցադրել էր ամբողջ Արեւելքում յայտնի դարձած «Թահրիբէյ» անուամբ: Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում եւ Եթովպիայում թաղուած էր եւ յաջորդ օրը յարութիւն առնում, գուրս գալիս հողի տակից ու գլուխ տալիս հանդիսատեսներին. նաեւ բորիկ ոտքերով քայլում էր մեխերի վրայ, սառը արտայայտութեամբ շիկացած երկաթ բընում ձեռքի մէջ:

Երեւանում կրկէսների վարչութիւնում նայեցին նրա արածին, նրա՝ «Թահրիբէյ» ափիշներին ու գլուխները տարուբերեցին: Ռոստոմ Մեծլումենանը այդպէս էլ չհասկացաւ, թէ ինչու չհաւանեցին իր արածը, բայց անցաւ մի քանի տարի ու ամէն ինչի բացատրութիւնը նիւթապէս տեղաւորուեց նրա մարմնի ընկնեքում, եւ հիմա ինքն էլ մի ուրիշին կը պատասխանէր այն յանձնաժողովի գլխի անիստ տմբամբոցով: Եւ Թահրիբէյը իր հմտութիւնն ու ճարտկութիւնը դորձագրեց ուրիշ տեղ: Զարբախում առն կառուցեց, քաղում՝ տնից աւելի մեծ ծաղկանոց, եւ յաճախ խաղող էր տանում Ռոստաստան

եւ ուսու կանայք էր սիրում Ռուսաստանում : «Շատ եմ սիրում, — ասում էր նա եղբորը : — Ինչքան էլ պառակեմ՝ պիտի սիրեմ, մեռնեմ էլ՝ պիտի սիրեմ... Համով են, անուշ են...» : Մի անգամ Ռոստոմը չարբախցի Համբարձումի հետ մի մեքենայ լիքը խաղող էր տարել Սուշի : Խաղողը տեղափոխել էին շուկայ, գիշերը մնացել ապրանքի մօտ, շուկայում : Մղրիդի ձայներից շված-քնած Համբարձումը կէսգիշերին վեր է կենում միղելու : շուկայի վարչութիւնը գիշերով պահակ-չնեք էր արձակում, եւ Աստուած ոչ անէր նրանց բերանը ընկնել : Չարբախցի Համբարձումը շարժւում է զուգարանի կողմը, շնորք՝ նրա վրան... : Ռոստոմի վիճակը հեշտ չէր : Համբարձումի դիակը պէտք է հասցնէր Չարբախ, խաղողը պիտի ծախէր եւ պատասխան տար Համբարձումի ազգականներին, իրեն, Հասկանար շուկայի վարչութեանն ու շնորհին... : Նա խաղողը ձրի բաժանեց շուկայ մտնող ուսու կանանց, վերջրից Համբարձումի դիակը եւ վերադարձաւ ու այլեւս Սուշի չէր դնում... : Բայց տեղում մնալ այդպէս էլ չկարողացաւ : Մաքրեի պէս խլըրտում էր աշխարհագրական գորգի մէջ՝ մէկ կապոյտ թելն էր ձգում, մէկ՝ սև, մէկ՝ գեղին... : Գնաց Սիրիւր, Հիւսիսային Կովկաս, Մերձբայթիան Հանրապետութիւնները, հետաւոր Արեւելք՝ մինչեւ Չինաստանի սահմանը : Տարածութեան ագահութիւնն էր համակել Նեղրոնց Ռոստոմին, ասես իր արեան յետադարձ պատկերը ուզում էր տարածել լայնութեամբ, ժամանակի կուտակումները հանդուստացնել... : Ու մի օր մերձաւորներին, այսինքն՝ Անդրանիկին եւ իր պառաւ սիրուհուն՝ Ջուլիէտին, յայտնեց իր որոշումը Ամերիկա դաշու մասին : Անդրանիկը կէսբերան խորհուրդ էր տալիս եղբորը, որ Հայաստանում մնայ, մի գերեզմանոցում թաղուեն եղբայրները, Լէյլան ջանք չէր խնայում, նոյնիսկ ջղայնութեամբ համոզում էր, բացատրում էր, որ նրա մեկնումը շատ վնասներ կը տայ, վնաս կը տայ եւ իրեն՝ Ռոստոմին (ծեր է, ամենամօտակ մարդիկ իրենք են, կր ստեղծեն տաքուկ օջախ, կ'ապրեն լաւալ հացով, սոխով ու պանրով : Ռոստոմի սիրած ուտելիքը), վնաս կը տայ նաեւ Կոնստանտինին, շատերը նրան խէթ-խէթ կը նային : Բայց Ռոստոմը դնաց : 1956 թուականի գարնանը նա մեկնեց Ամերիկա : Նամակներ ստացան Կրի Յորթից, յետոյ Պրովիդենսից եւ վերջին նամակը՝ Լոս Անձելոսից... : Այդ նամակից Անդրանիկը իմացաւ եղբոր ամենամեծ «հրաշալիքի» մասին : Ռոստոմը թոխմախ դէօլի գերեզմանոցում դնել էր պատկառելի մի հողամաս գերեզմանի համար, ցանկապատել եւ անգամ դրել մի տապանաքար առանց ազգանունան : Տեղը խնամքով պատրաստել էր իր եւ Մեծլումեանների գերդաստանի բարակացած շիւի համար, իսկ հիմա այն առաջարկում էր Անդրանիկին : պարզ, զործնական շեղուով սասած՝ գերեզմանը նուիրում էր եղբորը... : Անդրանիկը դեռ շուրթեց, յետոյ դնաց դուստր հողամասը եւ չգիտէր ինչպէս ընկալել : մէկ-մէկ նրան թւում էր, որ այդ գերեզմանում թաղուած են բոլոր Մեծլումեանները՝ գինապործ Մեծլումը, հեզ Գեղձուեր, Տարիէլ Մեծլումովիւր, մաղ գործող Ջանջանը, ինքը՝ Անդրանիկը... : Աննկատելիօրէն Անդրանիկը կորցրեց իր հանդիստը, այդ որոշումն տեղը ճակատագրի թուաց, ճնշեց, շարժեց նրա յոգնած արիւնը : Լինում էին պահեր, երբ հանդարտում էր Անդրանիկը, հաճելի էր իր մաշուած մարմնի եւ փասած թոքերի համար զգալ մշտական հանդստութեան վայրը, մնացած ժամանակ վախն էր սողոտկում օտից մինչեւ դուրս եւ հետապնդում էր նրան, այդ ցանկապատուած-որոշուած տեղը կալում նրա ուղեղին, ինչպէս թաց տերեւը՝ կօշիկի ներքանին : Յանկապատի երկաթէ ձողերը մարմնի մասեր էին թլում՝ ողնիք ու կողեր, ու Անդրանիկը կրկին երգում վեր էր ուզում մազլցել՝ ճաղերի միջից գուրս դաշու համար, եւ կրկին Հասանի ցախակէլը սրբում-կտրում էր նրա

զուրիւր... Վերջապէս Անդրանիկը բացուեց Լէյլային, և նրանք միասին գնացին գերեզմանը տեսնելու։ Լէյլան ընդունեց շատ հանգիստ. «Կը կարծեմ, թէ հայրիկի ոսկորները իստեղ են»...։ Նրանք երկար նստեցին տապանաբարի վրայ, մինչև Լէյլայի սեւ դէմքը տարբարունակեց խաւարի մէջ, նրա խոշոր, փայլուն աչքերը ասես անփերջանալի տարածութիւնից նայեցին Անդրանիկին։ «Երթանք», — ասաց Լէյլան, «ամուսնու թեւն ընկնելով դուրս բերեց նրան գերեզմանոցից»։ «Մենք մեր տեղն իմացանք», — ասաց Լէյլան։ Յետոյ վատ բան տեսնելով Անդրանիկի դէմքին, ասաց. «Ուշուր գէշ բան չէ, Անդրանիկ, թէ չես ուզէ, կրնանք ծախել...։ Տեղը լաւ է...»։ Աւելցրեց իր տակաւին ճերմակ ատամներով։ Անդրանիկը զարմացաւ՝ ինչպէ՞ս կարելի է ծախել մահը...

Տարօրինակ բաներ էին կատարում Անդրանիկի հետ. ինքն էլ էր զգում, որ անսովոր միտքով է ստեղծուել իր համար. նա փախչում էր որոշում անգից, դեռ միայն Թոխմախ գէջի շառաւիղով, յետոյ շառաւիղը մեծացաւ ու ընդգրկեց նաեւ իր բնակարանը, իր մահճակալը...։ Իր տունն յիշեցնում էր Քիֆլիսի գետնափոր նկուղը՝ գինու հոտով ու գինու քրտինքով...։ Մի քանի ամիս այդպէս խճճուած-կաշկանդուած պտտանքը դործելով եկաւ ու անեցիկներին յայտնեց իր որոշումը. «Կ'ուզեմ Ամերիկա գնալ...։ Թոտոսմի մօտ»։ Լէյլան չզարմացաւ, որովհետեւ հարբած էր Անդրանիկը, մտածեց՝ առաւօտեան կը մոռանայ իր ասածը, քիչ բան է ասել հարբած ժամանակ...։ Բայց առաւօտը չփոխեց Անդրանիկին։ Մէկ տարի ու երեք ամիս յետոյ Անդրանիկը իր ընտանիքով գնաց Իտալիա, որտեղից պէտք է մեկնէր Ամերիկա։

4.

Հրոճի կայարանի մօտ կայ «Վիա Պալեստրինա» անուամբ մի փողոց։ Փողոցը մուգ է և կարծես շարունակում է կայարանը։ Այնպէս է թուում, որ «Վիա Պալեստրինա» ստեղծուել է գիշերուայ համար. թուում է նաեւ, որ ցերեկները նա ընած է, և եթէ մտնես նրա նախամուտքից ներս, քեզ կ'երեւայ, որ եթէ զգոյշ, ստրերի ծայրերին շքայլես, կարող են արթնանալ պատերը, դռները, վերելակն ու աստառաղը։

«Վիա Պալեստրինա» ընդունում է բոլոր տեսակի վտարանդիներին. ընդունում է, տեղաւորում իր փոքրիկ ու յոգնած սենեակներում, որոնց անտարբերութեան աչքը նայում է բեզդեպիս հին Հրոճի խառցած մէջքից...։ Այդ սենեակներից մէկն ընդունեց նաեւ Նեղրոնց ընտանիքին։ Բայց շատ ամիսներ անցան, իսկ Նեղրոնց ընտանիքը մնաց «Վիա Պալեստրինա» փողոցում. նրանց իրերն այդպէս էլ չգտան իրենց տեղը։ Լէյլայի հետ կատարում էին մի անսովոր բաներ. նա երկար նայում էր Անդրանիկին, պատուհանին, և նրա աչքերը փոքրում էին... Մկրեց քիչ խօսել, ապա բուրբոկին լճուկից...։ Յանկարծ Անդրանիկը հասկացաւ, որ Լէյլայի գիտակցութիւնը մըթազնում է...։ Մօր միտքով զբաղուած էր Անժելան։ Ապրում էին Թոտոսմի Ամերիկայից ուղարկած դրամներով և սպասում մինչև Լէյլան առողջանար, որպէսզի մեկնելու թոյլտուութիւն ստանան...։ Կոնստանտինը կամաց-կամաց ընտելացաւ Հրոճի փողոցներին, վարժ խօսում էր իտալերէն, և փամայ ընտելացաւ Հրոճի փողոցներին, վարժ խօսում էր իտալերէն, և փողոցի տղաներն ու խանութների վաճառողները նրան կոստա էին անուանում։ Լէյլան անկիւնում դրած մահճակալից լուռ, ակնդէտ նայում էր ներս մըտ-

նոգներին, եւ երբ կեանքի նշոյլ էր երեւում նրա մէջ, նա յարձակւում էր միայն Անդրանիկի վրայ: Դիւերով բոլորը յարձարւում էին իրենց մահճակալներին, մէջքով սեղմւում պատերին եւ նայում իրար...: Բայց Լէյլայի հայեացքն ուրիշ էր. նա ոչ թէ նայում էր, այլ ասես ցանկանում էր թեւի կծիկի ծայրը գտնել. ոչ մի կէրպ չէր յաջողւում, ու նա տառապում էր...: Նրա աչքերը չէին հասկանում, թէ ինչու կծիկը ծայր չունի, ինչու ծայր չունի...


Անդրանիկը եւս արդէն սենեակից քիչ էր դուրս դալիս, անտարբեր էր դարձել ժամանակի նկատմամբ. նա ներքուստ համոզուած էր, որ Հոռոճը իրենց վերջին հանգրուանն է եւ որեւէ կողմ չարժուելու հնարաւորութիւն այլեւս չէն ունենալու...: Բայց, այնուամենայնիւ, ամէն անգամ, երբ Անժելան, որը դրադուում էր մօր հարցերով, դալիս էր բժշկիկների մօտից, Անդրանիկը միայնակ շարժւում էր. «Ի՞նչ ասացին բժիշկները...»: Անժելայի պատասխանները միշտ իրար նման էին եւ քիչ մխիթարական. այսպէս արդէն երկու տարի: Հիմա Անժելան միանգամից շարժուեց, մօտեցաւ դռանը, կերակրի կաթսան դրեց կրակի վրայ ու սկսեց խառնել: Անժելայի ձայնը եկաւ ճաշի հոտի հետ մէկտեղ. «Բժիշկն ասաց՝ հայրենիքի կարօտից է... կայ այդպիսի հիւանդութիւն»...: Դեռ սովորական թուացին Անդրանիկին նրա խօսքերը: Հազար տեսակ բաներ են ասել այս երկու տարուայ ընթացքում, հազար տեսակ դեղամիջոցներ էր ճարել Անդրանիկը սեւ շուկայում...

Անժելան արտասովոր դրեց սեղանին՝ ատանց մօր կողմը նայելու...: Գիտէր՝ մայրը մենակ է ուտում, երբ տանը մարդ չկայ...

Անժելայի կարճ շալվարը շատ փոքր էր, եւ հօրը մի պահ թուաց, թէ կերպարանափոխուել է աղջիկը, տղամարդ է դարձել...: «Հայրենիքի կարօտը», — մտածեց Անդրանիկը ու նրա ճոճաւան թուացին բառերը, ոչինչ չասող, յետոյ նայեց Լէյլային, նրա արդէն ճերմակ ու նօրայցած նեղրական գանգուրներին, սեւ գէժքին ու ժպտուն մտմտաց քթի տակ. «Աֆրիկայի»...: «Զգիտեմ, — ասաց Անժելան, — երեւի...»: Նրանք լուռ սկսեցին ուտել՝ հայեացքները արտասովոր մէջ: Միայն Կոստան էր յաճախ պատուհանի կողմը նայում՝ սպասելով տղաների կանչին...

«Ուրեմն հայրենիքի՝ Աֆրիկայի կարօտը», — կրկին մտմտաց Անդրանիկը: «Հայաստանի միջով», — ասաց Կոստան: «Ինչպէ՞ս», — հասկանալու համար՝ էր միտքը տանջեց Անդրանիկը: «Ասում եմ՝ հայրենիքի կարօտը Հայաստանի միջով», ի միջի այլոց կրկնեց Կոստան եւ էլի ինչ-որ բան էր ուզում ասել ժպտով, բայց չհասցրեց, որովհետեւ դրսում ճոճացով կանգնեց մեքենան, Կոստային կանչեցին, ու սենեակ խուժեցին արագախօս ու երգեցիկ, իմաստ չկազմող ասանձին-առանձին իտալերէն բառեր...:

ԱՂԱՄԻ ԱՅՎԱԶԵԱՆ



8. Պ Ե Ի Պ Է Ի Ե Ա Ն

Ա Ղ Ա Ս Ի Ա Յ Վ Ա Ջ Ե Ա Ն
Ե Ի Յ Ա Ի Ե Ի Ժ Ա Վ Ա Ն Թ Ի Ֆ Լ Ի Ս Ը

Քիչ են այն գրողները, որոնք իրենց նայուածքը կը կեդրոնացնեն առանձին աշխարհամասի մը վրայ, եւ աւելի քիչ են անոնք՝ որոնք կը յաջողին այդ աշխարհամասը կենդանի կերպով փոխանցել ընթերցողին:

Ազատի Այվազեան կ'իյնայ այդ քիչերու շարքին:

Առանց իրեն պիտի չուեննայինք այն Բոգոմիլիք Թիֆլիսը, որ այնքան դարեր, նոյնքան հայկական եղած է մեզի համար, որքան վրացական՝ ուրիշներուն, եւ երկար աստիամեակներ հանդիսացած է արեւելահայութեան մշակութային ու ընկերային մայրաքաղաքը:

Պարզ է, որ քաղաք մը միայն աշխարհագրական տեղամաս չէ: Անիկա ունի իր պատմութիւնը, առասպելները, իր առանձին դոյնն ու մթնոլորտը եւ, մա՛նաւանդ՝ բազմաբղէտ տիպարներու հոյլը, որոնց մթնոլորտին մէջ ծնած ու աճած արուեստագէտն է միայն, որ կրնայ վաւերագրական ու բանաստեղծական շունչով մը այդ բոլորը հաղորդել:

Վերջին երկու տարիներուն Ազատի Այվազեանէն լոյս տեսած «Ծոռակիւմի» (1983), որ 6 վիպակներու եւ 22 պատմուածքներու հաւաքածոյ մըն է, եւ «Գիւլիպիսոս» (1985), որ պատմուածքներու, թատերախաղերու եւ էսսէյներու այլ հաւաքածոյ մըն է, պատճառ դարձան, որ այս ինքնուրոյն արուեստագէտին գործը կարելի ըլլայ տեսնել աւելի ամբողջական պատասառի մը վրայ, — իր այլազանութեանը եւ բազմամակարդակ խորութեանը մէջ:

Միջին ընթերցողը, որ Թիֆլիսի մասին ընդհանուր տեղեկութիւններ ունի միայն եւ մտքին մէջ զայն կ'աւրնչէ Սայաթ-Նովայի, Թուամանեանի, Թիֆլիսահայ թատրոնի եւ 18րդ-19րդ դարու մեր պատմութեան որոշ դէպքերուն, Այվազեանի ընկերակցութեամբ կ'անցնի ընդհանուրէն մասնաւորին, կը մխրճուի այս քաղաքի բառսին մէջ՝ ճանչնալու համար զայն բող-

կացնող տիպարներն ու խաւերը, որոնց շերտ առ շերտ ամբողջացումը կը բերեն յաւերժական Թիֆլիսը:

Այս աշխարհի կուէցեալ ուղեցոյցն է Աղասի Այվազեան: Եարժասպատկերի քաղաքացի պէս ան մեզ կ'առաջնորդէ այն փողոցներէն ու կամուրջներէն, որոնք այնքան ծանօթ են իրեն: Եւ ուղեցոյցը մեզի կ'ըսէ.

«Թիֆլիսի ամենամեծ աւ շէնգ փողոցը Գոյովիմակին է (...): Թիֆլիսի մշտեղում Բուսն է: Քոյի վրայ վեց կամուրջ կայ՝ Միխայիլովսկիի, Վերայի, Մալխոբաճսկու, Ղազարաբի, Մետեխի, ու, ամենաանհասարկը՝ Մնացականովի»:

Քիչ ետք՝ Հեղինակին հետ կը հասնինք «Մուլէն-էլեքտրիկ» շարժապատկերի արահը: Երբ դուրսի անցուղարձերը կը նուազին՝ դաշնակաւորուհի տիկին Սուֆերմանի երաժշտութիւնը արահէն փողոց կը հասնի: Արահի մուտքին կը հանդիպինք որմնազոյնը պատրաստող կոնատ Տաշին, որ տաքի մատներով զարմանահարաչ պատաստներ ու ափշներ կը դժէ: Այսպէսի կենդանի մանրամասնութիւններով կը ներկայացուին նաեւ Թիֆլիսի փողոցներն ու դիրնետները, եւ այս հին, այլ կենսայորդ խճանկարին մէջ յանկարծ կը հանդիպինք Եռւշանիկի պատմութեան, Եռւշանիկ, ինչպէս իր միւս տարեկիցները, կը սիրահարի ու կ'ամուսնանայ, սակայն ծննդութեան ատեն երեխան կը մեռնի: Պատմութիւնը մինչեւ հոս կրնայ բնական կամ սովորական թուիլ, սակայն Եռւշանիկ կը հաւատայ, որ իր երեխան կ'անոնաւոր կերպով ծնած է եւ պարզապէս մարմին չունի — կ'օրորէ զայն, կը խօսի հետը, կ'երգէ, կը մեծցնէ... Բժիշկները բացատրութիւն չեն կրնար տալ աղջկան պարզած այս երեւոյթին դժով: Ըստ Թիֆլիսցիներուն՝ Եռւշանիկ սակաւին կը շարունակէ առանց մարմնի երեխայ՝ հոգի ծնիլ. «Ելի ասում են, որ ես շատ արագ ասիլ է կանգնեցնում իր գաւալներին եւ ուղարկում Թիֆլիսի ծուռտիկ-մուռտիկ փողոցները, գետնախոր միկիտանները, կամուրջների տակ»: Եռւշանիկի զաւակները նրա կողմէն արժեքներու մասին դադարաւոր չունին, չեն հասկնար շօշափելի, առարկայական իրականութիւնը, սակայն գիտեն երջանկութիւնը: Անոնք Թիֆլիսի անտեսանելի ողին են («Ուղեցոյց Թիֆլիս քաղաքի. 1912 թ. Բուսական»):

Քիչ ետք կ'իջնենք «Միմպատիա» գինետան գինետան աստիճաններէն վար: Գինետան պատերը զարդարուած են Շէյքսպիրի, Բաքմի, Թամար Թադուհի, Գոփերնիկիւսի եւ Պուլկինի դիմանկարներով, զորո Գրիգոր զըծած է: Այնտեղ՝ Գրիգոր կը զրուցէ բոլորին հետ, կը պատմէ իր կասկածները, Թուրքիւնները, վարանումները եւ կը կարծէ, որ եթէ անկեղծօրէն չբացուի ամէնուն՝ կը դադարի շնչել: Գրիգորի ցուցանակները արարածուած են ողջ քաղաքին մէջ, եւ իր նկարագրերը՝ ցուցանակներուն վրայ:

«Գրիգորի անկեղծութիւնը Թիֆլիսի անկեղծութիւնն էր, ու երեւի մի մարդու անկեղծութիւնը հերթէ էր քաղաքի մնացած ամբողջ սուսն ու կեղծիքը ծածկելու համար», պիտի ըսէ Հեղինակը:

«Միմպատիա» գինետան աէր Բուզգանը կ'որոշէ Գրիգորը ամուսնացրնել Մամաչա Քալիկայի քով աշխատող աղջիկներէն Սոնայի հետ...: Անշուշտ նոյն երեւոյթն է, որ կը կրկնուի: Գրիգոր նոյն ձեւով, անկեղծօրէն կը խօսի Սոնային հետ եւ, անշուշտ, ինքն իրեն հետ է, որ կը զրուցէ: Գրիգորի խենթ ու մոլեղին սէրը կը վարակէ ամբողջ Թիֆլիսը: Իր սէրը կը թափէ փողոցի լապտերներուն, հրամանացներու ճակատներուն, եկեղեցիի պատերուն, այսինքն՝ ցուցանակներու ու գրութիւններու ձեւով ամբողջ Թիֆլիսի վրայ: Այլեւս Թիֆլիսն է, որ սիրահարած է...: Գրիգոր, գիշեր մը,

վերադարձին, Սոնան կը գտնէ Բուդդանի մօտ, կը նայի անոնց զէմքերուն, դինեռտան յաճախորդներու դէմքերուն, եւ քանի որ այլեւս իրմէ բան մը չկայ անոնց վրայ, կամ՝ քանի որ աւաջին անգամ ըլլալով կը տեսնէ զանոնք իրենց խնկութեանը մէջ՝ ամէնքը եւ ամէն ինչ խորթ կը թուին իրեն: Գիշերուան մը մէջ կը հաւաքէ թիֆլիսեան իր բոլոր ցուցանակները եւ կ'անհետանայ: Թիֆլիսը այլեւս իր անկեղծութիւնը կորսնցուցած է:

Քաղաքէն քիչ մը վեր Հավլարարն է. Հավլարարէն ամբողջ Թիֆլիսը կ'երեւի: Իսկ Հավլարարի ամենայնապէս քաղաքացին Միրզա Ասատուր խանն է, որ ծնած է թաղի ահեհանաւանուր տան մէջ: Անոր հօր թաղումին՝ մեծաւրի գաղազին տակ մտած են բոլոր դարաշփոխները, կինտոնորը, ուսուցիչները եւ դերասանները, գաղազին ետեւէն քայած է Գաբրիէլ Սունդուկեանը: Միրզա խանը շարժուն դրօշաբան կը նկատուի. ան դիտէ զերմաներէն, վրացիէն եւ զլարար: Հավլարարցիք, որոնք յաճախ զխարկ կը դնեն պարզապէս Միրզա խանին զխարկ վերցնելու համար, կը կարծեն, թէ ան Նամէն լեզու դիտէ խօսիլ, բացի սիրոյ լեզուէն...: Եւ յանկարծ, այդ յարգուած, սպիտակ մազերով եւ կապոյտ աչքերով մարդը կը սիրահարի եւ կ'ամուսնանայ համբաւուր Յեցիլիայի հետ: Հավլարար ինքզինք խարուած կը դռայ, մարդիկ կը խուսափին Միրզա խանին հանդիպելէ, իսկ Յեցիլիա կը դաւաճանէ ամուսնոյն՝ Հավլարարի պատիւը խայտառակ ընելով...: Այս յարաբերութեան լուսաւոր կողմը, սակայն, իրենց ազնկան՝ Վարդիկի ծընունը կ'ըլլայ: Միրզա խանին եւ Վարդիկի սէրը տարբեր գեղցկութիւն եւ խորութիւն կը ստանայ: Եւ երբ նոյնիսկ Յեցիլիան լրօրէն կ'ըսէ, թէ Վարդիկը հրկանը աւլիկը չէ եւ Միրզա խանը կը հերքէ կնկան արտայայտութիւնը, ըսելով՝ որ մարմնական օրէնքներէն անդին ճշմարտութիւններ կան, զորն Յեցիլիան չի հասկնար, Հավլարար կը հասկնայ խանին ըսածը, եւ տակաւ Յեցիլիան ալ կը սկսի հաւատալ, որ Վարդիկը ամուսինին կը պատկանի, եւ շեքէ ասեմք, Վարդիկը Հավլարարի մի ծայրում էր գտնուում, իսկ Ասատուր խանը՝ միտ, յուսաւորում էր մրանց միջու բնկած ամբողջ Հավլարարը («Անտարանք ըստ Հավլարարի»):

Ասատուր խանի եւ Վարդիկի կապը հաւաքական մտածողութեան մը գրեւորումն է եւ տուեալ պատմութեան յատկանշական է այս մտածողութիւնը գրեւորելու դժուր: Փաստօրէն, Թիֆլիսի բոլոր տիպարները նոյն ընտանիքին դաւաճաններն են եւ գիտակից ու անգիտակից կապերով (երակնեւորով-ընդերքով) կապուած են իրարու: Կարծէք նոյնիսկ անոնց ղերբերը լրացուցիչ են եւ կանխօրօք ճշդուած: Ծիշդ այս պատմութեան ալ Վարդիկը ազդիկն է Թիֆլիսի ամենաընտիր գաւակներէն Միրզա խանին, Թիֆլիսին:

Տուեալ պատմութեանը յատկանշական են նաեւ Ազասի Այվազեանի «Փանթասթիք» դրամատուրգութիւնը գրեւորելու իմաստով: Այնտեղ է առարկայական Թիֆլիսը՝ իր բոլոր մանրամասնութիւններով, ծուռամուռ թաղերով, զետնափոր նկուղներով ու կամուրջներով, իննթ թափառաշրջիկներով եւ անօրինակ տիպարներով, սակայն «յանկարծ» անկարելի պատմութիւններ կը ծնին այս շրջապատին մէջ, աներական, «Փանթասթիք» թրջացող, որոնք սակայն աւելի մեծ ճշմարտութիւն մը կը փոխանցեն այդ մարդոց եւ քաղաքին մասին:

Մէջքը կամ սեռային աշխարհը հիմնական դրոշմներէն մէկը կը կազմէ Թիֆլիսեան այս խնամակարին: Յեցիլիայի եւ Սոնայի դաւաճանութիւնը այնքան բնական, նոյնիսկ ակնկալելի կը թուի այստեղ, որ կարծէք խաղի օրէնքին մաս կը կազմէ: Սակայն սկստք չէ մտածալ, որ երկուքն ալ կրնանք

որոշ դասակարգին մաս կը կազմեն: Սոնան՝ Մամաշա Քալինկայի քոփ աշխատող աղջիկներէն է, իսկ Յեղիլիայի համբաւը, Մերդա խանին հետ ամուսնանալէ առաջ, արդէն տարածուած է Հալլարարի եւ Թիֆլիսի մէջ...

«Լսիշուն բաղնիքը» մեղքի կամ ցանկութեան նուրբ ցանցերը-յարտերութիւնները կը բռնէ իրանութեան եւ օրէնքին հետ բազդատարար: Ծանկութեան հետ քողարկուած խաղ մը կը զարդանայ, Հերոսուհիները խորքին մէջ կ'ուզեն լսել իրենց մարմնին ձայնը, սակայն այդ ձայնին հետեւելու համար պէտք է պատրուակ մը ըլլայ, որպէսզի կարենան շրջանցել ընկերային օրէնքը: Սակայն, նոյն ատեն, խուսափումը կամ մերժումն ալ գոյութիւն ունի եւ սմբողջ հողմիմակը ձգողութեան եւ խուսափումի անզատութեան-մակոնթացութեան միջեւ կը զարդանայ:

Սակայն նախ՝ այն վայրը, նախուն բազնիքը, ուր այս բնազդները կ'արթնան:

«Պենագարդ ու խտուտիկ քարքիւններին սուրմա քաշած, կապուտագոյն աչքերը կոպերի տակ, ծանր յետոյքը ցեխաջրում, կլկոցը աղիքների մէջ նախուն բաղնիքը Յստի է Դարբի մէջդառնում (...) Մարմինների իշխանութիւնն է այստեղ. հրանց իրաւութիւն, նրանց նշարտութիւնը- նրանց աշխարհ գոյութիւնը- անարկայ ու անարկայական, շօշափելի ու տեսանելի (...) մարմինները՝ յուերժութեան քշնամի, պստի արարիչ, ազանակամբ լափում են հաճոյքը, զերմութիւնն ու պաղաւթիւնը. շտապի՛ր, շօշափի՛ր մարմինդ, էանի դեռ չի փոխուել, ասփռ տար կրծքիդ, էանի դեռ եպարտ գարկերակում է»:

Եւ յանկարծ մարմիններու աշխարհին մէջ ցաւի ճիշտ մը կը բարձրանայ: Միմզարի տղան՝ Լամազ Գէորգը ձերբակալուած եւ բանտ հետած են: Այլի Միմզարի բուրբ ջանքերը՝ զուտօր փրկելու, ապարդիւն կ'անցնին: Ապա կ'իմանայ, որ պէտք է կրթայ զնդապետ Տարիէլ Մնացականովիչ Ղոր-դանովի տունը՝ անձնապէս ինչորայիք ներկայացնելու համար: Միմզար իր անաքելութեան մէջ կը յաջնայ: Ան՝ յաջորդ օրն իսկ ալլ արամարտութեան մէջ է. կը նայի իր «ինչմնդուն մարմինն» եւ չի կրնար պահել իր հիացումը. «Ի՞նչ տղամարդ է... որ իմանա՞ք... վայմէ՛, ի՞նչ տղամարդ է»: Թամար շատ լաւ կը հասկնայ Միմզարը, սակայն կ'ուզէ խորել ինքզինք հարցունելով՝ բարի՞ մարդ է... Յաջորդ գոհը» կը հանդիսանայ նոյնինքն Թամարը, որուն տղան՝ Պաճօ կոյան բանտ կը տանին: Սակայն այլեւս Թամարն ալ գիտէ միջոցը: Այս բոլորին մէջ տխուրը Միմզարի եւ Թամարի ընկերակցին՝ Նինան է, որ գիտէ, թէ իր տղաքը երբեք կուտուզկա, այսինքն՝ բանտ պիտի չիլինան:

Իշխանութեան շարաշահութեան հետ առնչուած երեւոյթներ անլուշտ զիտակցարար շրջանցուած են հեղինակին կողմէ, որ ուզած է իր սոսկեակեր կեցրոնացնել մարմնի ու բնազդներու աշխարհին վրայ, ցանկութեան քողարկուած եւ, այսպէս կոչուած՝ «պարտազրուած» դրսեւորումներուն վրայ: Նինայի փոստաստիքը ոչ մէկ կասկած կը ձգէ այս գծով:

Այս ծիրին մէջ կ'իջնայ նաեւ խեղճ մկնորս Ակորի պատմութիւնը Չապէլի հետ: Անոնք գուակ չեն կրնար ունենալ եւ Ակորի բոլոր ուխտազնաջութիւնները շնն արդիւնաւորութիւն: Յուսահատուած՝ Ակոր կը դիմէ «Մատանի վանք»ին, գուակ մը ունենալու եւ... տղայ մը կ'ունենայ: Սակայն Ակորի ուրախութիւնը կրկար չի տեսեր, որովհետեւ կ'անդրադառնայ, որ Չապէլ գուակ ունեցած է Չախալ Լազոյէն եւ ան կը շարունակէ դուստնանել այդ մարդուն հետ: Ակոր ուր կ'անդրադառնայ, որ սատանայի օգնութեամբ հարցը ալ կերպ չէր կրնար լուծուիլ...: Եւ Ակորին տխրութիւնը միայն Քուրը

կընայ լուծել: Եւ մինչ գետի երկու ափերուն մարդիկ թառ ու քամանայ նը-
ւազելով կը զուարճանան, Ակոր կ'երթայ իր տիրութեան ու ջուրերուն մէջ
խեղդուելու...

Ինչպէս կը տեսնենք, այս բազմալեզու քաղաքին ու անոր բազմալե-
զու բաղնիքին մէջ մեղքը հասարակ յայտարարն է: Մեղքը տիրութեան, ա-
ռանձնութեան եւ թիֆլիսեան գինիին հետ խոնոտած է: Ան կրնայ կործա-
նել Գրիգորի եւ Ակորի սէրը, երբեմն թաքուն ուրախութիւն պատճառել
Միմզարներուն, սակայն իր տարբեր ձեւերով ներկայ է ամէնուր: Ամէն պա-
րագայի, շատ քիչ անգամ միայն, ինչպէս՝ Միրզա Ասատուր խանի եւ Վարդ-
գիկի յարաբերութեան, այս ազդակը դրական կամ ցանկալի տրդիւնքի կ'ա-
ռաջնորդէ:

Այստեղ պահ մը կ'արժէ կենալ Գուռ գետին գիմաց: Գուռը այն վայրն
է, ուր այս քաղաքի ամբողջ տիրութիւնն ու Հարցերը կը թափին: Գուռը
հոսելով կը հասնի Եէյթան պազարի՝ Եա՛հ Աբասի մզկիթի պատերուն բա-
խելով ջրապտոյտ մը կը կազմէ, եւ զինով կ'ինտոները, որոնք ինկած են այդ
ջրապտոյտին մէջ, աւելի եւս կը թաղուին իրենց գինովութեանը մէջ: Գուռի
մէջ կը խեղդուի աղիւս շարող Գլախոյի հայրը, Գուռի ձուկերը կը մեղքնան
Ակորին եւ անոր ուսկանին հետ կը քաշեն զինք ու իր պատշաճը... Եւ ինչ-
պէս «նախնուն բաղնիք»ը այն վայրն է, ուր մեղքն ու Փիղիբական բնազդները
իրենց կապանքներէն կը ձկնազատուին, Գուռը կը դառնայ այն հոտուն
վայրը, ուր այս «պարտուած» մարդոց զժբախտութիւնը, տիրութիւնը եւ
թողտակուած երազները կը թափին: Գուռը, այս տուտով, անհրաժեշտու-
թիւն կը դառնայ այլեւս, թէ՛ մեղքի հետեւանքները մաքրելու, եւ թէ՛ քա-
ղաքի անանունն ու զժբախտ մէկ թաւին դրսեւորած ցաւերն ու տիրութիւնը
իրեն հետ տանելու, թեթեւցնելու համար:

Նոյն այդ թիֆլիսի մէջ յաճախ գայթակղալի նկատուելու չափ անհե-
տացած են ցեղային տարբերութիւնները: Ճիշդ է, որ ինչպէս նախապէս ակ-
նարկեցինք, Այլպազեանի տիպարներուն մէկ մասը ընկերային այնքան թըր-
ւառ դասակարգէ մը կու գան, որ իրենց համար կրնայ պիտանք նկատուիլ
ազգային գիտակցութիւնը, սակայն, այս մթնոլորտին ստեղծման մէջ էս-
կան գեր ունի նաեւ թիֆլիսի ազգաբնակչական կառոյցը:

«Թիֆլիս» պատմուածքին մէջ ամէնէն աւելի կը զգանք այս պարա-
զան: Գենեքալ Բարսեղոյի աղջիկները կ'ամուսնանան կամ փախուտ կու
տան տարբեր ցեղերու պատկանող հազար տեսակի մարդոց հետ, եւ այդ
յարաբերութիւններուն ընթացքին ազգային ո՛չ մէկ մասհոգութիւն կը ծա-
գի: Անչուշտ պատմուածքը ունի այլաբանական եզր մը, որուն պիտի անդ-
րադասանք աւելի ու՛, սակայն զենեքալի կեանքի վերջալոյսին յայտնուած
ազգային ազատ գիտակցութենէ մը ետք, կը տեսնենք, որ յաջորդ սերունդը
այլեւս տարբեր ցեղի մը մաս կը կազմէ, դասակարգի մը, ուր այլեւս ցե-
ղային սահմաններ չկան:

«Ուտի» գրք» վիպակի հերոսուհիներէն Տատայի յարաբերութիւննե-
րը, տարբեր ցեղի աղամարդոց հետ, ազգային գիտակցութեան ոչ մէկ նը-
ւոյլ կը բերեն (եւ հակառակը զարմանալի պիտի թուէր), սակայն նոյն այդ
վէպի երկրորդ զլուխին մէջ կը հանդիպինք Դաւիթին, որ քանի մը երիտա-
սարդներու հետ կը գինուորագրուի կամաւորական շարժումին, կը հասնի
մինչեւ Երեւան, ապա կը վերադառնայ թիֆլիս:

«Դաւիթի» մենչեթիկները զիմուրագրեցիմ, եւ օրովիտու շաշնակցա-
կանները սովորեցրել էիմ նրան զիմուրակամ այրութեմը, միանգամից տը-

ւեցին հրազան եւ ուղարկեցին զհիներալ Դրայի զէմ, որ շարժուամ էր Թիֆլիսի վրայ: Դուրսը փոփոխութեամբ մատուցեցաւ հրազանի կոթով այնքան հարուածեց իր ռոֆին մինչեւ ուշաթափուեց, զքա համար մքա գցեցին Մետեխի բանալը:

Ինչպէս կը տեսնենք, այս «խաղաղ» գրացնութիւնը կամ ազգաբնակչական խառն ջարդուր յաճախ կրնայ խանդարուիլ ազգային շահերու խառնաձեւումով: Այլազեան յաճախ նման կենդանի պատմական մանրամասնութիւններ կը բերէ, փոքր փաստեր, որոնք այնպիսի կացութիւններ կը ստեղծեն, ուր «ներսնեաւ ազգային զիտակցութիւնը երեւան կու գայ: Սակայն այս երկու հոտանքներն ալ, կողք կողքի, թիֆլիսեան այս համայնապատկերին մաս կը կազմեն:

Գաւթ Գասպարեան, որ Աղասի Այվազեանի գրականութիւնը վերլուծող էւ մեկնաբանող լուսազոյն գրաքննադատը կրնայ նկատուիլ, իր «Փառանգական պատմութիւնը ըստ Աղասի Այվազեանի» խորագրուած յօդուածին մէջ («Սովետական գրականութիւն», 1983, թիւ 8, էջ 125-130), կը կեդրոնանայ Այվազեանի ա' յն տիպարներուն վրայ, որոնք, հայրենի հողէն դուրս գալով՝ անհետ կը կորսուին տարրեր աշխարհամասերու մէջ:

Մականաններու հօգը դերաստանէն ճասյին, էրդրումէն դուրս գալով՝ կը հասնի մինչեւ Ախալցխա, կը կոչուի Աղի կոմս. ան իր սղան՝ Բողդանը կը կտրէ իր անցեալէն եւ աւելի ուշ կը կորսուի սողուն հետ: Արմինուսը, Եղեւթոյ որք մտքացկաններէն մէկը, մեծ փառքերու կը հասնի, խառնակիւններուն հետ կ'երթայ մինչեւ Երուսաղէմ, քաղաքի պարիսպներուն տակ կորսուելու համար: Նեղրծնց Խոստովը կը հաստատուի Լոս Անճելլոս եւ Հաստատանէն իր մօտ կը կանչէ եղբայրն ու անոր ընտանիքը...: Գ. Գասպարեան կ'եզրակացնէ.

«Եւ այսպէս՝ Զինաստանի տախտակներէց մինչեւ այն ափերը, որ ռզաղում են Մեծ սկիւրմանի ջրերը, յափառում է ցեղի ալիւնը, աւրեղեակառ զբնում է ու կարչում: Անրեղեակառ, այտիմէն՝ 11րդ դարում, 15րդ դարում, 18րդ դարում, 20րդ դարում»:

Այս հարցին մէջ շահեկանը այն է, որ քողովութիւնը չըջապատի մը մէջ մեծցած Աղասի Այվազեանն է, որուն պատմութիւնը փողովութիւններու համակցութեան բաղաձայն օրինակներ կը բերեն, որ կը գիտակցի դարերու վրայ երկարող այս ազգային ախտին, դանդաղ «արեւնահոտութեան», եւ արտադրութիւն, թափառող ու կորսուող ցեղին արեան հարցը ուժգնօրէն կ'արծարծէ գեղարուեստական մակարդակի վրայ:

Պարտաշայական շէր Այվազեանի գրէշը շարժապատկերի նմանցնելու համեմատութիւնը՝ այս յօդուածին սկզբնաւորութեան: Պարազայական կամ արեւմտի արդիւնք չէ Այվազեանի կապը շարժապատկերին հետ, եւ «Յոսանկիւնին յաջող ստեղծագործութիւն է երկու մակարդակներու վրայ՝ թէ՛ իրբիւ գրական երկ, եւ թէ՛ իրբիւ վիպակի մը պատշաճեցումը — իրականացումը շարժապատկերի մակարդակին վրայ: Եւ այս ստեղծագործումը կը յաջողի, որովհետեւ Այվազեանի գործը, ընդհանրապէս, իր յատկօրէն զծուած ափսոսանքով, շրջապատով, տեղական գոյնով եւ դիպտաշարով, շարժապատկերի մարզին պահանջած բոլոր անհրաժեշտ տուեալները կը պարփակէ:

Այս գծով յատկանշական հատուածի մը կը հանդիպինք «Մեղքի կեանքը» պատմութեան սկզբնաւորութեան.

«...Գաղափի հին բազմաւորում, շուկաների շրջակայքում եւ՝ ա-

սիստեմների հետ, փնտրում էի տեղաբնիկ: Երբեմն մի լաւ գտած տեղաբնիկ որոշում էր փոխել բայտը:

«...Կիմոն աչքը բացեց եւ արդէն որոնում էր տեղաբնիկ: Նրա աւել-
նամուտ ազգակամը, նրա դայնիակը տեղաբնիկ էր: Տնայար էր ոչ միայն մար-
դը: Փողոցը տեղաբնիկ էր, ամբողջ տեղաբնիկ էր, կապը տեղաբնիկ էր, դրուագը
տեղաբնիկ էր... Կիմոնի ամենամեծ ռզուրուքիւմն ու նշանակալի աշխարհի տե-
ղաբնիկ էր»:

Այս պատճառով ալ կը տեսնենք, որ Այվազեանի ո՛չ միայն Մկրտիչ-
ները, Գրիգորները, Աւատուր խաները տեղաբնիկ են, այլեւ՝ նախնական բազ-
նիքները, զարբնոցները, ատրանակները, Թիֆլիսի փողոցները, կամուրջ-
ները, շուկաները եւ գինեատները տեղաբնիկացուած իրականութիւններ:

«Նոսակիւնը» վիպակին երկրորդ գլխուն մէջ կը հանդիպինք Հինգ
Մկրտիչներու լուսանկարին: Հին, դեղնած, թիչ լոյսով լուսանկարուած նը-
կար մըն է, որ սակայն դիւցազներգական ու հայկական-ազգային տարողու-
թիւն ունի Հեղինակին համար: Այնտեղ խոսացուած են Հինգ Մկրտիչներու
կերպարները, — վրացի Վասոն, որ ձեռքով ցոյց կու տայ գինիի պարսպ չի-
լը, խորամանկ աշքերով Գասպարը, «լլուտ պարանոցով», մկանուտ հակայ
Մկոն՝ ամենամեծ մուրը ուսին եւ ժողերը «ծիծեռնակ» ձեռով սանտրած,
սպա վարպետ Մկրտիչը, իր տարօրինակ հազուստով, եւ կեղերնը նստած
աւաղ Մկրտիչը՝ որիւն մէջ պատմութիւնը փոխանցող տեղաբնիկ կամ հե-
ղինակը...»

Լուսանկարի պարագան դիւտ չէ անշուշտ, սակայն լուսապէս օգտա-
գործուած է ևւ ցոյց կու տայ արուեստի ուժը: Փաստորէն, կորսուած է
երկաթադործներու այն հրաշաղիշ աշխարհը, պատերազմ եւ այլ փոթորիկ-
ներ անցած են Մկրտիչներու աշխարհին վրայէն, ցրուած են անոնք եւ մէկ
առ մէկ կը մահանան, մա՛նաւանդ ժամանակը գործած է իր աւերը, եւ մո-
ռացումի հարուածներուն դէմ միայն այն լուսանկարը, այսինքն՝ արուեստն
է, որ կը յաջողի փակցնել ու փրկել այդ տեղաբնիկ ժամանակաշրջանը,
աշխարհը: Եւ կեանքով, հոգեկան լիցքաւորումով ու ինքնուրոյն կերպար-
ներով առանձնացող այդ լուսանկարը կը դառնայ լուսանկար-վիպակ եւ կ'ան-
մահացնէ այդ աշխարհամասը:

Այվազեանի շրջապատն ու տեղաբնիկը շարժանկար-լուսանկարի ան-
ցողական կամ արդիւնարտական մակարդակին վրայ չեն մնար, որովհետեւ
հոգեբանական խորք ունին եւ տեղաբնիկ ինքնուրոյն դիմեր:

Յիշելով ժամանակի պարագան՝ կ'արժէ պահ մը կանգ առնել նաեւ
Հեղինակին «Ժամագործների համախառնութիւնը» պատմուածքին վրայ, որ
ժամանակի հարցը կ'արծարծէ մէկէ աւելի երեսներով:

Պատմութիւնը կը պատմուի Իոսիֆ Կասպարովիչ Մակեդոնեանի կող-
մէ, իրական եւ իրոս հետաքրքրական կերպար մը ինքնին, որուն մասին
էջնատակի նոթէ մը կ'իմանանք, որ եղած է խմբագիր, բանաստեղծ, ճանա-
պարհորդ, ինքնու ճարտարապետ, եւ այլն. եղած է «Թիթանիկ» ճամբոր-
դանաւին վրայ, նաևուն ընկղմած միջոցին եւ մասնակցած է ռուս-թրքական
պատերազմին:

Պենթի թաղէն սկսելով՝ պէտք է շերտ առ շերտ գեղարուել փողոցնե-
րը, Իոսիֆ Մակեդոնեանի տունը հասնելու համար: Տունը այնքան խորունկ
մտած է «Թիֆլիսի աղիքներուն մէջ», որ աւելի դիւրին է քաղաքէն դուրս
ելլել, քան հասնել Մակեդոնեանի բնակարանը: Այս վերջինին բառերով՝

Թիֆլիսը «սակ» ունի, յատուկ, եւ էթէ կ'ուզենք ճանչնալ զայն, պէտք է Թիֆլիսի խորքը թափանցել:

Օքրոմճեղովներու ընտանիքը ժամադրութեան սկսած է Ջուղայէն-ուստարայի Փիրումը կ'երթայ մինչեւ Գերմանիա՝ ժամադրութիւնը կուտարելագործելու համար, սակայն ժամագործութիւնը այլեւս իրեն համար ոչ թէ արհեստ կը դառնայ, այլ՝ փիլիսոփայութիւն, ժամանակը հասկնալու միջոց. կարծէք ժամացոյցի «համավարաբեան մանրամասներ» մէջ ասես արտեւում էր ժամանակը՝ գտնելու համար նորա միջուկը, նորա ամենափոքր մասնիկը, փոքրութեան տեսանկյանը, որպէսզի հասկնալայ այն քարքարովը, որը կեանք է կըլուծու, իմաստաւորում է գոյը»:

Եւ որ մըն ալ, ճաշէն հոգ, Փիրում հանդուստէն կ'երկնայ Ջուղայէն բերած նահապետական գորգին վրայ, ատրանակը կը բռնէ սրտին եւ հանգիստ կը քաշէ ըլթակը: Կարծէք ան այլեւս գտած է ժամանակի գաղտնիքը եւ կ'աճապարկ անցնելու այլ ժամանակի մը մէջ...

Փիրումի գործը կը շարունակէ իր աշկերտ Օհոնը, սակայն ան հետըզհետէ կը կորսնցնէ շրջապատի զգայնութիւնը եւ կը սկսի խենթի տեղ դըրմել: Պատկերութեան մը ընթացքին Մակեդոնեան կ'անդադարանայ, որ Օհոնը կարծէք կը կապայ իր մտքերը, նոյնիսկ իր արտայայտութիւններուն դրդապատճառները...: Մակեդոնեան կը զգայ, որ մինչ ժարգիկ կ'ապրին երեւոյթներով, ժամացոյցի արտաքին թուահարթակով, Օհոն կը հասկնայ ժամացոյցի-կեանքի մեխանիզմը, ճշմարտութեան ներքին յարաբերութիւնները, «նորա ժամացոյցի խուփը բաց է, եւ տեսնու է բոլոր ժամացոյցները առանց խուփի»: Եւ առաւօտ մը կ'եւ թաղի բնակիչները կ'արթնան ու իրենց պատի ժամացոյցները կը զտեն դուռներու նախամուտներուն, անոնց թուահարթակները վերցուած...: Այսինքն՝ Օհոնը այնքան պարզ յարգած էր տեսնել մարդոց հոգեբանութեան իսթարուած կանոնակազմութիւնը, թէ՛ ինչպէս մարդիկ կրնային բան մը մտածել եւ ուրիշ բան ըսել, զիտնայ ճշմարտութիւնը եւ դիմել սուտի...: Օհոն, իր որոշ չափով խորհրդանշական տարբերով, կարծէք կը մերկացնէ մարդոց հոգեկան աշխարհը:

Այլարանական-խորհրդանշական տարր մը կայ, որ կը մտնէ Այվազեանի պատմութեան մեծ մասին մէջ: Ճիշդ է, որ ան յաճախ բարոյական հարցեր եւս կ'արծարծէ, գլխաւորաբար վիպակներուն մէջ, սակայն այս տարրը շատ աւելի հետաքրքրական է: Շատ անարկալայական Թիֆլիսեան իրականութիւններէն անդին՝ կենցաղային մանրամասնութիւններէն, նեղ թաղերէն, կամուրջներէն, շուկաներէն, բակերէն, եւ այլն, յանկարծ տուեալ խորհրդանշական-այլարանական տարրը կը մտնէ, որ ամբողջութեամբ այլ տարրութիւն կու տայ Այվազեանի պատմութեանը: Այս «առարկայական» եւ «վերացական»ի ստուսնութիւնը իսկապէս շահեկան է եւ յաջող: Նախապէս հանդիպեցանք որի գուտակներ ծնող Շուշանիկի պատմութեան, որոնք շունչն իսկ են Թիֆլիսի եւ որոնք առարկայական արժէքներու մասին գաղափար չունին, սակայն գիտեն երջանկութեան գաղտնիքը:

Ինքնին խոստուն է այն երեւոյթը, որ «Ծառնիկի» հատորի պատմութեանը շարքը կը բացուի Շուշանիկի հեքիաթը պատմող պատմութեանը եւ կը փակուի «Հեքիաթ» իրրայրուած այլարանական-խորհրդանշական մէկ այլ պատմութեանը: «Հեքիաթ»ին մէջ՝ ձմեռնային օր մը, զիւղը կը սկսի «ներխուժուիլ» մերկ մարդոցով եւ կիներով, որոնք զարմանալիօրէն դեղեղիկ են, մարդկային լեղուն եւ մտայնութիւնը չեն հասկնար եւ կարծէք մեր ենթագիտակցութիւնն ու խիղճը կը ներկայացնեն: Եւ այդ քաղաքի կամ գիւ-

դի խաթարուած ներաշխարհով բնակիչները, այլևս անկարող ընդունելու կարծէք իրենց մանկութեան տարիներէն եկած այդ ներքին ու արտաքին գեղեցկութիւնները, կեղծ բարոյականութեան եւ ներքին ատելութեան կիրքով մը կը սկսին հալածել եւ սպաննել այդ ձիւնային մերկութիւնները, անոնց մէջ թաքուն վտանգ մը տեսնելով իրենց խաթարուած ներաշխարհներուն ուղղուած : «Ներխուժումներէն» տարիքոտ կին մը միայն կը փրկուի եւ կը հեռանայ. անոր ուղղուած փամփուռները ոչ մէկ ազդեցութիւն կ'ունենան : Եւ մարդիկ կը դգան, թէ այդ մերկերու վտանգը միշտ ալ գոյութիւն պիտի ունենայ, թէ այդ անկեղծութիւն եւ չխաթարուած էութիւններ ներկայացնող վրտանգը կրնայ միշտ վերազանալ...

Չարմանալիօրէն խեւ Օհոնը եւս մարդոց խաթարուած «կանոնակարգ մութիւն»ը Էրեւան կը բերէր, իսկ ցուցանակներ պատրաստող Գրիգորի անհետացումէն ետք ամբողջ Թիֆլիսը իր անկեղծութիւնը կը կորսնցնէր : Այլապէս յաճախ կը խօսի խաթարուած, անկեղծութիւնը եւ արժեքափեր կորսնցնող ընկերութեան մը մասին : Հաւանաբար այս պատճառով ալ Օհոնները եւ Գրիգորները կը հեռանան կամ կը կորսուին այս ընկերութիւնէն :

Մարդիկ այլևս պատահաբար կը հանդիպին նման անհատականութիւններու, որոնք կրնան անցեալի ապշանքը, անկեղծութիւնը, ապրելու հաճութիւնը եւ կորսուած ճշմարտութիւններու գեղեցկութիւնը յուշել...

Նման հազուադիպ վայելք մը պարուհիներուն կը պարգևէ «Բոլշերո»յի Աղամը : 70ամեայ Իվետայի «յորեկիան»ն է եւ պարուհիները կը փորձեն առանձին տօնել զայն, 40ամեայ Տոլին իրեն հետ կը բերէ գփեսացուն եւ ընկերութիւնները չեն կրնար մերժել Տոլին : Անխօս այս մարդուն ներկայութիւնը կրնէ մեռած, մոռցուած ապրումներ եւ զգայնութիւններ կ'աբթնցնէ յոգնած պարուհիներուն մէջ : Աղամի արտայայտութիւնը չեն կրնար հասկնալ, զայն չեն կրնար բաղդատել իրենց արժեքափերուն եւ ներքին պատկերացումներուն հետ : Կը զգան, թէ այլ ձեւի փորձառութիւն մը կ'ապրին : Իրաքանչիւրը հազար հոգ եւ յուսախարութիւն տեսած է, սակայն այս մարդը կարծէք կը բերէ կորսուած անմեղութիւնը, նախնական յափշտակութիւնը, յոյսը : Յանկարծ Սոֆին կը սկսի պարել-թուղտիլ, պարուհիներէն մէկուն շրթներուն եղանակ մը կը ծնի, սակայն այդ մէկը սովորական երաժշտութիւն չէ, «սեսս մարմնի ձայն էր, շաքժման ձայն, լոյսի ձայն», եւ պարուհիները այդ յափշտակութեամբ կը սկսին պարել : Հեթանոսական պար մըն է, ուր Աղամ կուտք մըն է կարծէք եւ պարուհիները չեն կրնար հասկնալ այլևս, որ ան իրականութիւնն է, թէ խաբկանք, եւ կը վախնան, որ երբ Աղամի կողմը դառնան՝ կրնայ յանկարծ չքանալ, անհետանալ...

«Թիֆլիս» պատմուածքին մէջ այլաբանական-խորհրդանշական տարրը իր մէջ կը ձուլէ Թիֆլիսի աւրելուած բոլոր պատմութիւնները, տիպարները, բարքերը, հերթաթիւները, աշխարհագրական գոյները եւ սասնճայատկութիւնները :

Թիֆլիսաբնակ զօրավար Բարսեղովը, հակառակ իր վրացոյստան ուռաբերէին, իր կեանքի վերջին տարիներուն ազօտ դիտակցութիւնը կը պահանջան իրողութեան, որ ինչ շտապիցն է «այն վախճուտ գաղթականի, այն վերջին կենդանի մնացած զինուորի, որ փախուստ տալով Հայաստանի մարտերից, հասել է Թիֆլիս...» : Բարսեղովին ետք կը մահանայ կինը : Գառսային ժամանակաշրջանն է եւ քաղաքը լեցուն է դաղթականներով եւ թշուառութեամբ : 1918ին կը նշանուի զօրավարի չորս ազդիկներուն անդրանիկը՝ ստփրուած գլուխով ոստիկան Վոլոդիա Ջարուանի հետ :

«Հինց առաջին օրը անկողնում Ջարուան վախեցաւ հաճոյքի չափից,

անս Սիրանի հետ մէկտեղ անկողին էին մտել Թիֆլիսի փողոցներում քափ-
ւած զապաւակները՝ իրենց խոնաւ աչքերով, պատառոտած հագուստով: Նա
անկողնում տեսաւ Սիրանի ցեղի ամբողջ պատմութիւնը. լաց, հեծկլտոց, եւ-
աաչանք, բողոք... ու Ջարուանը՝ վախեցած դուրս բռաւ անկողնուց. «Ինձ
այսքան շատ սէր հարկաւոր չէ... ինչի՞ս է պէտք»:

Շուտով կը ժահանայ նաեւ Ջարուանը. Սիրան կ'երթայ աւազակ Լու-
կանի հետ, կը ձերբակալուի եւ անոր հետքը կը կորսուի: Նոյն այդ յաւելեալ
կամ շափաղանց սէրը կը քայքայէ եւ անհետ կը կորսնցնէ նաեւ Վառվառան
ու Կատոն: Միայն փոքրը՝ Մաշուն կը մնայ եւ կը ծերանայ տան մէջ, ան-
մասն ջոյբերու մեծ կիրքէն:

30-40 տարի ետք Մաշոյի դուռը կը սկսին ափ առնել զօրավար Բար-
սեղովի թոռները, — ուր որ առանձնութենէ տառապող թշուառական մը
կայ, Բրիտտո տեսած դարնուած մը, անտէր կամ տրուր երիտասարդ մը՝
կու գայ Մաշոյի ջով... Արդէն քաղաքի կայարաններէն իսկ, երբ նման
մէկը տեսնեն, կը զրկեն Մաշոյի ջով, որովհետեւ ո՞վ գիտէ, կրնայ մօտէն-
հետուէն աւրնշուքիւն ունենալ զենեքային հետ... Փաստօրէն, Բարսեղովի
ցեղը Շուշանիկին ցեղն է, այն տառապող, առանձին մարդոց ցեղը, որ Թիֆ-
լիսի կորիզը կը կազմէ: Այստեղ Թիֆլիսը այլեւս այլարանութիւն-խորհրդ-
դանանը կը դառնայ մարդոց առանձին տեսակի մը, կենցաղաձեւը եւ բնա-
կավայրը այդ ազգային սահմանները շրջանցած մարդոց:

Տուեալ պատմութեան մէջ պերճախօս նախադասութիւն մը կայ, ուր
կ'ըսուի. «Թիֆլիսը վերջանում էր, միայն գետնափոր միկիտաններում էին
մնացել լրիւ թիֆլիսեան տարազով մարդիկ»:

Անշուշտ հարցը թիֆլիսեան տարազներուն մէջ չի կայանար: Ամբողջ
կենցաղ մը, մտայնութիւն մը, աշխարհ մըն է, որ փոխուող ժամանակներու
զոհը կ'երթայ՝ կեանքի պարտադրանքով: Հեղինակը պիտակից է այս կո-
րուստին, ժամանակի պահանջած սուղ գինին: Այդ պատճառով ալ աւելի
յստակ կը դառնան կարգ մը պատմութեանքներու ժամանակային նշումներու
զորապատճառները (օրինակ, «Ուղեցոյց Թիֆլիս քաղաքի. 1912 թուական»):
Փաստօրէն, Այվազեանի ուղեւորութիւնը թիֆլիսեան անցեալին, փողոցնե-
րուն, միկիտաններուն, բակերուն կամ բաղնիքներուն մէջ «չաւերժական»
Թիֆլիսը գտնուելու եւ բերելու կը ծառայէ, — ա՛յն Թիֆլիսը, որ այլեւս չկայ,
ինչպէս չկայ այլեւս «Նոսանկիւնի» դարբնոցը եւ հեղինակին մանկութեան
կապուած շատ մը տրիպտիկներ, թաղեր, սովորութիւններ...: Սակայն ինչ-
պէս «Նոսանկիւնի» Մկրտիչներէն անոնց լուսանկարը մնացած է միայն, այս
գրականութեան միջոցաւ մեզի կը հասնի մեր ժողովուրդի կեանքին ու պատ-
մութեան առնչուած սիրելի ու կենդանի քաղաք մը, որուն համար երախ-
տապարտ ենք Աղասի Այվազեանին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Լ. Մ Կ Բ 8 Զ Ե Ա Ն

ԳՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

ՀԱՄԱԿԱՐԳԸ

1.

Գրաքննութիւն բառն իսկ ինքնին ցոյց է տալիս, թէ ինչ է նշանակում: Իս նշանակում է պետական վերահսկողութիւն՝ զբօսեր, թերթեր, հանդէսներ եւ տպագիր այլ նիւթեր հրատարակելու, ինչպէս եւ ձայնասփիւռային ու հեռուստատեսայի հաղորդումներէ, թատերական, շարժանկարային, համերգային ներկայացումներէ, արուեստի ցուցահանդէսներէ եւ յարակից բնագաւառներէ նրկատմամբ: Այդ վերահսկողութեան նըպատակն է խափանել իշխանութեան տեսակէտից քաղաքականօրէն անցանկալի կարծիքներէ հրատարակային արտայայտութիւնը: Վերահսկողութիւնը իրագործող գրաքննական պաշտօնէութիւնը իր զեբը կատարում է հրատարակման ենթակայ նիւթերը կամ հանդիսութիւնները արգելելով, թոյլատրելով կամ փոփոխելով՝ նախապէս, նախազգուշական կարգով: Կամ էլ դրանք բռնագրաւելով, շարքից հանելով, պարտադրաբար փոփոխելով՝ հետագայում, ճնշողական կարգով:

Գրաքննութեան երեւոյթը ըստ հը-

նարաւորին լրիւ պատկերացնելու համար հարկաւոր է այն դիտել իր պատմական ու աշխարհադրական դրսեւորման շըրջանակում: Այսպէս, ժամանակի ընթացքում գրաքննութիւնը որոշ երկրներում, թուրքիլ ու նոյնիսկ վերացել է, իսկ այլ երկրներում, ընդհակառակն, ծայրայեղօրէն խտացել: Եւ գա պայմանաւորուած է այս կամ այն երկրի ընդհանուր հասարակական մակարդակով ու քաղաքական կացութեամբ:

Մեր օրերին գրաքննութիւնը իր առաւելագոյն խտութեամբ կիրառուած է խորհրդային ու յարակից երկրներում: Եւ դա հասկանալի է: Կեանքի բոլոր առպարէզներում հիմնականում ճնշողական լծակներէ վրայ յենուող իշխանութիւնը չի կարող հրատարակել գրաքննութեան նման մի ահարկու զէնքից: Եւ նա իր ծննդեան պահից սկսած չի հրատարակել ու մինչեւ հիմա էլ չի հրատարակում այդ՝ քաղաքակրթութեան տեսակէտից ժամանակադրէպ, բայց ամբողջատիրական տեսակէտից խիստ անհրաժեշտ զէնքից:

Թէեւ խորհրդային ու խորհրդայնանման երկրներում գրաքննութիւնը ո՛չ միայն գոյութիւն ունի, այլեւ օրբատորէ Քրուպաւաճում է, այդ մասին հիմնաւոր ուսումնասիրութիւններ չկան ո՛չ տրտատահմանում, ոչ էլ, ինքնին հասկանալի է, բուն խորհրդային երկրում: Նոյնիսկ շատ մարդիկ, որոնք անձնապէս ու օրը օրին շփուել են այդ գրաքննութեան հետ, դժուարանում են դա յստափորէն բնութագրել:

Պատճառն այն է, որ խորհրդային գրաքննութիւնը գործում եւ ներկայանում է ոչ թէ իր բուն անունով ու զէմբով, այլ՝ գոնազան գիմակների առկծպտուելով: «Գրաքննութիւն» բառն իսկ դոյութիւն յունի խորհրդային փաստաթղթերում: Այդ անունով հաստատութիւն չկայ: Իշխանաւորներէ ու նրանց կամակատարներէ առելով, գրաքննութիւն, այո՛, գոյութիւն է ունոցել ցարական Ռուսաստանում ու զարունակ-

ում է դրամատիքական երկրներում», իսկ խորհրդային երկրում այդպիսի բան չկա՛յ ու չի՛ կարող լինել:

Այնպէս որ, խորհրդային գրաքննութիւնը դադանիքների դադանիք է փաստաթղթային տառամով, թէեւ ազազակոյ իրականութիւն է բաց երկնքի տակ, ի տես ամէնքէ: Ահա թէ ինչու հաւանական հետազոտողները ուսումնասիրութեան ճիւղ չեն գտնում ու ձեռնաթափ են լինում, սահմանափակուելով հատուկեան ու տարանջատ հաստատումներով, գրանց հիման վրայ որոշակի եզրակացութիւններ յանգելու յոյսով:

Խորհրդային գրաքննութեան ինքնութիւնը արտասահմանում գիտականորէն պարզելու հարցերով մինչև հիմա զբաղուել են խորհրդային իրականութեան իրազեկ թէ՛ ուսման եւ թէ՛ օտարների, այս կամ այն շահով, վերլուծելով իրենց մատչելի մեծ ու փոքր նիւթերը: Եման հետազոտութիւնները հետեւանքով հրապարակուել են սակաւթիւ գրքեր ու յոդուածներ, կազմակերպուել դիտածողութիւններ, եւ այլն: Բայց մինչև հիմա արածը խիստ անբաւարար է համարում՝ գրաքննութեան անդրադարձող հեղինակների աչքում:

Գրաքննական մեքենայի ներքին կառուցուածքը ուսումնասիրելու համար որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում այսպէս ասած Վժժուկի արխիւը: Այդ արխիւը կուսակցական ու պետական փաստաթղթերի մի կոյտ է, որը Երկրորդ աշխարհամարտի (գերմանախորհրդային պատերազմի) ժամանակ Մոսկուայի քաղաքում ընկել է դերմանայիների ձեռքը, իսկ յետոյ էլ՝ տեղափոխուել ԱՄՆ: Արխիւում պտեւում են նաեւ գրաքննութեան մարզային վարչութեան փաստաթղթերն ու նիւթերը (տեղեկատուներ, հրահանգներ, ցանկեր, եւ այլն): Դա Արեւմուտքում գտնուող միակ բնագրային-փաստաթղթային հաւաքաքանոն է, որ թէեւ 50 տարուայ հնութիւն ունի, այդուհանդերձ, ուշագրաւ նիւթեր է պարունակում եւ համապատասխան եզրակացութիւններ յուշում:

Խորհրդային գրաքննութեան էութիւնը հասկանալուն օգնում են նաեւ

արեւելա-եւրոպական երկրների գրաքննութեանը վերաբերող տուեալները, հրատարակային արտայայտութիւնները, եւ այլն: Այսպէս, 1977ին արտատոհմանից Լեհաստան շփեղադարձաւ Կրակովի գրաքննիչ Տոմաշ Սոչիթեւսկին: Նոյն տարում, նրա դուրս հանած նիւթերի հիման վրայ, Լոնդոնում լոյս տեսաւ «Լեհական գրաքննութեան սու գիրքը» երկհատոր հրատարակութիւնը, ընդգրկելով եզակի նիւթեր ու փաստաթղթեր, այդ թւում՝ արգելքների ու յանձնարարականների լրիւ ցանկը, Նաեւ՝ երկրի մաքսային գլխաւոր վարչութեան «Տեղեկատու»ն, որի մէջ նշուում են Արեւմուտքում տպուող 488 անուն թերթեր ու հանդէսներ, ինչպէս եւ 23 հրատարակչութիւնների հրատարակութիւններ, որոնց մուտքը արգելուում է (բաւ մի քանի խմբերի՝ «խիստ հսկողութեամբ», «յատկապէս խիստ հսկողութեամբ», եւ այլն): Կազմած չկայ, որ այդ կարգի խորհրդային տեղեկատուները աւելի հաստատիր կարող են լինել, այլ ո՛չ թէ ընդհակառակն:

Տեղին է յիշել 1966ի Զեխուլովայիան, որտեղ անհամար մերկացումներ կատարուեցին գրաքննութեան վերաբերեալ, մինչև նրա պաշտօնական վերացումը, որը եւ լցրեց խորհրդային իշխանաւորների «Համբերութեան բաժակը», դառնալով «սոցիալիստական զօրքերի» ներխուժման եւ երկրի բռնագրաւման անմիջական պատճառներից մէկը: Դա մի անգամ եւս ցոյց տուեց, որ յիշեալ իշխանաւորները առաջին հերթին մտխոնում են ոչ այնքան ուրիշների բազմատեսակ նիւթական գէնքերից, որոնցից իրենք էլ աւելի քան շատ ունեն, որքան որ հասարակ ազատ խօսքից, տպագիր անձեռնտու նիւթերից, մի խօսքով՝ դիւրալոյծ ու անօգնական թղթից, որն այնպիսի մղձաւանջային մտահոգութիւն է պատճառում ամէնուրեք՝ երկրի ներսում, սահմանների վրայ ու դրսում:

Ի հարկէ, բազմութիւնների ուղղրւած բանաւոր ու, մանաւանդ՝ գրաւոր հրատարակային խօսքը իւրայայտուկ բնոյթ է կրում բոլոր հորեղանների տակ, ի տարբերութիւն նեղ ու մասնակի խօս-

քային հաղորդակցութեան: Ուստի՝ հընուց ի վեր իւրաքանչիւր երկրում, այս կամ այն չափով, պետական ու հոգեւոր իշխանութիւնները ուղղորութեամբ հետեւել են հրապարակային խօսքի ընթացքին, այն չափաւորելու կամ հունաւորւորելու գիտաւորութեամբ: Սակայն բուն իմաստով գրաքննութիւնը վերջին մի քանի դարերի ծնունդ է, երեւան զաւրով սպազրութեան գիւտին յաղորդող ժամանակաշրջանում:

Այդպէս լինելով հանդերձ, գրաքննութեան ակունքները, որքան յայտնի է, լինում են հռոմէական պատմութիւնից, ընդամին արդէ գրաքննութեան հետ ուղղակի եւ տրամաբանական կապ չունեցող հանդամանքների պայմաններում: Հայերէն «գրաքննութիւնը» համապատասխանում է միջազգայնորէն ընդունուած «ցենզուրային», որն իր հերթին ծագում է լատիներէն «ցենզերէն»՝ վաճառել, դատել բառից:

Հռոմի հանրապետութեան օրօք, մ. թ. ա. 5րդ դարից ի վեր, 5 տարին մէկ անգամ, այն էլ ամենաշատը մէկուկէս տարով, ընտրում էին երկու «ցենզորներ», որոնք միանարար կատարում էին որոշակի առաջադրանք: Սկզբում նրանք ստուգում էին քաղաքացիների ցուցակները, որոշում նրանց ունեցուածքի, եկամտի, հարկերի չափը, բոտ այնմ էլ ճշդում այս կամ այն դասին պատկանելը: Այդ պարտականութիւններին հետագայում աստիճանաբար աւելացան որիւնքը, — պետական ելեւմուտքի, պետական ունեցուածքի վաճառքի ու վարձակալութեան, հանրային շինութիւնների հսկողութիւնը, եւ այլն: Ու, մանաւանդ՝ բարձրի հսկողութիւնը, իբրեւ բարձրի դատաւորների գործ: Այդ ասպարէզում աչքի ընկան մի շարք ցենզորներ, դառնալով պատմական հանրոյայտ անձնաւորութիւններ: Մ. թ. ա. 22 թուին ցենզորական պաշտօնը ձուլւեց կայսերական իրաւասութիւններին, յատուկ քննի կրելով Օգոստոսի օրօք եւ յետոյ:

«Ցենզորներին» կիրառած «ցենզուրան» ընդգրկում էր հանրային բարձրի ընդհանուր հսկողութիւնը, այլ ոչ թէ,

ստենք, գրադում յատկապէս գրական էրկերով: Բայց եւ այնպէս, դա շօշափում էր եւ գրական ու հանդիսային մնադուաւոր, գրական կամ բացասական լծատուով, քանի որ հանրային հսկողութիւնը միայն ժխտական սկզբունքներով չէր առաջնորդում, այլ խաղում է նաեւ գրական դեր, նայած պայմաններին: Հսկողութիւնը բնորոշում է հսկողի ինքնութեամբ ու առաջադրանքներով, այլ ոչ թէ իր անուանական աւելայութեամբ, իբրեւ այդպիսին:

Այսպէս, Հռոմում բարձրի հսկողութիւնը նշանակում էր նաեւ օսանաւաճակել յունական թատերախաղերի ու խմբերի մուտքը, նրանց այսպէս ասած «քացութեան» պատճառով, «ետապնդել բեմերի վրայ որեւէ մէկի դէմ ուղղուած ծագրական երգերի ու ներկայացումների հեղինակներին ու կատարողներին: Այդպէս է, որ մ. թ. ա. 3րդ դարում աքսորի դատապարտուեց բանաստեղծ Կինթուս Նելիուսը: Ու թէեւ մինչեւ հիմա էլ լիովին պարզ չեն Օգոստոսի օրօք բանաստեղծ Պուբլիուս Օվիդիուս Նազոյի Տոմիս արտորուելու բուն պատճառները, կարելի է ենթադրել, որ նա էլ էր տուժել «իր լեզուի համար»: Այդ կարգի՝ այս կամ այն հաւաստիութեամբ ակնարկումներ են նշուել գրականութեան մէջ նաեւ այլ գրողների վերաբերելով:

Սակայն, ինչպէս որ արդէն մասնանշուեց, բուն գրաքննութիւնը սահմանուել է միջին դարերում, սպազրութեան գիւտից յետոյ՝ 1450 թ., այն էլ կաթոլիկ եկեղեցու ղեկավարութեան կողմից: 1479ին սկսուեց եկեղեցական գրաքննութիւնը, որը կատարելագործւեց աստիճանաբար, իստութեան իմաստով: 1501 թուի վերին կոնգակով Կերմանիայում, իսկ 1515ին էլ ամբողջ կաթոլիկ աշխարհում եպիսկոպոսներին իրաւունք տրուեց արգելելու անաստուածային ու հերձուածողական գրուածքները: Եկեղեցական գրաքննութիւնը 1529ին լրացուեց համընդհանուր աշխարհական գրաքննութեամբ, որի համաձայն՝ այնուհետեւ Հրատարակութիւնների վրայ պէտք է նշուէին սպազրիչների անունները, սպազրութեան վայրն ու, յետոյ

էլ, Հեղինակների անունները: Տպագրելուները պէտք է երդուէին, իսկ անընդունելի երկերի ներմուծումը՝ արգելուէր: Այսպիսով, աշխարհական իշխանները ընդօրինակեցին եկեղեցական իշխանների սահմանած սովորութիւնը: Դա դեռ նախնական գրաքննութեան փուլն էր:

1959-64 թուականներին Հրատարակ Հանուեց նշանաւոր «Ինդիքսը» («Արդելուած գրքերի ցանկը»), իբրև յետնեալ գրաքննութիւն, նախնական գրաքննութեան մարդից այս կամ այն պատճառով անցած, բայց եւ այնպէս անցանկալի հրատարակութիւնների համար, որոնք կարիքի էր կարգաւ միայն եկեղեցական վերին թոյլտուութեամբ: «Ինդիքս» կարգը վերացուեց 1965-67 թուականներին, մնալով իբրև պատմական հասկացութիւն, որով ընտրուած է մի քանի գաբերի կաթոլիկական իրականութիւնը:

Գրաքննութեան սկզբունքը, ի հարկէ, առաջին հերթին իւրացրին բացարձակատիրական Հակումներ ունեցող թաղաւորներն ու իշխանները: Գրաքննութիւնն աւելի խստացաւ մանաւանդ պարբերական մամուլ երեւան գաղտնի յետոյ: Նորն ժամանակ էլ ծագեց զժողովութիւնն ու պայքարը տիրող գրաքննութեան դէմ՝ եւրոպական այլեւայլ երկրներում, զաղաքներում աստիճանաբար հզօրացող որով խուճերի ներկայացուցիչների կողմից:

Թէև տակաւին 17րդ դարում, Անգլիայում, Ջոն Միլտոնը պահանջում էր «մամուլի անսահմանափակ ազատութիւն», գրաքննական կարգը մինչև 19րդ դարի սկիզբը ընդհանուր առմամբ անխախտ մնաց: Իրաւական տեսակէտից նոյնիսկ առուելութիւն էր համարուած նախնական գրաքննութիւնը, քանի որ որեւէ գրուածք թոյլատրուելուց յետոյ՝ հեղինակը, հրատարակիչը եւ տպագրիչը ազատ էին մնում հետապնդումից: Այդուհանդերձ, ժամանակը գործում էր գրաքննութիւնը լիովին վերացնելու եւ պետական հսկողութիւնը այլ հունի մէջ դրնելու օգտին, տարբեր երկրներում մոլորողապետութիւն հաստատուելուն զուգընթաց:

Այդ կապակցութեամբ արժէ յիշել, որ Անգլիայում գրքերի նկատմամբ գրաքննութիւնը վերացուել է դեռևս 1964 թուին, իսկ Թատրոնի նկատմամբ՝ 1968-ին: Ֆրանսիայում գրաքննութիւնը վերացաւ 1769ին, յեղափոխութեան հետեւանքով, բայց նապուէտն Բոնապարտը մտցրեց մամուլի հսկողութեան մի կարգ, որը շատ էր նման գրաքննութեանը: Այդ երկրում գրաքննութիւնը վերացաւ, վերջնականապէս, 1871ին: Գերմանիայում դա վերացուեց 1848ին, փոխարինելով այլ կարգի եւ միւս երկրներում էւս արդէն ընդունուած որոշակի՝ անուղղակի սահմանափակումներով: 1919ին լիովին վերացուեց, մինչև. Նացիոնալ-սոցիալիստական իշխանութեան կողմից վերահաստատուելը, այնուհետև ապօրինի համարուելով Դաշնակցային Կերմանիայի Հիմնական Օրէնքով:

Մեր օրերին գրաքննութիւնը մասլ մենաներս է վայելում միայն խորհրդային տեսակի բանասիրական երկրներում, մասամբ էլ՝ այլ կարգի մեծատիրական գոտիներում: Այնպէս որ, ժամանակակից գրաքննութիւնը նոյնանում է առաստանեան ու յարակից իրականութիւնների հետ, ընդամենը այնպիսի կացութիւնից ու բարքերից, թաղաբարկթական ըստ էութեան ցածր մակարդակից:

«Յենգ» եւ «Եղնգուրա» բառերի կապակցութեամբ, տեղին է նշել, որ առաջինը գործածուած է նաև «Եղնգային ընտրական իրաւունքի» հետ կապուած հասկացութիւնների շրջանակում, ինչ որ նոյնպէս իր ակունքներն ունի հռոմէական պատմութեան մէջ: Իսկ երկրորդը՝ ընդունուած է Յիւրդի հոգեվերլուծական տեսութեան համակարգում, մարդու ենթայիտակցութիւնից պիտակցութիւն անցնող տուեալների մարման ու չափաւորման իմաստով, «ինքնացնողորի»՝ խղճի միջոցով: Բայց սրանք՝ յաւելեալ կարգով, ի միջի այլոց, իբրև տեղեկութիւն:

Տուեալ դէպքում խօսքը բացառապէս վերաբերում է իսկական իմաստով գրաքննութեանը, նրա «դասական» օջախներին, ի պէս ալ օջախներից մեծա-

2.

Ռուսաստանում բուն իմաստով գրքաքննութեան սկիզբը դրեց Պետրոս Առաջինը, սահմանելով, որ մանաւանդ ուկրաինական երկու ազգայնականները Ռոսիայի Սանկտ-Պետերբուրգի նոստրիալի կողմից հաստատուած Վախուշտի նախնական հսկողութեան: Տպագրութեան ստորագրական ծաւալման հետ միասին՝ Համապատասխանաբար շատցան հսկողական միջոցառումները: Գրաքննական առաջին կանոնադրութիւնը հռչակուեց 1804 թուին: Հոգևոր գրաքննութիւնը, որը ենթակայ չէր աշխարհայինին, վերակառուցուեց 1808ին: Ընդհանուր գրաքննութիւնը նոր կանոնադրութեան ստացուեց 1828ին, որով մին ենթարկուեց էր ժողովրդական կրթութեան նախարարութեանը: Պայմանները նախ բաւական նեղ էին, ոչ համատարած: Իսկ 1865ին տաս մամուլից՝ 160 էջից աւելի ծաւալ ունեցող բոլոր ինքնուրոյն երկերը, բոլոր թարգմանութիւններն ու մայրաքաղաքի բոլոր պարբերականները — եթէ գրանք Հիմնականում թոյլատրուած էին ներքին գործերի նախարարութեան կողմից — ազատ յայտարարուեցին նախնական գրաքննութիւնից:

1905-06 թուականներին, յեղափոխական խմորումների հետեւանքով, Ռուսաստանում վերացուեց ամէն տեսակի նախնական գրաքննութիւն: Եւ առհասարակ, գրաքննական միջոցառումներն ու գրաքննական հաստատութիւնները կրկնում զազանիք չէին ոչ սբի համար: 1862ից ի վեր՝ տուժած երկերի ցանկերն ու սահմանուած միջոցառումները պարբերաբար Հրատարակուած էին, ի դիտութիւն ամէնքի:

Այդ կապակցութեամբ, արժէ, ի դէպ, նշել հետեւեալը: Միապետական Ռուսաստանում գրաքննութեան մասին ո՛չ միայն կարելի էր խօսել ու նրանից դժգոհել, այլև՝ այդ առթիւ, նոյն գրաքննութեան թոյլատրութեամբ, հանգամանակից ուսումնասիրութիւններ Հրատարակել: Այսպէս, «Քրոնիկաւո-Եփրան» նշանաւոր հանրագիտական բաւարանի 1903ին տպուած 74րդ հատորում

գրաքննիչ» եւ «գրաքննութիւն» բառաբանումներին նուիրուած է 32 խոսքեր սիւնակ: Իսկ նոյն տարում տպուած Դերգ հատորում, 16 սիւնակներով, ամենայն մանրամասնութեամբ ներկայացուած է անցած տասնամեակների գրաքննական տոյժերի ցանկը: Աւելին՝ մատենագիտական այլևայլ ցանկերից երեսում է, որ ժամանակին մեծաքանակ առանձին հիմնաւոր ուսումնասիրութիւններ են Հրատարակուել հենց տիրոջ գրաքննութեան վերաբերեալ:

Այնպէս որ, միապետական իշխանութիւնը վերանալուց յետոյ՝ պատմական հետազոտողները իրենց արտադրութեան տակ արդէն ունէին պատշաճ ուղի չափով տպագիր նիւթեր, այդ նոյն ժամանակաշրջանը պատկերացնելու եւ նրա ուսումնասիրութիւնը աւելի խորացնելու համար: Իսկ ահա, սահնք, նոյն երկրի միակուսակցական իշխանութիւնը երբեք վերանալուց չտայ, Հրատարակում զրեթէ ոչ մի տպագիր նիւթ չի դանուելու՝ խորհրդային ժամանակաշրջանը եւս առարկայօրէն հետազոտելու օգտին: Պէտք է ամէն ինչ գերօրոյց սկսել, փորփրելով բուն զագանի փաստաթղթային նիւթերը, եթէ գրանք պատումամբ պահպանուելու լինեն:

1920ական թուերի սկզբում տակուին կարելի էր խորհրդային հրատարակութիւններից որոշ անգեղութիւններ կորզել թէ՛ առհասարակ գրաքննութեան եւ թէ՛ հենց բուն խորհրդային գրաքննութեան վերաբերեալ: Օրինակ, նախախորհրդային «Յրալուստ» հանրագիտական բաւարանի «Վերակառուցում» խորհրդային շարունակութեան մէջ (հատոր 45, մասն 3) եօթը սիւնակ է նուիրուած գրաքննութեանը եւ ընդամեն յատուկ համառօտ բաժին է յատկացուած «խորհրդային օրէնդրութեանը»: Ու երբի դա միակ տպագիր յիշատակում է, որի վրայ էլ յիշուած են հետագայ բոլոր յօդուածագիրները՝ այստեղ-այնտեղ: Խորհրդային գրաքննութիւնը չի արտացոլում եւ ոչ մի աչքի ընկնող գրքային հրատարակութեան մէջ:

Ի՞նչ ինչպիսի դողդոջուն գլուխաւորութեամբ է յիշատակուած գրաքննութեամբ է յիշատակուած գրաքննութեամբ

թիւն» բառը խորհրդային հրատարակութիւններում, կարելի է տեսնել «Խորհրդրդային Մեծ Հանրապետարան»-ի օրինակով: Այդ հանրապետարանի 2րդ հրատարակութեան 46րդ հատորում (1957 թ.) միայն երկուսուկէս սիւնով է յատկացուել գրաքննութեանը, մի կողմ դրած այդ սիւնակների բովանդակութիւնը: Երրորդ հրատարակութեան 28րդ հատորում (1978 թ.)՝ 4 սիւնակ, նոյնքան սղորմելի բովանդակութեամբ: Հայաստանեան Հանրապետարանի 3րդ հատորում միայն ութ տող է «նուիրուել» գրաքննութեանը, որից ընթերցողը իբր թէ պէտք է գիտնորէր մեռք բերի այդպիսի մի էական ու ընդարձակ բնագաւառի վերաբերեալ: Բայց թերևս, թող ասուի իբրև միեմարանք, լաւն էլ դա է: Քանզի եթէ հրատարակող չէ ճշմարտութիւն հաղորդելը, թէն իմաստ ունի սողերի շատութիւնը, եթէ այդ սողերը պարտադրաբար անմտութիւններով պիտի լցուեն:

Յարական գրաքննութիւնից, ի հարկէ, սուտում էին թէ՛ ուսու եւ թէ՛ ուսուս Հասարակութիւնները, մ'նուանող վերլիններս: Հայ Հասարակութեանը հասցուած մեասնորի մասին, օրինակ, անհամար ուղղակի եւ անուղղակի վկայութիւններ կան: Բաւական է յիշել թէ՛ կուզ է՝ Ակնուհու կովկասեան թղթակցութիւնները «Իրօջալի»-ում, հայ գրողների ու շեղինակների հետադայում հրատարակուած նամակները, եւ այլն:

Տարիներ առաջ Երեւանում լոյս տեսաւ Սալոմէ Արէշեանի յատուկ մենագրութիւնը՝ ցարական ժամանակաշրջանի գրաքննութեան եւ հայ մշակութի կրած դժուարութիւնների մասին: Այդ իմաստով պերճախօս է, անշուշտ, արխիւային իւրաքանչիւր մասնակի հրատարակում, հայաստանեան օրհէ պարբերականում կամ գրքերում, որոնց կարելի է հանդիպել ժամանակ առ ժամանակ:

Բայց ամբողջ հրկրում, հասարակական ընդհանուր զարթօնքի պայմաններում, պայքար էր ընթանում եւ գրաքննութեան դէմ, այլեւայլ ճանապարհներով: Թէև արժէ նշել, որ երբ մարդ աչքի է անցկացնում ցարական ժամանակ

լոյս տեսած հանրագիտարաններն, ու հանրամատչելի հրատարակութիւնները, մի պահ այն տպաւորութիւնն է ստացում, թէ այն ժամանակ, առհասարակ, գրաքննութիւն գոյութիւն չի ունեցել, երբ այդ օրերի կացութիւնը համեմատում է ներկայ կացութեան հետ:

Գրաքննութիւնը Ռուսաստանում արմատապէս վերացուեց 1917ի փետրուարեան յեղափոխութեան կողմից, ախարհի միւս բոլոր ժողովրդավար երկրների նման: Սակայն հոկտեմբերեան յենիւհան յեղաշրջումը չեղեալ համարեց այդ վերացումը ու վերստին կեանքի կուեց գրաքննութիւնը:

1917ի Նոյեմբերի 8ին, յեղաշրջման յաջորդ օրը, բուլշեփեան իշխանութիւնը արգելեց մի շարք թերթեր, այդ թրում ազատական նշանաւոր «Թեյր» (Խօսքը): 14ին հրապարակուեց «Մամուլի մասին ղեկընտը» (հրամանագիրը), որով պաշտօնապէս սահմանուած էր խցատացում տեսակի գրաքննութիւն: 30ին կառավարութիւնը ստեղծեց գրաքննական գերադոյն մարմին, որը, իբրև «Մամուլի յեղափոխական ատեան», 1918ի սկզբին անցաւ իր գործին ու Օդեսոսին արգելեց ամբողջ ընդդիմադիր մամուլը: 1919ի սկզբին մոյցուեց նախնական գրաքննութեան ընդհանուր կարգ, որը յանձնարարուեց պետական հրատարակչութիւններին:

Տեղին է յիշել, որ իշխանութեան կողմից պարտադրուող գրաքննութիւնը սկզբում համարում էր «ժամանակաւոր միջոցառում», որն իբր թէ երկար չպիտի տևէր: Բայց ահա այդ «ժամանակաւորը» տեսում է մինչև հիմա, հասնելով ամենարտառոց չափերի:

1922 թ. Յունիսի Յին ստեղծուեց «Գրականութեան եւ հրատարակչութիւնների գործերի ղյխաւոր վարչութիւնը», որը մինչև հիմա էլ յիշատակում է միայն իր կարճ «Գլուխտ» ձևով եւ որը իրականում բուն գրաքննութեան կեղծանունն է: Դա 1966ից ի վեր կոչում է «Մամուլում պետական զաղտնիքները պահպանելու գլխաւոր վարչութիւն»: «Գլուխտ» ստեղծուելուց մէկ տարի անց՝

1922ին Սովետական Կոմունիստական Կուսակցության կողմից «Մամուլում պետական զաղտնիքները պահպանելու գլխաւոր վարչութիւն»:

խաւոր կոմիտէն» («Գլուսեպերտկոմ»), թատերական ու հանդիսային բնագաւառի համար:

Դրանից առաջ, 1921ի սկզբին, «Մաւուլը եւ յեղափոխութիւնը» հանդէսի առաջին համարում տպուած «Կրքի ազատութիւնը եւ յեղափոխութիւնը» յօդուածում, Ռուսաստանի լուսաւորութեան ժողովում Ա. Վ. Լուսնուարովին այսպէս էր պատճառաբանում գրաքննութեան ճանհրահարութիւնը: «Արուեստի բոլոր բնագաւառներին, այդ բաւում եւ գրքի համար, — գրում էր նա, — երկրորդ միատեսակ ելայմանը պայքարն ինքն է, հետեւապէս եւ ազատութիւնը ու յատկապէս խօսքի ազատութիւնը բայտաբնու անկարելիութիւնը: Խօսքը գեմ է եւ ճիշդ այնպէս՝ ինչպէս որ յեղափոխական իշխանութիւնը չի կարող բայտարել արքանապետի ու գնդացիների գոյութիւնը ամէն մի պատահական մարդու հետ, քանզի նա յարաւ շարակամ քննարկի, քանզի նա յարաւ շարակամ քննարկի տպագիր քարազոյրեան ազատութիւն: Սա դեռ ասում էր «ազատակամ» համարու ունեցող Լուսնուարովու բերում: Դրանից կարելի է պատկերացնել, թէ այնքան բազմաթիւ մոլեռանդներին ինչ սկզբունքով էին առաջնորդում:

1920ական թուերին խորհրդային գրաքննութիւնը, սկսած է ասել, տակաւին համեմատաբար մեղմ էր, այլեւայլ պատճառներով: Նոյնիսկ մասամբ պահուում էր հրատարակչութեան բուրգրունքը: Օրինակ, 1926-28 թուականներին տպուում էր «Եւրոպայի մեղմ տեղեկատու», հրատարակում էին թույլտրուած կամ արգելուած թատերախաղերի, կինոնկարների ցանկերը, լրջա էին տեսնում գրախօսականներ, որտեղ բացատրում էր, թէ ինչ էր համար է արգելում:

«Պաղպայանկային գլխաւոր կոմիտէն», մինչև 1928 թուին «Արուեստի գլխաւոր վարչութիւն» ստեղծուելու, «Գլուսեպերտկոմ» նման ենթարկում էր գերտեսչական մի այլ վարչութեան՝ Լուսաւորութեան ժողովման ցանցում: Այնուհետեւ կոմիտէն ենթարկուեց նաեւ

նորտեսչի վարչութեանը, շարունակելով հին ենթակայութիւնը, այսինքն՝ միաժամանակ ենթակայ էր երկու վերագաւառի: Դա գրաքննութեան ապակենտրոնացման աւաթին քայլն էր ոչ թէ յանուն իսկական ապակենտրոնացման, այլ՝ պետական վերահսկողութեան դերը ուժեղացնելու օգտին: Վերահսկողութիւնը կիրառում էր աւելի ցածր՝ նահանգային ու դուռապահան մակարդակով, համապատասխան մարմինների միջոցով, միւս էլ՝ ժողովրդական կրթութեան բաժնիներին աւելի:

Յօսկան թուերին, ստալինեան նախաձեռնութեամբ, անհամեմատ խտացաւ պետական վերահսկողութիւնը կեանքի բոլոր բնագաւառներում: Անհամեմատ խտացաւ եւ գրաքննութիւնը: Ազգայնահրատարակչութիւնը՝ իր վերջին մասցրդներով: Գրաքննութեան գծով վերջին հրատարակութիւնները վերաբերում են 1931 եւ 1935 թուականներին («Գործող օրէնքներ»-ի մասնակի մասին) եւ «Նարմալկորա-լուսնակարչական արդիւնքներ»-ի (Այնուհետեւ տիրեց կատարեալ հրատարակչին լուսթիւն):

Եւ, այդպիսով, մօտ երեք տասնամեակներին ընթացում, խորհրդային երկրում գրաքննութեան համակարգը մնաց անփոփոխ, իր «Գլուսեպերտկոմ», եւ «Գլուսեպերտկոմ»-ով, կրկնելով ցարական գրաքննութեան կազմակերպական ձեւերը:

Սակայն, հնուական թուերի վերջին եւ հնուական թուերի սկզբում, այդ համակարգի կազմակերպական կառուցուածքը լուրջ փոփոխութիւնների ենթարկուեց, որոշակի պատճառներով, «Գլուսեպերտկոմ»-ի անջատուեց ռազմական գրականութիւնը, Պաղպայանկային կոմիտէից՝ շարժանը կարային ու հետուստատեսութեան գրաքննութիւնը: Ստեղծուեցին հիւլէական ու տիեզերական գրաքննութիւններ:

Ներկայումս խորհրդային գրաքննութիւնը ներկայացնում է հետեւեալ պատկերը, ըստ իր ենթաբնագաւառների՝

1) «Գլուսեպերտկոմ» (1966ի վերանուանութեամբ) երկրի ամբողջ տպագիր արտադրանքի վերահսկողութիւնը իրազորածող գլխաւոր կազմակերպութիւնն է: Նա

ուևի տեղական բաժինների ճիշդագործում ցանց, ընդհուպ մինչև շրջանները: Ըստ որոշ տուևայների, գրաքննիչների թիւը Հասնում է մօտ 70 Հազար մարդու: Այդ վարչութիւնն է տնօրինում գրաքննական ծառայութեան ընդհանուր գեկաւարութիւնը, իր «ցանկերով», ներքին գործածութեան յատուկ տեղեկատուներով ու Հրամաններով՝ գրաքննիչների ու գաղափարախօսական պատասխանատու աշխատողների Համար:

Վարչութիւնն անմիջապէս ենթակայ է կուսակցութեան կենտրոնի քարոզչութեան գծով քարտուղարին եւ Քարոզչութեան բաժնին: Դա սերտօրէն կապուած է եւ Պետական Անվտանգութեան Գոմխի՝ գաղտնի աստիկանութեան հետ: Վարչութեան պետի տեղակալներէց մէկը ի պաշտօնէ անվտանգութեան պօրաւար է: Լրագրական ու դրժա-Հանդէսային գրաքննիչների աշխատանքը տարբեր ձևով է դասաւորուած: Աւաջիւնները սովորաբար նստում են տպարանում ու ամբողջ ժամանակ կարգում շարուած սիւները, մինչև թիւթի լրիւ տպուելը: Մինչդեռ գրքային խոշոր Հրատարակչութիւններն ունեն իրենց սեփական գրքաքննիչը, որը նոյնպէս կարող է որոշակի թուով Հանդէսներ եւ գրաքննութեան ենթակայ մնացալ ամբողջ տպագիր արտադրանքը (աւարտաճառերի դրոյթներ, այցեստոներ, եւայլն):

2) «Ուղղացանկի վերահսկողութեան զխաւոր վարչութիւնը» գտնուած է Մըշախութի նախարարութեան ցանցում, նրա տնօրինութեան տակ են գտնուած թատրոնները, կրկէսները, Համերգները, ձայնակաւառակները, երաժշտական այն երկերը, որոնք սահմանուած են Հըրպարակային կատարման Համար, գեղարուեստական արտադրանքի բոլոր տեսակները: Վարչութիւնն ունի տեղական բաժանմունքների ու տեսուչների լայն ցանց:

Վարչութեան իրաւասութիւնը չի սահմանափակուած սոսկ թուլատրելով կամ արգելելով, այլ տարածուած է վերահսկողական դերերի վրայ: Ուստի՝ նրա ներկայացուցիչները պարտաւոր են ներկայ գտնուել ամէն տեսակ ներկայ-

ցումների ու Հանդէսների՝ թէ՛ մայրաքաղաքներում եւ թէ՛ ծայրագաւառներում:

3) Եարժանկարային գրաքննութիւնը աչքի է ընկնում առաւելագոյն կենտրոնացուածութեամբ: Երկրում արտագրուող բացարձակապէս բոլոր կինոնրկարները գրաքննուած են Մոսկուայում: Գրաքննութեան Հիմնական փաստաթուղթը Հիտլարուական վկայականն է, որն ուղեկցում է կինոնկարին՝ նրա պատասխանի կետերի ամբողջ ճանապարհին, պատճէններ վերցուելուց մինչև կինոթատրոններում ցուցադրուելը:

Եարժանկարային խաղացանկի վերահսկողութեան բաժինը վարչակազմօրէն ենթակայ է ՈՍՀՄ Պետկինոյի «կինոֆիկացման ու կինոպրակտիկ» Գլխաւոր Վարչութեանը եւ ունի իր տեղական ներկայացուցիչները երկրում:

4) Հեռուստատեսային ու ձայնասփիւռային գրաքննութիւնը գտնուած է Համապատասխան նոյնանուն գերատեսչութեան ենթակայութեան տակ, Համամիութինական ու Հանրապետական մակարդակով: Այդ ասպարէզի գրաքննութիւնն էլ իր առանձնապատկութիւններն ունի, կազմակերպական ձեւերը, Համապատասխան մանրամասնութիւններով:

5) 1966ին՝ «Գլաւխոշից անջատուած ռազմական գրաքննութիւնը» գտնուած է ՈՍՀՄ պաշտպանութեան նախարարութեան զխաւոր սպայակոյտի կառայի մէջ, «Հետախուզական զխաւոր վարչութեան» կողքին: Այդ գրաքննութիւնը լիովին վերահսկում է, պօրքերի շրջանակում, Հրատարակչական ու Հանդիսային դործունէութիւնը (զինուորական թատրոններ, կինոնկարների ցուցադրում, երգերի կատարում, զինուորական նուագախմբերի ու Համայնների խաղացանկ):

Ռազմական գրաքննութեան գործունէութեան միւս կողմը կրում է միջգերտեսչական բնոյթ: Լրագրերի ու Հանդէսների յօդուածները, գրքերը, ռազմական ընդաւառին վերաբերող կինոնկարները, ձայնասփիւռ-Հեռուստատեսային արտադրանքը, ներկայացու-

ները, եւ այլն (ներառեալ քաղաքացիական ու գերմա-խորհրդային պատերազմների պատմութիւնը) ենթակայ են բանակի նախնական գրաքննութիւնը: Առանց ազգական գրաքննութեան կնիքի՝ ոչ մի երկ չի ստանայ «Փրայւիտ»ի կամ պերատեսչական գրաքննութեան թուլտրութիւնը:

6) Ի յաւելումն արգէն ատեւծի, յիշենք նաեւ, որ Հիւլէական գրաքննութիւնը գտնուած է կենտրոնական կառավարութեան տրոնթեր «Հիւլէական էներգիայի կոմիտէի» տնօրինութեան ներքոյ: Իսկ տիեզերական գրաքննութիւնը մտցուած է Գիտութիւնների ակադեմիայի Տիեզերական տարածութեան Հետազոտութեան եւ օդապարծման Յանձնաժողովի Համակարգի մէջ:

Գրաքննական եօթը մարմինների առկայութիւնը վկայում է կազմակերպական որոշակի ապակենտրոնացման մասին: Դա Հեշտութեամբ կարելի է բացատրել նրանով, որ վերջին աւելի քան 25 տարում արգելեալ տեղեկութիւնների թիւը դնալով աւելանում է եւ ոչ մի անհատ գրաքննիչի վիճակի չէ ընդգրկելու ընտր ընտրանքների գիտելիքները: Բացի այդ, գրաքննութիւնն, իբրեւ այդպիսին, աւելի է մօտեցել իր անմիջական գերատեսչական ապարատին, Հետեւապէս աւելի է Հեշտացել վիճելի ընթացիկ հարցերը, առանց ազմուկի ու վերին աստիճաններ հասցնելու, տեղւոյն վրայ լուծելու հնարաւորութիւնը: Եւ, վերջապէս, իր Համապատասխան պերատեսչութեան բաղկացուցիչ մաս կազմելով, գրաքննութիւնը մի տեսակ լուծուել է, այլեւ չի երեւում կողմնակի դիտողին: Ահա թէ ինչու շատերը նոյնիսկ տարակուսում են, թէ խորհրդային երկրում իսկապէս գրաքննութիւն կա՞յ, Ահա եւ այդ ճանապարհով է գրաքննութիւնը նպատում զանազան վարչական անունների սակ ու թաքուն անկիւններում:

Ի հարկէ, գրաքննիչներն էլ մարդիկ են, միւս պաշտօնեաների նման: Իւնեն

իրենց որոշակի պարտականութիւններն ու ստալադրանքները: Նաեւ՝ սեփական նկատառումները: Նրանք եւս կարող են փոխադարձ համաձայնութեան գալ ու զիջումներ անել: Բայց՝ միայն որո՞շ շքանակում: Ահա թէ ինչու նոյնիսկ խորհրդային երկրում անկարելի չեն նաեւ իր տեսակի «ընկերական» ու «տեսիւրի» փոխհամայնութիւնները, որոնք մասամբ մեղմացում են կենտրոնական հրահանգների կարծր կոշտութիւնը:

Մասնապիսական Հետազոտութիւնների Համաձայն, նկատելի է, որ վերջին տասնամեակների ընթացքում գրաքննական իրաւասութիւնների մի մասը փոխանցուել է խմբագիրներին, աւելացնելով նաեւ նրանց պատասխանատուութիւնը: Բայց բուն գրաքննութիւնը մնում է իր դահլի վրայ, իբրեւ վերին «իրաւարար» ու վճռական դատարար: «Մեւ աշխատանքը» թողնուած է խմբագիրներին, իսկ վերահսկողական զաւազանը վերապահուում գրաքննութեանը, որն իր հերթին բանակալ իշխանութեան Հարազատ Երեսնիչն է, չփացած զաւակը, ապահովութեան գրաւակները:

